

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՍՈՒԹՅԱՆ ՍԿՋԱՆԱԴՂՔՈՒՐՆԵՐ

Բ

ՆԱՅՈՑ «ՎԱՐՔ ՍՐԲՈՅ» - Ի  
ՎՐԱՅԱԿԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ



Ս. ԷԶՍԻԱՇԻՆ - 2008

424



ՀՐԱՄԱՆԱԲ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ  
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

По благословению

Его Святейшества ГАРЕГИНА II

Верховного Патриарха и  
Католикоса Всех Армян



ПЕРВОИСТОЧНИКИ ПО ИСТОРИИ АРМЯНСКОЙ ЦЕРКВИ

II

ГРУЗИНСКАЯ РЕДАКЦИЯ  
АРМЯНСКОГО „ЖИТИЯ СВЯТЫХ”

Перевод с древнегрузинского  
и исследование  
ПАРУЙРА М. МУРАДЯНА

ИЗДАТЕЛЬСТВО ПЕРВОПРЕСТОЛЬНОГО СВЯТОГО ЭЧМИАДЗИНА  
СВ. ЭЧМИАДЗИН – 2008

9(47.925  
7-28

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԿՁԲՆԱԴԲՅՈՒՐՆԵՐ

Բ

ՀԱՅՈՑ «ՎԱՐՔ ՍՐԲՈՑ» -ի  
ՎՐԱՑԱԿԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Թարգմանությունը շին վրածերենից  
և ուսումնասիրությունը  
ՊԱՐՈՒՅՐ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ

4025

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
Ս. ԷԶՄԻԱԾԻՆ - 2008



Հ- 282 Հայոց «Վարք սրբոց»-ի վրացական խմբագրությունը: Թարգմանությունը հին վրացերենից և ուսումնասիրությունը Պարույր Մ. Մուրադյանի: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: - Ս. Էջմիածին, 2008, 120 էջ:

Գրքում ամփոփված են վաղմիջնադարյան հայոց «Վարք սրբոցի» այն հուշարձանները, որոնք Է-Ը դարերում թարգմանվել են վրացերեն և ավանդված են Աթոսի Իվերոն վանքում պահպանված ԺԱ դարի առաջին կեսի նուսխուրի գրչության ձեռագրում: Նրանց նշանակալի մասը ավանդված է նաև բնագրի լեզվով, սակայն շատ հաճախ տարբեր խմբագրությամբ, իսկ երկուսի դեպքում՝ հայերենը դեռ երևան չի բերված:

Թարգմանաբար հրատարակվող հուշարձանները, բացի ինքնուրույն կարևորությունից, առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում վաղ միջնադարյան պատմիչների, մանավանդ Մովսես Խորենացու, երկերի բնագրական քննության համար:

ԳՄԴ 86.37

ՏՊԱԳՐՈՒՄ Է ՃԵԿԵՆԱՍՏՈՅԱԲ

ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ

ՎԱՉԵ ԵՎ ԹԱՄԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆՆԵՐԻ

ISBN 978-99930-75-69-1 © Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2008 թ.

## ՀԱՅՈՑ «ՎԱՐՔ ՍՐԲՈՑԻ» ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Սույն գրքում ներկայացվող վարքագրական-վկայաբանական հուշարձանների վրացերեն տեքստերը պահպանվել են XI դարի առաջին կիսով թվագրվող նուսխուրի (բոլորգիր) գրչության եզակի մի ձեռագրում: Նրա նկարագրության անդրանիկ փորձ կատարել է Աթոսի Իվերոն մայրավանք այցելած պրոֆ. Ա. Յագարելին<sup>1</sup>, սակայն բովանդակած նյութերի գիտական ընդգրկման ու նշանակության մասին խոսք չի ասել: Հարկավ մաս Ա. Յագարելու նկարագրության թեկադրանքով պիտի բորբոքված լինի նրա երբեմնի ուսանող պրոֆ. Ն. Մառի հետաքրքրությունը Աթոսի այդ հավաքածոյի, մասնավորապես մեզ զբաղեցնող նյութերն ունեցող գրչագրի հանդեպ<sup>2</sup>: Հայ-վրացական բանասիրության հարցերով նախանձախնդիր Ն. Մառը նկատեց ձեռագրի եզակիությունը և հանգամանորեն նկարագրեց նրանում եղած 61 (62) ինքնակա միավորները, քանիցս ընդգծելով, որ ինքը մտադիր է հայ-վրացական մատենագրական հարաբերություններին վերաբերող հուշարձաններին անդրադառնալու առանձին հետազոտությամբ<sup>3</sup>:

Անվանի գիտնականը, ցավոք, իր նախնական կռահումները ուսումնասիրության վերածելու ժամանակ չգտավ: Պատճառներից մեկը, թերևս պրոֆ. Ա. Խախանաշվիլու ձեռնարկած հապճեպ և առանց մասնագիտական քննության իրագործած հրապարակումն էր<sup>4</sup>: Նա 1902 թ. եղել է Աթոսում, տեսել ձեռագիրը, սակայն ընդօրինակությունը անձամբ չի կատարել, ուստի նրա վրայից տպագրություն են փոխանցվել ոչ քիչ վրիպյալ ընթերցումներ, իսկ բնագրերի հայագիտական կարևորությունը ըստ էության չի գիտակցվել, թեև Ն. Մառի առանձին ասույթներում դրա բանալին կռահված էր, ուստի պիտի համաձայնել այդ հրատարակությանը տված պրոֆ. Ի Աբուլաձեի վերապահ գնահատությանը<sup>5</sup>:

<sup>1</sup> *А. А. Цагарели*, Сведения о памятниках грузинской письменности, т. I, вып. I, СПб., 1886.

<sup>2</sup> *Н. Я. Марр*, Из поездки на Афон, ЖМНП, 1899, № 3 (առանձնատիպ): Նույնի՝ Агиографические материалы по грузинским рукописям Ивера, ч. I, Описание пяти пергаментных рукописей, СПб., 1901 (ի մասնավորի՝ էջ 47-72):

<sup>3</sup> *Н. Я. Марр*, Агиографич. материалы... стр. 2, 47.

<sup>4</sup> «Материалы по грузинской агиологии по рукописям X в.», с предисловием издал А. Хаханов, М., 1910.

<sup>5</sup> *Օպոբ Եւրթաւելո*, մարտցեղոբա Պշմանոյոսի, օ. օքլաձոսի ցամոցքոբ, տօ., 1938, ցք. 04. Հմնտ. *Օլոս օքլաձոք*, յարտլուլո Ըա Տօմքուրո Լուդքրաճքուրլուլո յրտոյերտօբա IX-X ՆՆ-Յի, ցամոյկելլեւա Ըա Ելլեկտի, տօ., 1944, ցք. 023-024.

Ա. Յագարելու և Ն. Մառի նկարագրություններում 57-րդ թվահամարն ունեցող մագաղաթյա այս ձեռագիրը, հավաքածոյի վերադասավորման պատճառով Ռ. Բլեյկի նկարագրության մեջ ներկայացված է թիվ 8-ի տակ<sup>6</sup>: Նկարագրությունը բավարար մանրամասնությամբ է կատարված, խորագրերին կից տրված են սկզբնատողերը և նրանց ֆրանսերեն թարգմանությունը, մատենագիտական տեղեկանքը լիարժեք է, բայց հիշատակագրությունները, ի տարբերություն Ն. Մառի կազմածի, վկայակոչված չեն:

1926 թ. «Patrologia Orientalis» մատենաշարում վրաց «Յայսմաուրքը» հրատարակելիս (t. XIX, f. 5) Ստեփանոս Նախավկայի ու Պետրոսի և Պողոսի վարքերին ու ներքողմանը վերաբերող նյութերը (№ 1-9) քաղված են Իվերոնի այս ձեռագրից (թերթք 3r1-51r2): Գրչագիրը ներկայացնելիս Ն. Մառը վերջին անգամ անդրադարձել է ժողովածոյի բնույթին և գրել. «Թերևս այն վրաց ուղղափառ եկեղեցու հետ կապված հայոց համար է հատկացված»<sup>7</sup>: Սա ապացուցման կարոտ, բայց ուշագրավ դրույթ է, մանավանդ որ ձեռագրի 349r2 էջում, «Սուրբ Ոսկիի և նրա ընկերաց վկայաբանության» խորագրից առաջ գրչի իսկ ձեռքով կարմրադեղ «ասոմֆավուլի» (երկաթագիր) գրչությամբ ասված է՝ ըստ Ն. Մառի և Ռ. Բլեյկի վերծանության, «ցեյց [Վճիգե՛]ճնի եօմե՛շորոտճճն տարճճնօղ արօճն» - «Այս վկայաբանությունները հայերենից են թարգմանված»: Ի Աբուլաճեն այս վկայությունը մասամբ այլ կերպ է վերծանում. «ցեյց [եօճոտե՛]ճնի եօմե՛տաճճն տարճճնօղ արօճն» - «Այս ընթերցելիքները հայերի կողմից են թարգմանված»<sup>8</sup>: Երկու մեկնաբանությունն էլ չեն մերժում ժողովածոյի գոյացումը քաղկեդոնական հայոց միջավայրում: Սակայն երկուսի դեպքում էլ բացատրության կարոտ է մնում ձեռագրում ոչ թարգմանական «Վկայաբանություն սուրբ վկա Հարոյի, որ նահատակվեց Քարթլիում, գրված Քրստոսով Քարթլիի կաթողիկոս Սամուելի հրամանով» (թերթք 70v2 - 92r2): Ընդ որում ձեռագրում բերվում են նաև խորագրում հիշված Սամուել կաթողիկոսի և Վկայաբանության հեղինակ Հովհան Մաբանա որդու (Մաբանիսձե) փոխանակված գրություն-նամակները<sup>9</sup>, որոնք, բնականաբար, հայերենից կամ հայերի

կողմից թարգմանված լինել չեն կարող և իբրև այդպիսին՝ խոչընդոտում են Ն. Մառի տված որակումին՝ «...հայոց համար է հատկացված»: Սակայն այդ առարկությունը կարող է վերանայ, եթե արձանագրենք, թե գրչագիրը կազմողի սկզբնագիրը չէ, այլ «նուսխուրի» ընդօրինակություն «մըգրվանի» կամ «ասոմֆավուլի» գաղափար օրինակից<sup>10</sup>: Ուրեմն՝ հնարավոր է, որ նրա գրիչը (ավելի ստույգ՝ գրիչները) հայերենից կամ հայերի կողմից թարգմանված սկզբնագիրն ընդօրինակելիս (Ն. Մառը երկու ձեռք է տեսնում) միջարկել են ոչ թարգմանական նյութեր, այդ թվում և Թիֆլիսում նահատակված Հարոյի վկայաբանությունը՝ առկից գրություններով:

Տարակարծություններ կան նաև ժողովածոն ժանրային առումով որակելու հարցում: Ն. Մառն այն կոչում է «Վարք սրբոց», որ միանգամայն արդարացված է բովանդակված նյութերի բնույթով, ընդ որում այդ նյութերից առաջին միավորները, ինչպես նշվեց, բնագրով ու թարգմանությամբ մտծվել են «Յայսմաուրք»<sup>11</sup>: Թերևս այս իրողության տպավորության տակ է, որ պրոֆ. Է. Մետրևելին Աթոսի ձեռագրերի նկարագրության առաջին պրակի ներածականում քննարկվող ձեռագրի վարքերի Ա. Խախանաշվիլու հրատարակությունը կոչում է «Խայսմավուրքային խմբագրության»<sup>12</sup>: Մինչդեռ Ի. Աբուլաճեն հետևողականորեն ժողովածոն կոչում է «Ճառընտիր»<sup>13</sup>: Նա առիթ է ունեցել առանձին հոդվածով քննության առնել վրաց հնագույն Ճառընտիրների բովանդակային տարբերակները և այստեղ ևս Աթոսի 57(=8) գրչագիրը համարել է «Ճառընտիր», վերապահում անելով, թե որոշ տարբերակներում վարքային ընթերցելիքները գերազանցում են, «կան նաև այնպիսի Ճառընտիրներ, որոնք միայն վկայաբանության – վարքերի տեքստեր են բովանդակում: Հայոց մատենագրության մեջ այդպիսիները հնում «Մարտիրոսոք» էին կոչվում»<sup>14</sup>: Այս պարագայում «Ճառընտիր» կոչվող վերջին տեսակի ժողովածուները նույնանուն են «Վարք սրբոց» անունը կրողներին:

<sup>6</sup> R. Blake, Catalogue des manuscrits géorgiens de Laure d'Iviron au Mont Athos, "Revue de l'Orient chrétien", 28 (1931-1932), № 3 et 4, p. 318-329.

<sup>7</sup> Le Synaxaire géorgien... p. 638. Հմնտ. *օ. ձեղևածք*, յարտղուլի ճա ճոմե՛շորոտ..., ցք. 038.

<sup>8</sup> *օ. ձեղևածք*, նշվ. աշխ., էջ 064:

<sup>9</sup> Նրանց առաջին լիարժեք հրատարակությունն ու ռուսերեն թարգմանությունը տե՛ս *H. Mapp*, Агиографическые материалы..., стр. 52-56. Հետագայում թրքերն ունեցել են մի քանի վերահրատարակություն: Վերջին գիտական հրատարակությունը տե՛ս «ժեղևի յարտղուլի ճոտղորտղուլի ճոտղորտղուլի ճեղևածք», Մոցեն 1, (V-X եև.), օղու ձեղևածեկ եղևածքեղևածքուտա ճա ճեղևածքուտ, տե., 1963, ցք. 46-48.

<sup>10</sup> *H. Mapp*, Агиографическые материалы..., стр. 47.

<sup>11</sup> Le Synaxaire géorgien... p. 653-674.

<sup>12</sup> «Եարտղուլ եղևնաՄլլերտա ճլՄլլերիղևոճա. ճտղեշորի կղևլլլլլլլլ», 1, տե., 1986, ցք. 7, Մլլե. 20.

<sup>13</sup> *օղու ձեղևածք*, յարտղուլի ճա ճոմե՛շորոտ..., ցք. 021-024. Է. Մետրևելին Ի. Աբուլաճեի այս հրատարակությունը չի հիշատակում: Բացատրության կարոտ հարց է, թե ի՞նչ հանգամանքով Ի. Աբուլաճեի աշխատությունները չորս հատորով հրատարակողները լուրջամբ շրջանցել են գիտնականի այս աշխատավորությունը, որ հեղինակի ձեռագրի խմորատիպ հրատարակությամբ լույս է տեսել 1944 թ. ընդամենը 150 օրինակ տպաբանակով և այժմ գրեթե անգոտանելի է:

<sup>14</sup> *օ. ձեղևածք*, Մրոմլլե, ճ III, տե. 1982, ցք. 34. Ն. Մառի Աթու այցելության սկզբնական հրատարակման մեջ մեզ ճեղևածքը ձեռագիրը «Մարտիրոսոք» է կոչված (տե՛ս *H. Mapp*, Из поездки на Афон, ЖМНП., 1899, № 3, առանձնատիպ, էջ 12, 16):

Աբոսի՝ մեզ զբաղեցնող գրչագրում ընթերցելիքները հիմնականում վարքեր ու վկայաբանություններ են, իսկ սակավաթիվ այլ ժանրի դրվագները (ներքողներ, թղթեր, ճառեր) կոչված են լրացնելու վարքագրականը: Ուստի արդարացված ենք նկատում ժողովածուն «Վարք սրբոց» կոչելու ավանդույթը<sup>15</sup>:

Ձեռագիրը գրչի կամ ստացողի հիշատակարան, ինչպես մենք սովոր ենք վերջում տեսնել, չունի: Եղած հիշատակությունները, սակայն, թույլ են տալիս ինչ-ինչ կռահումներ անել. այսպես՝ էջ 178r-ում կարմրադեղով գրված է լ(ուսն)Յ Յ(յոՎյգալ)յ ճ(ուօր)յո – «Բրիստոս ողորմես՝ Գիորգիին», որ հաջորդում է Հուլիանոսի վկայաբանության խորագրին՝ երկաթագրով: Կարծում ենք՝ արդարացի պիտի նկատել Ն. Մառի ենթադրությունը, թե այն կարող է գրչի անունը լինել: Հիշատակությունների մեջ տաս անգամ կարդում ենք *Աբսեն եպիսկոպոսի, եպիսկոպոսապետի, տիրաց տեր հայրապետի, հայրապետի անունը*, որը ժամանակակից է գրչությանը, և առ որը փառաբանություն է ասվում (81v<sub>2</sub>, 103r<sub>1</sub>, 139r<sub>2</sub>, 173r<sub>2</sub>, 194v<sub>2</sub>, 259r<sub>2</sub>, 312v<sub>1</sub>, 335v<sub>2</sub>, 321v<sub>2</sub>): Կարծում ենք, սխալված չպիտի լինենք այս Աբսենի մամածոցարո և ցոնկոթոս (կաղա՛ ցոնկոթոս) ցոնկոթոս - մեծարումը ոչ թե *հայրապետ* (=կաթողիկոս) հասկանալ, այլ՝ եպիսկոպոսապետ (=վանահայր): Իսկ որ Աբոսի Իվերոն վանքում այս անունը կրող առաջնորդ է եղել՝ կարելի է հավաստիանող վանքի 1074 թ. գրված ձեռագրում գրառված № 48 և 50 հիշատակի սահմանումներից<sup>16</sup>: Վրացագետները քանիցս փորձել են ճշտել Աբոսի Իվերոն վանքի առաջնորդների (մամասախլիսների/տանուտերերի, վանահայրերի (իզումենների-դեկանոզ/ավագ քահանաների) ինքնությունն ու ժամանակագրությունը: Պրոֆ. Կ. Կեկելիձեի հանգամանալի քննությանը պարզված է, որ Աբսենը երևելի գործիչ է եղել և հաղթական պայքար է մղել վանքը կամ նրա կալվածները վրաց միաբաններից խլելու հույների նկրտումների դեմ<sup>17</sup>, որով լիովին հասկանալի է դառ-

<sup>15</sup> Ժողովածուի նյութերի ցանկը տրված է տողերիս հեղինակի «Ագաթանգեղոսի հին վրացերեն խմբագրությունները» աշխատության «Վկայաբանություն սուրբ հայրապետացն» բաժնում (Երևան, 1982, էջ 115-120): «Մարտիրոսների» կազմության ժամանակագրության, կառույցի և խմբագրությունների մասին շահեկան հրատարակումներ տես՝ *M. van Esbroeck*, Les plus anciens Homéliers géorgiens, *Louvain*, 1975., *Ձ. Մանուշակյան*, *Ձ. Մանուշակյան, Ձ. Լաձաձույի, Ձ. Նեյնյանյան*, Կաթողիկոսների մեթոդություն, տ. 2, 1999: Ի դեպ, Ն. Մառը համոզված է, որ Աբոսի սույն գրչագիրը բովանդակում է դեկտեմբերի 27-ից մինչև հունիսի 27 տոնելի սրբերի հիշատակը, հետևաբար «Մարտիրոսը» պիտի ունենար նաև շարունակություն կազմող երկրորդ մաս, հավանորեն դարձյալ հայերենից թարգմանված, որ ցայսօր հայտնաբերված չէ (տես՝ *H. Mapp*, Из поэзии на Афон, стр. 20):

<sup>16</sup> «Կաթողիկոսի թմբուկի մոնաստրիոս 1074 Վ. Նեյնյանյանի զեպոստ», տնոլոսն, 1900, ց. 228-229.

<sup>17</sup> *Կ. Կեկելիձե*, *Երկրագործի մեթոդությունը* լուրջաբանության լուրջությունը, Երևան, 1945, ց. 233.

նում նրա անվան հաճախակի և փառաբանական հիշատակությունը<sup>18</sup>:

Աբսեն եպիսկոպոսի ինքնության ճշտումը նորովի թվագրելի է դարձնում Աբոսի թիվ 57 (=8) ձեռագրի գրչության ժամանակն ու վայրը. հակառակ մինչև այժմ եղած *X դարի՝* (Ն. Մառ, Ռ. Բլեյկ, Ի. Աբրահամ) այն գրվել է Աբսենի առաջնորդության տարիներին, որ է՝ 1039-1041 թվականները<sup>19</sup>: Այդ նշանակում է, թե մայր օրինակից ընդօրինակումը կատարվել է վանքի ու միաբանության հիմնադիրների՝ Հովհանի և Թռռնիկի կրոսեր ժամանակակիցներ Աբսեն եպիսկոպոս ստացողի և Գիորգի գրչի կողմից<sup>20</sup>: Հայոց եկեղեցու սրբերի վարքերին վերաբերող ժողովածուի ընդօրինակումը Աբստում դուրսին կլինի բացատրելի՝ եթե այքի առաջ ունենալիք հայր Ներսես Ալիկյանի եզրակացությունը, թե «ինչպես խաչքարի արձանագրությունը կը վկայէ, Թռռնիկը հայ էր, գիտեր իր մայրենի լեզուն, բայց ծեսով պատկանելով վրաց եկեղեցուն՝ ընտելած էր նաև վրացերենի. այս պարագան առիթ տուած է Ստ. Ասողկան նկատելու զինքը՝ «յագգեն վրաց»<sup>21</sup>: Սակայն բոլոր պարագաներում խոսքը կվերաբերի ընդօրինակության փաստին և ոչ՝ ժողովածուն վրացերենով կազմելուն և նրանում եղած երկերի թարգմանության ժամանակին ու հանգամանքներին: Այստեղ մեր նպատակից դուրս է Թռռնիկի և Թռռնիկյանների ազգային պատկանելության խնդիր քննելը<sup>22</sup>, որովհետև ժողովածուն, կարծում ենք, ոչ կազմվել է ոչ էլ ընդօրինակվել է այդ մարդկանց հրահանգով ու մասնակցությամբ:

<sup>18</sup> Աբոսի վրացական վանքի պատմության և նրանում ստեղծված մշակութային արժեքների վերաբերող գրականության մատենագիտությունը տես՝ *Լ. Մանուշակյան*, *Պրոֆ. Կ. Կեկելիձեի մեթոդությունը* լուրջաբանության լուրջությունը, տ. 2, 1999, ց. 185-242, 378-404:

<sup>19</sup> Կ. Կեկելիձեի համոզմամբ գրչագիրը ընդօրինակված է 985-1020 թվականների միջև Աբստում (տես՝ *Կ. Կեկելիձե*, *Երկրագործի մեթոդությունը* լուրջաբանության լուրջությունը, տ. 2, 1999, ց. 125): Ինչպես երևում է, այս պարագային նա վանահայր Աբսենին նույնացնում է Աբսեն եպիսկ. Նիցոմիդացու հետ, որ մահացել է 1018-ին:

<sup>20</sup> Հովհանն մահացել է 1005 թ., իսկ Թռռնիկը՝ 985/6 թվականների միջոցին: Վերջինիս վերաբերող արդյունքների և գրականության քննությունը տես՝ *N. Adontz*, *Tornik le Moine*. - *Nicolas Adontz*, Etudes arméno-byzantines, *Lisbonne*, 1965, p. 297-318: Այստեղ համադրված են Թռռնիկին վերաբերող բոլոր հայերեն, վրացերեն և հունարեն վկայությունները: Նույնքան հանգամանակի քննություն տես նաև *Ն. Ալիկյան*, *Թռռնիկյանց նիւրարարությունը*. - «Մատենագրական հետազոտություններ. քննություն և բնագիր», հատ. Գ, Վիեննա, 1938, էջ 49-88, մասնավորապես՝ էջ 62-65:

<sup>21</sup> *Ն. Ալիկյան*, նշվ. աշխ., էջ 64-65: Հիշենք, որ նման մի արձանագրություն էլ թողել է Թռռնիկի եղբայր Վարազդակե Չորտանիկի որդին Անիում (նույն աշխ. էջ 66):

<sup>22</sup> «Ազգային վրացի», «յագգեն վրաց» և նման այլ բնորոշումները երկխոսաբանության փորձ կատարելու և Ցագարեիչլիկին, սակայն այդպես էլ ավարտական ընդունելի եզրակացության չհանգեց (տես՝ *Ջ. Կեկելիձե*, «Վրացի լուրջաբանության լուրջությունը» լուրջաբանության լուրջությունը, տ. 2, 1999, ց. 233):

Այլ է քաղկեդոնական հայոց խնդիրը. նրանց վրացախոսությունը կարող էր վերաբերվել էթնո-աշխարհագրական երկու միջավայրի՝ Տայքին և Հերեթին: Անկախ հիշատակագրության «հայերենից» կամ «հայերի կողմից» թարգմանված լինելու մեկնաբանությունից, պիտի ընդունել, որ վրաց ազգային եկեղեցու տոմեյի սրբերի շարք շնտած նահատակների ու վկաների ճանաչումը կարող էր տեղի ունենալ հայկական դավանական միջավայրից աստիճանաբար օտարացող, ժամասացության լեզվի վրացականացմամբ հայրենի մշակութային ավանդների անհրաժեշտությունը դեռևս գիտակցող և այդ պահանջը հայերենից կատարվող թարգմանություններով բավարարող հայոց (քաղկեդոնական հայոց) միջավայրում: Չենք ուզում ասել, թե զուտ գրական-մշակութային հետաքրքրությունը չէր կարող վրաց հոգևոր գործիչներին մղել հայերենից թարգմանության, մանավանդ որ «Ճառընտիրներում» և սուրբ հայրերի ժառանգության մեջ հայերենից կատարված թարգմանությունները պատկառելի թիվ են կազմում: Բայց և միաժամանակ՝ եթե հայոց «Վարք սրբոցից» վերցրած այս վարքերն ու վկայաբանությունները ընդհանուր վրացական մատենագրական հետաքրքրության առարկա դառնային, սպասելի էր, որ նրանք հետագայում ևս ընդօրինակության կարժանանային, կամ նրանից առանձին մուշներ կթափանցեին ազգային եկեղեցու ճառընտիրներ, Վարք սրբոցներ կամ այլ ժողովածուներ: Մեր քննարկած գրչագրի եզակիությունը թելադրում է ենթադրել, թե վրացախոս հայոց՝ վրաց հասարակության մեջ լիարժեք սերտաճման հետևանքով մվազել, իսկ հետագայում վերացել է այդ վարքերով ու վկայաբանություններով ինքնության տարբերակման գիտակցումը<sup>23</sup>:

Պրոֆ. Ի. Աբուլաձեն արծարծվող հուշարձանների թարգմանությունը թվագրում է IX-X դարերով և տեղորոշում Տայք-Կղարջում. Ղևոնդ Երեց պատմիչի տեղեկությունների քննությամբ նա պարզում է, որ Տայքն արդեն Հայաստանի կազմում չպիտի լիներ, ուստի Շապուհ Ամատունու գլխավորությամբ Հայաստանից արտագաղթող 12000 հոգին Տայքում չեն հաստատվել, այլ ճե-

րոխն անցել դիմել են Բյուզանդական տիրություն: «Տայքը որ նշված շրջանում հայկական տիրույթ լիներ, ապա հայ փախստականների գոնե մեկ մասը այստեղ կանգ կառներ, ինչպես այլ դեպքերում: Երևում է VIII վերջերին այս երկրամասը այլևս հայկական վարչություն (Նաճաթջոջո) չէր ներկայացնում: Այն, ինչպես երևում է, ոչ էլ Բյուզանդիային էր պատկանում, այլ, պիտի կարծել, Շավշեթ-Կղարջի իշխանության (Նաթաջո) կազմ էր ընդգրկվել»<sup>24</sup>: Ժամանակագրական այս սահմանագիծը հույժ ենթադրական է, բայց որ արաբական տիրապետության հարկային խստացման տարիներին կենտրոնական և Արևելյան Վրաստանից Մամցխեի անցումով նշանակալի թվով բնակչություն էր բնակափոխվում Տայք և Կղարջը, հաստատուն իրողություն է<sup>25</sup>:

Վերջին պարագան չէր կարող իր անդրադարձը չունենալ Տայքի մշակութային կյանքում: Առանց այդ էլ աղբյուրներից գիտենք, որ VI-VII դարերի ընթացքում այս գավառ էին տեղափոխվում կենտրոնական Հայաստանում պարտություն կրող հայ քաղկեդոնականները, որոնք պաշտպանություն էին գտնում բյուզանդական և վրացական երկաբնակ եկեղեցիների սպասավորության շրջանում:

Այսպիսով՝ Տայքում ու Կղարջում ձևավորվում է միանգամայն ինքնատիպ մշակութային միջավայր, երբ վրացերենը յուրացնող հայ բնակչությունը սկսում է հաղորդակից դառնալ այս միջավայրում ընթացք ստացող վրաց գիր ու գրականությանը, իսկ տեղիս վերստին շենացող վանական կենտրոններում միաբանող հոգևորականությունը, իր երբեմնի հիշողությանը դիմելով կամ տեղաբնակ հայ հոգևորականության (ու բնակչության) հետ աղերսվելով, իր գրական գործունեության ընթացքում ավելորդ չի համարում հայերենի ծանոթության նշաններ ցուցադրել<sup>26</sup>:

Այսպիսով տեսականորեն արդարացված է հայոց «Վարք սրբոցի»-ից քաղված այս վարքերի ու վկայաբանությունների վրացերեն թարգմանությունը Տայքի ու Կղարջի քաղկեդոնական հայոց ու վրաց միջավայրում, մանավանդ որ վրացերենով պահպանվել է ակներևորեն այս միջավայրում թարգմանված

(յարտջեղո)-օս քլեղթըրջե-յոնցեյօնեալուրո մնո՞ջեղե-օնեօտջօն ևօմբջը ֆջրօլոթօմօ ֆջարօթօմօ. - «Մրաջեօլօթօ», XVIII, տօ., 1999, թջ. 371-375.

<sup>23</sup> Խոսքը վերաբերում է Շիրակավանի ժողովին մասնակցած և Աշոտ Բագրատունու հանձնարարությամբ Փոտ պատրիարքի առ Աշոտ թղթին պատասխանող Տայքի եպիսկոպոս Սահակ Մռուտի փախուստից հետո եկող շրջանին: Սակայն ձեռագրական առանձին հիշատակարաններ վկայում են, որ վրաց եկեղեցու հարթանակը համատարած չէր, և Տայքում շարունակում էին գոյատևել միաբնակ համայնքներ (այդ է ապացուցում նաև հույն ավատատեր Բոյիլասի կտակը. (տե՛ս Հ. Բարթիլյան, Եվոտարբես Բոյիլասի կտակը (1059 թ.)... «Բանբեր Մատենադարանի», № 5 (1960), էջ 401, 411-413): Տայքի քաղաքական ու դավանական պատմության համառոտ ակնարկ տե՛ս՝ Ռաֆայել Մաքևանան, Տայքի քաղաքական անցքերի ակնարկ (ԴժԴ).- «Հայկազեան հայագիտական հանդես», ԻԱ, Պեյրոթ, 2001, էջ 89-111:

<sup>24</sup> օ. օթլեօթօթյ, նշվ. աշխ., էջ 09-010:

<sup>25</sup> Տե՛ս օթեթ չջջջօնեթջեթօ, օթեթլեթթեթնի օթթթթթ ճթթթթ, Թ. II, տօ., 1983, թջ. 73-91:

<sup>26</sup> Նկատի ունենք, օրինակ, Շառքերդյան նշանավոր գրչագրի (S-1141, 973-976 թ.) և Միքայել Մոդրեկիլի շարակնագրի (S-425, XI դ.) հայերեն գրությունները: Նրանց հրատարակությունն ու գնահատությունը տե՛ս Ի. Մարթ, Толкование Песни песней, грузинский текст по рукописи X в., ТР, III, СПб., 1901, стр. XVIII-XIX. Հմնտ. Ի. Արուլաձե, 10-րդ դարի վրաց մի ձեռագրի հայերեն հիշատակագրությունները.- «Բանբեր Մատենադարանի» № 4 (1958) էջ 35-42: Հմնտ. յարօթլե յեղեթֆջրօթօ յեղթթթթթթթթ, S-I, տօ., 1960, թջ. 544-567: Հմնտ. Ի. Մարալյա, Грузинские приписки и записи в армянской рукописи из Гладзора, К и В, I (1979), стр. 82-84.

կամ վրացերենով շարադրված «Դավթի և Տիրիճանի վկայաբանությունը», ինչպես նաև «Կողացի ինը մանկանց վկայաբանությունը», որոնց կանդիդատությանը առանձին:

Պրոֆ. Ի. Աբովյանի վերոբերյալ դրույթին ժամանակին անդրադարձավ ակադ. Կ. Կեկելիձեն<sup>27</sup>: Նրա համոզմամբ «...ցանկալի էր, որ հեղինակի կողմից տրվեր այլ հարց և, մասնավորապես՝ հնարավոր չէ՞ր միաժամանակ այսպիսի հարաբերություն (խոսքը հայ քաղկեդոնականների և վրաց ուղղափառների հարաբերության մասին է - Պ. Մ.) մեր երկրի այլ անկյունում, և ուշադրություն դարձներ արևելյան սեկտորին, հատկապես հին Աղվանքի արևմտյան մասին, որ հայտնի է Հերեթ անունով»<sup>28</sup>: Այդ կապակցությամբ Կ. Կեկելիձեն հղում է կատարում Ն. Մառի նշանավոր «Արքայուն՝ քրիստոնյաների մոնոլիթներն անվանումը, հայ-քաղկեդոնականների հարցի առնչությամբ» աշխատության վրա, ուր քննության է առնվում Հերեթում Իշխանիկի թագավորության և նրա մայր Գինարայի օրոք տեղի ունեցածը, երբ քաղկեդոնականացվեցին բնաշխարհի «հերետիկոսներ» ճանաչվող միաբնակները, որոնց մեկ մասը մախկին աղվաններ էին, սակայն վաղուց արդեն հայացած, իսկ X դարում քաղկեդոնականացմամբ վրացականացած էին հայացած աղվանները: Այստեղ ևս պայքարը ոչ թե էթնիկապես **հայ, վրացի** կամ **աղվան** զանգվածների միջև էր, այլ բացառապես դավանական տարբեր պատկանելություն ունեցողների<sup>29</sup>: Կ. Կեկելիձեն նման հարցադրումը արդարացնող վկայություններ է գտնում հայոց «Վարք սրբոցից» քաղված այս հուշարձաններում («Վկայաբանություն Հայոց սուրբ քահանայապետներ Արիստակեսի, Վրթանեսի, Հուսիկի, Գրիգորի, Դանիելի», «Վկայաբանություն սրբոց վկայից Մուկավետյաց», «Մուք սուրբ Ոսկիի և նրա ընկերաց վկայության մասին»), ընդ որում գիտնականի համոզիչ կռահմամբ վարքերում եղած «Ալանքը», որտեղից էին Մաթենիկը և նրան ուղեկցողները, սրբագրելի է «Աղուանք», որովհետև այդքան վաղ ժամանակներում ալանները քրիստոնեացված չէին<sup>30</sup>: Հետևաբար «Հիշյալ տեքստերի թարգմանության ծագումը, հավասար պայմաններում, ավելի սպասելի է Հերեթի վրացականացած երկարնակ հայոց ծիրում, քան Տայքում: Այս մտքի օգտին թերևս և այն կիրարարվի, որ Աթուսի № 57 (=8) ձեռագրի պատրաստման նախաձեռնողը Հերեթին աշխարհագրորեն մոտիկ Նինոմմիդայի

<sup>27</sup> Առիթը Ի. Աբովյանի դոկտորական ատենախոսության պաշտպանությունն էր և Կ. Կեկելիձեի պաշտոնական ընդդիմախոս լինելու պարագան:

<sup>28</sup> *Ե. Գեղամյան, Երևան, 1968, թ. X, տ. 1, 1968, թ. 125*:

<sup>29</sup> *Н. Мэрр, Кавказский культурный мир и Армения, Ереван, 1995, стр. 214-216.*

<sup>30</sup> *Ե. Գեղամյան, նշվ. աշխ., էջ 126:* Ալանների քրիստոնեացման պատմությունը տրված է Յու. Կուլակովսկու Աланы по сведениям классических и византийских писателей աշխատության մեջ:

հայրապետն է, որի համար այս երկրի եկեղեցական անցյալը պակաս նշանակություն չէր ունենա, քան Տայքինը»<sup>31</sup>:

Ներկայացվող վկայաբանությունների հայերեն բնագրերի «Աղուանք» էքստրակտները համարում ենք «Վկայաբանություն սրբոց վկայից Մուկավետյաց» թարգմանության մեջ երեք անգամ ընկալված է իբրև օսեյո – «Օսք» (օսեր, օսերի երկիր), մինչդեռ «Մուք սուրբ Ոսկիի և նրա ընկերաց վկայության մասին» երկում այն ներկայացված է «Հերեթ» երկրանվամբ: Այդ մուս տեղանվանը հանդիպում ենք նաև «Վկայաբանություն Հայոց սուրբ քահանայապետներ Արիստակեսի, Վրթանեսի, Հուսիկի, Գրիգորի, Դանիելի» վրացերեն տեքստում, սակայն այս դեպքում հայերենում նրա դիմաց ունենք «Աղուանք», որ ստույգ համապատասխանությունն է ըստ վրաց աղբյուրների ընկալման: Միևնույն պահով համար բերենք վկայություններ (առաջին օրինակի հայերենը չի ավանդված ուստի քաղում ենք մեր թարգմանությունից)

1. [Հյուսիսային երկրից Օսքի դուռով Հայոց երկիր եկան հասան՝ Քրիստոսի համար գոհվելու...]

2. Նահատակք որք գնացին յԱղանաց որան է գիտ Մաթենկայ տիկնոջ ի Հայս...

3. ...և ի թագադրել Դիդիանուսի *Աղանաց*, համար արաեսլ գաւրացն...

4. Բնութեամբ մարդիկ ենք և յԱղանաց որանէ...

5. ...եկեալ էին ընդ նմա (թագուհուն - Պ. Մ.) *յԱղանաց*, գորոց Աստուած իմաստնացոյց...

6. ...ի դաւելոյ նորին Սանատրկոյ և այլոց ոմանց հանապագատու արանց Աղուանից՝ սպանին գերանելին Գրիգորիս...

1. ...დაკლებად მოიწინეს ქრისტსოვს ქუევაწით ჩრდილოთ, კარისაგან ოვსეთისა, ქუევაწად სომხეთისა...

2. ახოვანნი, რომელნი წარვიდეს კარით ოვსეთისაჲთ სათენეკ დედოფლისა თანა სომხოსთ...

3. ...და მეფე ყოფასა დიდიაზნესა ოვსთასა, და აღრაცხვა ყოვერისა...

4. ბუნებით კაცნი ვართ და კაცთაგან ოვსთაჲსა

5. ...რომელნი მოსრულ იყვნეს მას თანა ჰერეთით, რომელთანი დემეტრთან განაბრწვივნენ...

6. ... ზაკვეთთა მისევე სანატრუკისითა და სხუათა ვიეთემეტყუვართა კაცთა ჰერეთისათა მოკლეს ნეტარი გრიგორის...

<sup>31</sup> *Ե. Գեղամյան, նշվ. աշխ., էջ 127:*

Իմանալով հանդերձ, որ *օսթ/ալանները* այդքան վաղ քրիստոնեացված չէին և նրանց երկրից Հայաստան քարոզչության չէին կարող գալ, այնուամենայնիվ վկայակոչություններից երեքը (1, 2, 4) անվերապահորեն ստույգ են, քանի որ «Ալանաց դուռ» լեռնանցքին են վերաբերում: 3-րդ կետում հիշված «Ալանաց» թագավոր Դիդիանոսը (վրաց. Դիդիագեն) հորինյալ անուն է, ուստի կարող է վերաբերել որին կամենաք, հետևաբար միայն մեկ դեպքում (5) վրիպում է տեղի ունեցել՝ կամ հայերենի «յԱղանաց»-ն է թարգմանիչը «յԱղունաց» կարդացել և «Հերեք» ընկալել կամ, հնարավոր է, նրա ձեռքի տակ եղած բնագրում իսկապես «յԱղունաց» է եղել, որ գրչական վրիպմամբ «յԱղանաց» է դարձել<sup>32</sup>:

Եթե փաստական հիմքեր ունենայինք հաստատապես պնդելու, թե ձեռագրի պատվիրատու-ստացող Արսեն եպիսկոպոսը նույն Արսեն Նինոմիդացին է, ապա Կ. Կեկելիձեի դրույթը հիրավի ավելի նախընտրելի կարելի էր դիտել: Բայց խնդիրն այն է, որ այդ նույն Հերեքի կամ Աղվանքի հյուսիս-արևմտյան ծայրագավառում վրացախոս հայության գրական-մշակութային գործունեության մասին լրացուցիչ որևէ աղբյուր չունենք, մինչդեռ վերևում հիշված «Դավթի ու Տիրիճանի» և «Կողացի մանկանց» վրացերեն տեքստերը Տայքի և նրա հարակից շրջանի մասին են վկայում, գրված «Վարք սրբոցից» քաղված երկերի լեզվատնական նույն նորմերով ու տերմինային գործածության սկզբունքներով: Կարծում ենք՝ եղած երկու վարկածներն էլ կարոտ են նոր աղբյուրների և ճշգրտման<sup>33</sup>:

Թարգմանված հուշարձանների՝ այլ միջավայրում երևան գալու հնարավոր տեղորոշումը վերանայելի է դարձնում և նրանց թարգմանության՝ Ի. Աբուլաձեի առաջարկված ժամանակագրությունը: Քանի որ Տայքի հայոց քաղկեդոնականացումն ու նրան հաջորդած վրացախոսացումը գիտնականը սահմանում էր VIII դարից ոչ վաղ, համենայն դեպս 726 թ. Մանգլեթի ժողովից հետո, ապա հենվելով մի քանի հուշարձաններում առկա հիշատակի օրվա ցուցումների վրա, ինչպես նաև փորձելով համաձայնեցնել հայոց շարժական և վրաց անշարժ տոմարների տարաթվերը՝ նա թարգմանությունների կատարումը կարելի էր համարում 840-960 թվականների միջև: Կ. Կեկելիձեն գտնում է,

<sup>32</sup> Մոռանալու չէ մեկ պարագա ևս. ժամանակին ակադ. Ն. Մառը անդրադարձել է Ույստանեի հիշատակած «Ծայր» կոչվող ցեղի քրիստոնեացման պատմությանը և ցույց տվել, որ այդ էթնանվան տակ *աղվաններ* կամ աղվանական որևէ ցեղ պիտի հասկանալ: *Н. Я. Марр*, Цаты (таф) палеонтологически. - «Մառը և հայագիտության հարցերը», Երևան, 1968, էջ 200-205:

<sup>33</sup> Համան Արևելցու, նրա որդի Արմենրսեի և թոռ Իշխանիկի ինքնության և գրական-մշակութային դիրքորոշումների մասին տե՛ս *Աս. Մնացականյան*, Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջ, Երևան, 1966, էջ 181-213:

որ այդ վարկածը ընդունելի կարող էր նկատվել, եթե համոզմունք գոյանար, թե նրանք թարգմանված կարող են լինել միայն Տայքում և այն էլ հատկապես վրացախոս դարձած հայոց գործածության համար: Սակայն Կ. Կեկելիձեն արդեն կասկածի տակ է առել այդ դրույթը և տոմարական անհամաձայնություններ բացահայտել մի քանի վարքերի հայերեն բնագրում և թարգմանության մեջ: Այսպես՝ ամիսների հաջորդականության 13 դեպքից 7-ի դեպքում ճիշտ է, 6-ի դեպքում՝ խախտված, ինչ վերաբերում է հիշատակի ամսաթվերին, ապա 11 դեպքից միայն երեքի դեպքում (Սուբխասյանց, Մահակ, Շուշանիկ) 840-960 միջոց է ընկնում, իսկ մյուսները այդ շրջանից դուրս են գալիս: Հետևաբար, «Հայոց շարժական տարվա թվականը՝ անշարժի վերածելիս չի կարողացել պահպանել ստույգ հաշվարկը», ուստի «թարգմանիչը կամ խմբագիրը հմուտ չի եղել հայոց շարժական տարին անշարժի վերածելիս, այդ պատճառով նրա տվյալների հիմամբ այս կամ այն հուշարձանի թարգմանության ժամանակի որոշումը բոլոր դեպքերում հուսալի համարվել չի կարող»<sup>34</sup>:

Սակայն անվերապահ է մեկ իրողություն. թարգմանությունների լեզուն ու ոճը շատ հեռու են V-VII դարերի դասական վրացերենի նորմերը ներկայացնելուց: Նույնիսկ ավելորդ է նրանցում «խանձետություն» ու նրան փոխարինելու եկած «հայմետության» կանոնավորություն փնտրելը:

Հայերեն բնագրերի երևան գալու և վրացերեն թարգմանվելու ժամանակագրական խնդիրների քննությունը հնարավոր է դառնում վկայաբանություններից մի քանիսի բնագրագիտական ուսումնասիրությամբ: Ն. Մառը իր նախնական հրապարակման մեջ արդեն նկատել է, որ վկայաբանություններից երեքը՝ «Վկայաբանություն սրբոց վկայից Սուկավետյաց», «Վկայաբանություն Հայոց սուրբ քահանայապետեր Արիստակեսի, Վրթանեսի, Հուսիկի, Գրիգորի, Դանիելի» և «Վկայաբանություն Հայոց եպիսկոպոսապետ Ներսեսի և նրա աշակերտ Խաղ եպիսկոպոսի», բնագրական առնչություններ ունեն Մովսես Խորենացու «Հայոց պատմության» համապատասխան դրվագներին: Ն. Մառը հայոց ազգային եկեղեցու սրբերի վկայաբանությունների վրացերեն թարգմանություն հնարավոր է համարում «ամենաուշը... յոթերորդ դարի վերջը կամ ութերորդի սկիզբը», մինչդեռ Խորենացիով զբաղվող մասնագետները պատմիչին համարում են ութերորդի վերջի կամ իններորդ դարի սկզբի գործիչ՝ նրան վերագրելով գրքում եղած ավանդությունների (լեզենդների) հորինումը, այնինչ ամենաուշը VII դարի երկրորդ կեսով թվագրվող «Սուկավետյաց վկայաբանության» մեջ Սաթենիկը անվանապես առկա է: «Հետևաբար, - գրում է Ն. Մառը, -

<sup>34</sup> Գ. Գեղամյան, նշվ. աշխ., էջ 128:

երկուսից մեկը՝ կա՛մ Խորենացին չի հորինել Սաթենիկ անունը, կա՛մ Խորենացին գրել է մինչև VII դարի կեսը»<sup>35</sup>:

Ինչ վերաբերում է «Վկայաբանություն Հայոց սուրբ քահանայապետեր Արիստակեսի, Վրթանեսի, Հուսիկի, Գրիգորի, Դանիելի» բնագրին, Ն. Մառը նրա հայերեն օրինակը չի մատնացուցել, բայց նորից արձանագրել է, թե Խորենացին օգտվել է նրա հայերեն տարբերակից (անշուշտ նկատի ունի Խորենացու Պատմության II ԳԱ, III Բ, III Գ, III ԺԱ, ԺԳ, ԺԴ գլուխների հաճախ բառացի նույնությունը վկայաբանության բնագրին), ընդ որում, ըստ գիտնականի, «Մեր վկայաբանության կախումը Խորենացուց քիչ հավանական է, բայց եթե այդ ապացույցի, ապա կդառնա մեկ հույժ էական ապացույց առավելապես հօգուտ նրա, որ Խորենացին յոթերորդ դարի կիսից ուշ [ապրած] պատմիչ չէ»<sup>36</sup>: Այդ նույնը վերաբերում է Ներսես Մեծի վկայաբանությանը. այստեղ Խորենացու Պատմության հետ ունենք մի շարք ընդհանուր տեղիներ (III Ի, ԻԹ, Լ, ԼԱ, ԼԲ, ԼԳ, ԼԶ, ԼԷ, ԼԸ), որոնք կա՛մ Խորենացու են քաղված, կա՛մ Խորենացին մինչ իր Պատմությունը եղած վկայաբանություններից է վերցրել: Գիտնականը Սահակ Պարթևի և Շուշանիկի (համառոտ պատում) վկայաբանությունների արձագանքն է դիտարկում Եղիշեի ու Փարպեցու երկերում և վերստին եզրակացնում. «Արդեն երկիցս առի՞ք եղավ ասելու, որ քննարկվող հուշարձանների թարգմանությունները չեն կարող կատարված լինել VII դարի վերջից կամ VIII դ. սկզբից ուշ»<sup>37</sup>:

Այսպիսով՝ Ն. Մառը հակված է արժարժվող վկայաբանությունների մեջ տեսնել Խորենացու ձեռքի տակ եղած աղբյուրներ կամ Պատմահոր երկից կատարված քաղումներ, որոնք, ինչպես մենք առի՞ք ենք ունեցել մատնացուցելու, կարևոր բնագրական հիմքեր են տալիս Պատմահոր երկում եղած ուշ շրջանի որոշ ընդմիջարկություններ կամ աղավաղումներ սրբագրելու համար<sup>38</sup>:

Թարգմանությունների թվազման Ի. Աբուլաձեի կիրառած եղանակը քննարկելիս տեսանք, որ այդպիսիք գետնորում է IX-X դարերի միջոցին և տրամաբանական հիմնավորումներից զատ նույնպես դիմում Խորենացու ապրած ժամանակը post quem non համարելուն: Նրա եզրակացմամբ «Հայերենից եկող մի քանի վարքագրական հուշարձանների թարգմանության ցուցմամբ պարզվում է, որ VIII դ. սկզբին, ծայրահեղ դեպքում այս դարի առաջին կեսին, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» գոյությունը աներկբա փաստ է: Այն ե-

<sup>35</sup> H. Mapp, Из поездки на Афон, стр. 18.

<sup>36</sup> Նույն տեղում:

<sup>37</sup> Նույն տեղում, էջ 20:

<sup>38</sup> Պ. Մուրադյան, Բնագրագիտական դիտարկումներ Խորենացու Պատմության հեղինակային իսկագիրը վերականգնելու առնչությամբ.- «Հայկազեան հայագիտական հանդես», ԻԱ, Պեյրուք, 2001, էջ 77-88:

5205

րևում է մինչև այս գրված, քանի որ այս պահից արդեն նրա վրա հիմնված վարքագրական հուշարձաններ են գտնվում հայոց եկեղեցական մատենագրության մեջ»<sup>39</sup>: Թարգմանությունների այս ժամանակագրությունը գիտնականը փորձում է հավաստել բնագրերում եղած սոցիալական ու վարչական մի քանի տերմինների քննությամբ ևս (մթավրի, սոփելի, խևի ևն)<sup>40</sup>: Կ. Կեկելիձեն Ն. Մառի և Ի. Աբուլաձեի կատարած քննություններն այս հարցում անբավարար է համարում և թվագրության որոշ տվյալներ փնտրում բուն հուշարձանների մեջ: Այսպես, օրինակ, «Կատարումն սուրբ Սահակ Պարթևի» երկում ասված է. «Քանի որ նախնյաց սովորոյթի համաձայն կարգով ամուսնացած էր և չուներ արու զավակ, այլ միայն մեկ աղջիկ...», ուստի Կ. Կեկելիձեն եզրակացնում է, թե երկը գրված է 692 թվականից հետո, երբ 6-րդ տիեզերական ժողովի որոշմամբ ամենուր վերջ տրվեց ամուսնացյալ եպիսկոպոսությանը<sup>41</sup>: Սահակի կատարմանը վերաբերող տեղեկությունը վարքագիրը անշուշտ քաղել է Խորենացու Պատմության III գրքի 65-67 գլուխներից, որտեղ վերաբերյալ արտահայտությունը, ինչպես և սպասելի էր, չկա: Մասամբ նման նախադասություն գտնում ենք Շուշանիկի վկայաբանության համառոտ բնագրում<sup>42</sup>, որ իրոք կարող էր ստեղծված ու վրացերեն թարգմանված լինել հիշյալ տիեզերական ժողովից հետո<sup>43</sup>:

Մենք առի՞ք ունեցել ենք անդրադառնալու Պատմահոր երկից քաղված վարքագրական դրվագների բնագրագիտական զննատությանը և արձանագրել, որ Խորենացուց քաղումներ կատարողները վարքագիրներ են, մի բան, որ Խորենացու աղբյուրներ փնտրող Ն. Մառը չէր բացառում: Թարգմանությունների ժամանակը մինչև Մանազկերտի 726 թ. ժողովը և մի քանի տասնամյակ էլ նրանից հետո հնարավոր նկատելով (զերազանցապես լեզվական-բառազանձային նորմերով առաջնորդվելով), մենք հայերեն բնագրերը ձևավորվելու քիչ թե շատ ստույգ ժամանակ դժվարանում ենք սահմանել: Թերևս VII-VIII դարերը առավել հարմար ժամանակ են այս կարգի հուշարձանների երևան գալու համար («Վարք սրբոցների», «Մարտիրոսների», «Յայսմատուրքների», «Տոնականների» ձևավորման շրջան):

<sup>39</sup> օ. Ձեյբլոձե, նշվ. աշխ., էջ 077:

<sup>40</sup> Անդ, էջ 065-069:

<sup>41</sup> Ե. Ձեյբլոձե, նշվ. աշխ., էջ 129:

<sup>42</sup> Տես Պարույր Մուրադյան, Սուրբ Շուշանիկի վկայաբանությունը, Երևան, 1996, էջ 117, 121:

<sup>43</sup> Այս իրողությունը ևս կարող է փաստարկ ծառայել, թե Խորենացին ապրել է 692 թ. առաջ:



\* \* \*

Ն. Մառի «Из поездки на Афон» վերևում վկայակոչված նախնական հրապարակման մեջ մեզ հետաքրքրող թարգմանական վարքերն ու վկայաբանությունները ներկայացնելիս գիտնականը միաժամանակ արձանագրել է համապատասխան հայերեն բնագրերի գոյությունը՝ ըստ «Սոփերք Հայկականքում» եղած հրապարակումների, առանձին դեպքերում ընդհանուր դիտողությամբ նշել բնագրի ու թարգմանության միջև եղած հեռացումները: Այսպես, օրինակ, «Վկայաբանություն սրբոց վկայից Սուկավետյաց» երկի կապակցությամբ Ն. Մառը նկատում է. «Ի դեպ, ներկա դեպքում հայկական բնագիրը ներկայացված է պակասորդով. համեմայն դեպ տպագիր բնագրում [Ս. Հ., XIX, 33-56] վրացերեն թարգմանության համեմատությամբ պակասում է գրեթե չորս էջ... հենց սկզբում և ողջ վերջաբանը, ուր խոսվում է սրբերի նշխարների մասին՝ Կոստանդին թագավորի առասպելական տեսիլի առնչությամբ: Վրացական տեքստը, այսպիսով, լրացնում է հայկական բնագրի կորած մասերը... Մույն հուշարձանի վրացերեն թարգմանությունը շոշափում է Մովսես Խորենացու «Հայոց պատմության» բազմաչարչար հարցը... մման հուշարձանները վրացերենի կարող էին թարգմանվել՝ VII ավարտին է կամ VIII սկզբին»<sup>44</sup>:

Ինչպես տեսնում ենք՝ Ն. Մառի հարցադրումը լիարժեք է և կարոտ մասնավորեցման: Ծիշտ այդ պատմա-բանասիրական մասնավորեցմանն է նվիրված Ի. Աբուլաձեի աշխատությունը:

«Վկայաբանություն հայոց սուրբ քահանայապետ Արիստակեսի, Վրթանեսի, Հուսիկի, Գրիգորի, Դամիելի» երկը, Ն. Մառի ճշգրտմամբ «Սոփերք Հայկականքի» X հատորում եղածի (էջ 44-56) թարգմանությունը չէ, ոչ էլ մերձ Ազգաբանգեղոսի մոտ եղած տեքստին, սակայն վրացերեն բնագրի ինքնուրույնության մասին խոսք լինել չի կարող: Այն ըստ երևույթի հայերեն կորած բնագրի թարգմանություն է, որից օգտվել է Խորենացին»<sup>45</sup>:

Ի. Աբուլաձեն հայկական ձեռագրերում վրացերեն թարգմանության լիակատար համապատասխան բնագիր չի գտել<sup>46</sup>, ուստի համաձայնել է Մառի վկայակոչված դրույթի հետ և հանգամանորեն արձարծել Խորենացու ներկայիս բնագրում այլևայլ տիպի գրչական ու խմբագրական փոփոխությունների հարցը<sup>47</sup>: Պրոֆ. Իվ. Ջավախիշվիլին մինչ այդ արդեն ճշգրտել էր վրացերեն վկայաբանության սկզբի մասի քաղված լինելը Ազգաբանգեղոսից (§859, 860, 861, 862, 866) և Խորենացուց եկող հատվածների գիտական նշանակությունը:

<sup>44</sup> *Н. Марр*, Из поездки на Афон, стр. 17 (отгиск).

<sup>45</sup> Նույն տեղ, էջ 18:

<sup>46</sup> Մեր պրպտումները ևս արդյունավետ չեղան:

<sup>47</sup> *Օ. Ձեյլաձե*, նշվ. աշխ., էջ 0137-0139:

նը<sup>48</sup>: Նրա համոզմամբ «Այս հուշարձանը հայոց այն ժամանակվա եկեղեցական կարգերի պահպանողական ոգու արտահայտման ստեղծագործություն է»<sup>49</sup>:

Արժե արձանագրել, որ վրաց անվանի պատմաբանը աղբյուրագիտական հմուտ քննությամբ պարզել է այստեղ մեզ հետաքրքրող վարքագրական ու վկայաբանական գրեթե բոլոր հուշարձանների բերած նպաստը հայոց մատենագրության, եկեղեցու և մշակույթի պատմությանը՝ սահմանելով նրանց արյուրագիտական աղբյուրները պատմագրական երկերին: Ի. Աբուլաձեն այդ բոլորին ավելացրել է գիտա-համեմատական բնագրերի հրատարակությունը, ապա մաս բանասիրական – ոճական հանգամանակի քննությունը:

Նորից հիշենք, որ հայագիտության մեջ ցայսօր այս հուշարձաններին առնչվող հիմնական կատարվածը վերաբերում է նրանց նախնական հրատարակությանը Ղ. Ալիշանի «Սոփերք Հայկականքում», նրանց մասնակի հիշատակությանը Հուսիկ եպիսկոպոսի «Անապատականներ և վանականություն» աշխատության մեջ (Վաղարշ. 1906) և պրոֆ. Ի. Ա. Աբուլաձեի գիտական հրապարակումները վրիպմամբ շրջանցելով՝ նրանց մեկ մասի ուսերեն թարգմանությունը<sup>50</sup>:

\* \* \*

Հրապարակվող բնագրերի պատմագրական-աղբյուրագիտական նշանակությունը ակնառու դարձնելու համար ստորև մենք կփորձենք քննության առնել Մովսես Խորենացու Պատմությանն աղբյուրները երկու կարճառոտ բնագրի ընձեռած հնարավորությունները: Սակայն նկատենք, որ ներկայացվող վարքավկայաբանություններում Խորենացուն վերաբերողը այս երկուսով չի ավարտվում և միաժամանակ նյութեր կան, որոնք քննելի են Տղիշեի և Ղազար Փարպեցու երկերի առանձին բնագրագիտական հարցեր արձարծելիս:

<sup>48</sup> *Օյանջ ԶեյնոՅեցուն*, ძველი სომხური საისტორიო მწერლობა, ტფ., 1934, გვ. 27-32. Ազգաբանգեղոսի երկից եկող պարբերությունների քննությունն ու հայերեն թարգմանությունը տես տողերիս հեղինակի «Ազգաբանգեղոսի հին վրացերեն խմբագրությունները» գրքում (Երևան, 1982, էջ 112-123):

<sup>49</sup> *Օյ. ԶեյնոՅեցուն*, նշվ. աշխ., էջ 32:

<sup>50</sup> “Памятники армянской агиографии”, вып. 1, перевод с древнеармянского, вступительные статьи и примечания К. С. Тер-Давтян, Ереван, 1973. Որոշ լրացումներով վերահրատարակություն տես «Армянские жития и мученичества», перевод с древнеармянского, вступительные статьи и примечания К. С. Тер-Давтян, Ереван, 1994; “Святые армянской церкви”, книга I – Мученики, перевод с древнеармянского Кнарик Тер-Давтян և Лусիկ Степанян, составитель верховный архимандрит Езник, Эчмиадзин, 1996. Այս հրատարակությունների ներածություններում և ծանոթագրություններում եղած մասնավորեցումների քննարկումը ներկա դեպքում մեր նպատակից դուրս է:

Պատմահայր Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» (սրբագրեալ վերտառությամբ՝ Պատմութիւն Հայոց Մեծաց) երկը բովանդակող ամբողջական հնագույն ձեռագիրը, որ պահվում է Երևանի Մաշտոցյան Մատենադարանում (Հմր. 2865), ընդօրինակված է ԺԴ դարում<sup>51</sup> և պատկանում է Խ (խառնուրդ) ձեռագրախմբին, այսինքն՝ հին մասը Ա խմբին է պատկանում, նորը՝ Տ խմբին<sup>52</sup>: Այդ նշանակում է, թե հեղինակի ժամանակներից մինչև մեզ հասած վերոհիշյալ ձեռագիրը՝ «Պատմութիւն Հայոց Մեծացը» բազմակի ընդօրինակումներ է ապրել, տասնյակ գրիչներ ու սրբագրող-խմբագիրներ ունեցել և նույնքան անգամ ենթակա եղել գիտակցված կամ ակամա միջամտությունների ու փոփոխությունների: Թեկուզ միայն գրիչների վրիպելու կարելիությունը բավական է, որ բնագրագետները այսօր ևս շարունակեն երկն ընդմիջարկություններից ազատելու, սխալագրությունները բացահայտելու և հեղինակային իսկազիրը վերականգնելու մտահոգություն ունենան:

Հիմքեր կան պնդելու, թե Խորենացու երկը մյուս պատմագրքերից ավելի ենթակա պիտի լիներ ընդօրինակում-«թարմացումների», որովհետև տևականորեն ազգային պատմության ձեռնարկ է եղել, հետևաբար իր վրա կրել նորանոր սերունդների ըմբռնումների ու ճանաչած նորմերի կնիքը: Այսպես՝ Բագրատ Հայ կամ Աթենացի անունով վաղ միջնադարում ապրած մի անձնավորություն առ Մուրեն անունով իր հայաստանցի բարեկամը հղած թղթում նրան կոչ է անում որդիներին պատմել ազգային պատմության այն դրվագները, որ նկարագրված ենք գտնում Խորենացու մոտ<sup>53</sup>: Այդ նշանակում է, թե Պատմահոր երկը հիրավի ձեռնարկային կիրառություն էր ստացել՝ ճանաչելի դառնալով Հայաստանից դուրս ապրող հայության միջավայրում ևս:

Խորենացիագիտությանը այսօր ծանոթ է «Պատմութիւն Հայոց Մեծացի» շուրջ 50 ձեռագիր ընդօրինակություն ու պատառիկ-պահպանակ, երկի շուրջ 15 հրատարակություն և վերահրատարակություն: Կատարվել և կատարվում են ոչ քիչ թվով թարգմանություններ<sup>54</sup>: Այնուամենայնիվ այդ երկը այսօր էլ կա-

<sup>51</sup> Այս ձեռագրի ամփոփ նկարագրությունը տես՝ *Մովսիսի Խորենացու Պատմութիւն Հայոց*, աշխատութեամբ Մ. Արեղեան եւ Մ. Յարութիւնեան, Տփղիս, 1913 [այսուհետև՝ *Խորենացի* (1913)] էջ ԺԷ: Տես նաև՝ *Յուզակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի*, հատ. Ա., կազմեցին՝ Օ. Եգանեան, Ա. Զէյրունեան, Փ. Անթրեսեան. ներածութիւնը՝ Օ. Եգանեանի. խմբագրութեամբ՝ Լ. Խաչիկեանի, Ա. Մնացականեանի, Երեւան, 1965, էջ 891-892:

<sup>52</sup> Խորենացու ձեռագրերի ծագումնաբանությունը տես՝ *Խորենացի* (1913), էջ ԼԹ:

<sup>53</sup> «Յառաջադիմութիւն ազգային», *Բազմավէպ*, քիւ 13, Յուլիսի 1, 1844, էջ 202-203. հմմտ. *Պարույր Մուրադյան*, Մովսես Խորենացու «Հայոց Պատմութիւն» բնագրական հետքերը Զ.-Է. դարերի երկերում, *Էջմիածին*, 1992, Զ-Է, էջ 89-90:

<sup>54</sup> *Պետրոս Հովհաննիսյան*, Մովսես Խորենացու մատենագիտությունը. երկասիրություններ, Երևան, 1991, էջ 5-48:

րոտ է մանր ու մեծ բնագրագիտական բազում ճշգրտումների, սրբագրությունների ու վերականգնումների: Արդեն ասացինք, որ հնագույն ամբողջական ձեռագիրը ԺԴ դարից վաղ չէ:

Ինչ վերաբերում է եղած հրատարակություններին, ապա դրանց մեջ առավել գիտական ու նախընտրելի Ստեփանոս Մալխասյանցի խմբագրությամբ, Մանուկ Աբեղյանի և Մեթ Հարությունյանի աշխատությամբ 1913-ին Տփղիսում լույս տեսածն է: Կազմողներն ու խմբագիրը ոչ պատահականորեն չեն կամեցել իրենց հրատարակությունը «քննական» կամ նույնիսկ «գիտական» որակել, որովհետև պարզորոշ տեսել և ազնվորեն արձանագրել են, թե իրենց հավաքած ձեռագրական «բոլոր ընթերցումները մի անգամից աչքի առաջ կարելի է ունենալ՝ առեղի ճիշտ կերպով կարելի է բնագիրը վերականգնել. և այժմ իսկ տեսնում ենք, որ շատ ընթերցումներ պետք էր բնագրի մեջ դնել, որ մենք ծանօթութիւնների մեջ ենք առել, կամ ընդհակառակը»<sup>55</sup>:

Ի լրումն նախորդի, 1991-ի հրատարակությանը իբրև հավելված կցված են Աշոտ Սարգսյանի հավաքած 10 ամբողջական եւ 10 միավոր պատառիկի ընձեռած ընթերցումները՝ համեմատելով Աբեղյանի և Հարությունյանի տողատակերի հետ<sup>56</sup>: Սա, հարկավ, նախնական աշխատանքի կարևոր լրացում է, որ կոչված է օժանդակելու բնագիրը վերականգնելուն: 1913-ի հրատարակության երախտավորները նույնիսկ հայտարարում էին, թե «մեր աշխատանքի մեջ կարևորը, կարծում ենք, ոչ այնքան բնագիրն է, որքան ընթերցումները»<sup>57</sup>:

Հայագետը, մասնավորապես՝ խորենացիագետ հայագետը պարտավոր է աշխատանքային մեկնակետ ունենալ Աբեղյանի և Հարությունյանի «Յառաջաբանի» եզրակացությունը, թե «բնագրի վերականգնելը չի կարող մի մարդու գործ լինել. դրա վրայ դեռ շատերը պիտի աշխատեն եւ, կարծում ենք, այսուհետև ուրիշները հեշտութեամբ կարող են վերականգնել բնագիրը՝ ի նկատի ունենալով ոչ միայն մեր տուած ընթերցումները, այլ եւ ուրիշ աղբիւրներ, եւ ամեն մի հատուածի համար առանձնապէս ուսումնասիրութիւն անելով»<sup>58</sup>: Չեռագրական խմբերի առաջացման պատճառներին եւ ժամանակին անդրադառնալիս, Աբեղյանը ամփոփում է. «կան ձեւեր, որ մի խմբի մեջ առելի հարագատ են պահուած, ուրիշ ձեւեր էլ ուրիշ խմբի մեջ: *Դա արդէն բնագիրը վերականգնելուն է վերաբերում, որ իմ նպատակից դուրս է*»<sup>59</sup> (ընդգծումը մերն է - Պ. Ա.):

<sup>55</sup> Խորենացի (1913), էջ ԽԹ: «Առեղի ճիշտ... վերականգնելու» ենթակա բնագիրը ամենկին անհարկի է «քննական բնագիր» որակել, ինչպես այդ կատարված է Խորենացու 1991-ին Երևանում նմանահանությամբ վերստաված տիտղոսաբերքում:

<sup>56</sup> Խորենացի (1991), էջ 399-485:

<sup>57</sup> Խորենացի (1913), էջ ԽԹ-Ծ:

<sup>58</sup> Նույն, էջ Ծ:

<sup>59</sup> Նույն, էջ ԽԱ:

Ստորև, հարյուրամյա այդ պատվիրանը կիրառելուց առաջ արձանագրենք, որ բնագրագետ-խորենացիագետները դեռ պիտի շարունակեն Պատմության Հայոց Մեծացի ամբողջական կամ հատվածական ձեռագրերի ու պատարիկների պրպտումը և վերծանում-հրապարակումը: Նկատենք, որ Մատենադարանի մմանահանության-վերահրատարկության հավելվածային ընթերցումների մեջ չի ընդգրկված մույն հաստատության թիվ 10.000 ձեռագիրը<sup>60</sup>, գրված 1671-ին, որն օժտված է ոչ քիչ տարընթերցումներով: Հավանաբար վրիպած կամ հասու չեղած կլինեն այլուր գտնվող ուրիշ ձեռագրեր ևս: Սպասելիքներ կան տարբեր հավաքածուներում պահպանվող հատակոտորներից՝ առանձին կամ պահպանակի տեսքով, որոնց գիտական նկարագրությունն ու ճանաչումը երկար ժամանակ պահանջող գործ է, ինչպես որ ապագա տեխնիկական միջոցների կատարելագործմանն է թողնված այսօր արդեն հայտնի կրկնագրերից շատերի ուսումնասիրությունը:

Մենք տարիներ առաջ առիթ ենք ունեցել ասելու, թե «որպես հեղինակ տարուերթվելով երեքից ավելի դարերի արանքում, Խորենացին իբրև աղբյուր շատ հաճախ շփոթվեց նրան իսկ աղբյուր ծառայած նյութերի հետ, որով և մթագնվեց Պատմահոր երկի առկայությամբ պայմանավորված բնագրական իրողությունների վերհանումը ետխորենացիական մատենագրության մեջ»<sup>61</sup>: Բայց վաղուց և արդարացիորեն նկատված է, թե Խորենացու «ընթերցումածոց հնութեան համար ի խորհուրդ կրնային կոչուիլ իին պատմագրութիւնք, որոնք կամ Խորենացոյ աղբիւր եղած են եւ կամ զայն իրենց աղբիւր ունեցած են, գործիմանկ Ազաթանգեղոս, Փաստոս, Յովի[աննէս] Կաթ[ողիկոս], Անանուն ժամանակագիր, Թովմա Արծրունի, Մխիթար Անեցի եւ այլն»<sup>62</sup>:

Շարունակելով հայագետներ Նորայր Բյուզանդացու<sup>63</sup> և Հ. Ներսես վ. Ա. կինյանի նախանշված մեթոդով Խորենացու Պատմության բնագրական հետքերի պրպտումը, մենք, ի թիվս այլ երկերի, անուն առ անուն հիշատակել ենք վարքագրական – վկայաբանական վեց հուշարձան<sup>64</sup>, որոնք ունեն բառացի

<sup>60</sup> Այդ իրողությունը հրապարակավ արձանագրել է ձեռագրագետ Արտաշես Մաթևոսյանը: Առավել հանգամանորեն տես մեր «Մովսէս Խորենացու Պատմութեան Ներսէս Լամբրոնացու օրինակը» հոդվածը (Հայկագեան հայագիտական հանդէս, ԻԳ (2003), էջ 149-161):

<sup>61</sup> Պ. Մուրադյան, Մովսէս Խորենացու «Հայոց Պատմության» բնագրական հետքերը..., էջ 85:

<sup>62</sup> Հ. Ներսես վ. Ալիքնեան, Մովսիսի Խորենացոյ «Հայոց Պատմութեան» բնագրի վերակազմութեան խնդիրը, Հանդէս Ամսօրեայ, 1914, թիւ 10, 11, սիւնակ 684:

<sup>63</sup> Նորայր Ն. Քիզանդացի, Ընդդէմ Կարիւրեանց, «Հանդէս Ամսօրեայ», ԳԸ. տարի, 1984, թիւ 1-12, Յունուար-Գեկտեմբեր, էջ 19-28:

<sup>64</sup> Պ. Մուրադյան, Մովսէս Խորենացու «Հայոց Պատմութեան» բնագրական հետքերը..., էջ 93-97:

քաղումներ Խորենացուց և չեն ընդգրկված 1913-ի հրատարակության համեմատության առնված նյութերի ցանկում: Այժմ պիտի փորձենք այդ հուշարձաններից երկուսից բերվող մի քանի բնութագրական քաղումներով խորենացիագիտության համար ակնառու դարձնել նրանց բովանդակած ընթերցումների կարևորությունը:

### Ա. «ՍՈՒՐԲ ՇՈՒՇԱՆԻԿԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ»

Հայոց կաթողիկոս Ասպուրակեանի հաջորդած Մահակ Պարթևի եպիսկոպոսապետությունը ներկայացնելիս, Խորենացին Գ. գրքի ԽԹ. գլխում թվարկում է նրա նախնիներին և ապա ավելացնում. «Մա ամենայն առաքինութեամբ հարցն նմանեալ, աղօթիցն մասամբ առաելեաց՝ քանզի ստացաւ աշակերտս վաթսուն ըստ նմանութեան մայրաքաղաքացն սպուղէից, արք կրօնաորք, խարազնագգեստք, երկաթապատք, բոկագնացք, որք յար ընդ մնա շրջէին. որովք մշտնջենաւոր պաշտամամբ կատարեր զկանոնն, որպէս զայնս որք յանապատսն էին»<sup>65</sup>: Մեր ընդգծած «ըստ նմանութեան մայրաքաղաքացն սպուղէից» միջանկյալ նախադասությունն ու «երկաթապատք» բառը բովանդակային այլընթերցում չունեն. եղածը քերականական կամ շարախյուսական է, բայց գերազանցապես սխալագրություն<sup>66</sup>:

Սակայն բանասիրությանը վաղուց է հայտնի, որ Սուրբ Շուշանիկի Վկայաբանության մեկ ձեռագրով հայտնի համառոտ խմբագրության առաջին հատվածը քաղված է Խորենացու երկի Գ. գրքի ԽԹ. և ԾԱ. գլուխներից<sup>67</sup>, և Խորենացու մեզ այստեղ զբաղենող խոսքերը Վկայաբանության տեքստում քաղված են բառացի, սակայն՝ մեկ էական տարբերութեամբ՝ չկան ընդգծված «ըստ նմանութեան մայրաքաղաքացն սպուղէից» եւ «երկաթապատք» միավորները:

Նախ փորձենք ճշտել, թե մասնագետները ինչպես են հասկացել կամ մեկնաբանել բնագրի այդ մասը: «Ըստ մայրաքաղաքացն սպուղէից» արտահայտությունը բարգմանիչներից շատերն ընկալել են միակերպ՝ «մայրաքաղաքների սպուղէների նմանութեամբ»<sup>68</sup>, «следовали примеру столичных

<sup>65</sup> Խորենացի (1913), էջ 320:  
<sup>66</sup> Խորենացի (1991), էջ 320, 475:  
<sup>67</sup> Մովսիք Հայկականք, հատ. Թ., Վենետիկ, 1853, էջ 60, ծան. 12. H. Март, Из поэзии на Афон, стр. 19-20. *Ձ. ձմջլթթթթթ*, յարտջլթի լթթթթթ լթթթթթ լթթթթթ լթթթթթ լթթթթթ, թթ. 0153-0156. Պարայր Մուրադյան, Սուրբ Շուշանիկի Վկայաբանությունը. Երևան, 1996, էջ 108-113:  
<sup>68</sup> Մովսէս Խորենացու Հայկական Պատմութիւն, աշխարհաբար բարգմանեց եւ լրասրանեց Խորէն Ծ. Վ. Ստեփանն, Ս. Պետերբուրգ, 1889, էջ 303-304, ծան. էջ 253-254.

Спудеев»<sup>69</sup>, «сходных со столичными спудеями»<sup>70</sup>, «the Spudaioi of the capital»<sup>71</sup> կն: Նրանք իրավացիորեն «Սպուդէից» եզրը (ուղղ. Սպուդէք) սերել են հունարեն *σπουδαῖοι – փութաբաններ, նախանձառույզներ* բառից և նույնացրել «սպուդիտների» (արքմնիներ, արքունների կամ անքունների) միաբանության հետ:

Թարգմանության ինքնատիպությամբ է օժտված Խորենացու երկի վեցնետիկյան հայերեն-ֆրանսերեն հրատարակությունը՝ «sous la règle de l'ordre des grands couvents Spoudées»<sup>72</sup> (այսինքն՝ «Սպուդէների մեծ միաբանությունների կանոնի համաձայն»): Բնագրի նման ընկալում ունի նաև ֆրանսերեն վերջին նորագված հրատարակությունը. «à la façon des Spoudaïoi des grands monastères»<sup>73</sup> (այսինքն՝ «ըստ մանուրեան մեծ վանքերի սպուդէների»):

Հիրավի, հակառակ թարգմանիչների մեծ մասի միաձայնության, «ըստ մայրաքաղաքացն սպուդէից» կապակցության «մայրաքաղաքը» հունարեն «μητρόπολις»ի «մայրավանք» իմաստի պատճենումն է, որ վկայված է այլ աղբյուրներով ևս: Անավասիկ մեկ օրինակ *Կանոնք սրբոյն Սահակայ Հայրապետի* բնագրից. «Գ. Եւ պաշտան սաղմոսերգութեանն անխափան լիցի ի տուրնջեան և ի գիշերի, ըստ արիանակի *մայրաքաղաքացի* հարն հովուսպետի. զի ամենայն ումք չէ արքն և իշխանութիւն յապաղել զայն կարգ պաշտաման, կամ նորածնութիւնս ինչ առնել, այլ միշտ ի նմին յարամնալ»<sup>74</sup> (ընդգծումը մերն է - Պ.Մ.): Այստեղ էլ խոսքը ճիշտ և ճիշտ Խորենացու հիշատակած

Մովսես Խորենացի, *Հայոց Պատմություն*, քարգմանություն, ներածություն եւ ծանոթագրություններ ակադ. Ստ. Մալխասյանի, Երևան, 1961, էջ 319, 402:

<sup>69</sup> История Армении Моисея Хоренского, У. Էմինի նոր թարգմանությամբ, Մոսկվա, 1893, էջ 186, 276:

<sup>70</sup> Мовсес Хоренаци, История Армении, перевод Г. Х. Саркисяна, Երևան, 1990, էջ 188, 261 (ծան. 677):

<sup>71</sup> Movses Khorenatsi, *History of the Armenians*, Translation and Commentary on the Literary Sources by Robert W. Thomson (Cambridge, MA and London: Harvard University Press, 1978), p. 313.

<sup>72</sup> Moïse de Khorène, *Histoire d'Arménie*, texte arménien et traduction française par P.E. Le Vaillant de Flarival, tome second (Venise, 1841), p. 423.

<sup>73</sup> Moïse de Khorène, *Histoire de l'Arménie*, nouvelle traduction de l'arménien classique par Annie et Jean-Pierre Mahé (d'après Victor Langlois) avec une introduction et des notes (Paris, 1993), pp. 294, 405.

<sup>74</sup> Կանոնագիրք Հայոց, հատոր Ա., աշխատասիրությամբ Վազգեն Հակոբյանի, Երևան, 1964, էջ 369: *К. А. Мелик-Оганджаян*, Еще раз о национальности Мхитаря Гоша, автора «Судебника», տե՛ս՝ «К освещению проблем истории и культуры Кавказской Албании и восточных провинции Армении», կազմեց՝ Պարույր Մուրադյան, Երևան, 1991, էջ 191: «Մայրաքաղաք» եզրի այդ իմաստը կա նաև ԺԳ. դարի մասնագիր Ստեփանոս Օրբելյանի հեղինակած Պատմության մեջ, ըստ որի Շաղաղը է «մայր եկեղեցեաց եւ *մայրաքաղաք* ամենայն աշխարհին Սյունեաց» (ընդգծումը մերն է - Պ. Մ.). տե՛ս Ստեփանոս Օրբելյան, *Պատմություն Նահանգին Միսական*, Թիֆլիս, 1910, էջ 48:

«սպուդէների» (ակմիթների՝ անմիջների) միաբանության՝ վանք-մայրաքաղաքի հովվապետ հոր մասին է: Թարգմանիչներից Ռոբերտ Թոմսոնը հիշեցնում է, թե սպուդէները նույն «ակմիթներն» են, որոնց կարգին է դասվում ըստ Կորյունի նրա ուսուցիչ և հայերեն այբուբենի ստեղծող Մաշտոցը («ուստի եւ հրաման ելանէր՝ վայելուչ մեծարանօք գտորքն՝ Ակումիտ անուն կոչելոյ»)<sup>75</sup>: Սակայն, հանգուցյալ բանասեր Հայկ Պերպերյանի գնահատությամբ, Մաշտոցին «սպուդիտ» տիտղոս շնորհելը «կատարեալ անհեթեթութիւն է»<sup>76</sup>, ուստի հայագետները տարբեր սրբագրություններ են առաջարկել՝ «յարբունիս կոչելոյ» (Թորոսյան), «յարբունիս ուղարկելոյ» (Ալիմեան)<sup>77</sup>:

Անկախ Կորյունի բնագրի սրբագրելի լինելուց կամ ոչ, կարծում ենք՝ Խորենացու *Պատմություն Հայոց Մեծացի* «ըստ մանուրեան մայրաքաղաքացն սպուդէից» համեմատությունը հեղինակային բնագրում չի եղել, այլ ընդմիջարկվել է Է.-Ը. դարերից հետո: Վերևում արդեն ասացինք, թե *Պատմության* այդ հատվածը ավանդված է *Սուրբ Շուշանիկի վկայաբանության* համառոտ խմբագրության մեջ, սակայն առանց միջանկյալ նախադասության: Բարեբախտաբար, վկայաբանության այդ խմբագրության հին վրացերեն թարգմանության գոյության շնորհիվ մենք հնարավորություն ունենք ժամանակագրելու հիշյալ ընդմիջարկումը: Վրացերեն թարգմանությունը կատարված պիտի լինի վաղ միջնադարում, ուրեմն Խորենացուց քաղում կատարող հայերեն բնագիրը կազմվել ու շրջանառել է Նիկողայոս Մառի թվագրմամբ՝ «Է. դարի վերջից կամ Ը. դարի սկզբից ոչ ուշ»<sup>78</sup>:

Այսպիսով, մեր ձեռքի տակ կա ստուգելի բնագրական փաստ, որով վստահաբար կարող ենք ասել, թե *Սուրբ Շուշանիկի վկայաբանությունը* համառոտողի ապրած տարիներից առաջ՝ Ջ. կամ Է. դարերում Խորենացու *Պատմություն Հայոց Մեծացր* գոյություն ուներ, և վարքագիրը նրանից քաղումներ էր անում:

Ի դեպ, Խորենացու հեղինակային բնագրում, ինչպես երևում է, չի եղել նաև մեզ հետաքրքրող նախադասության շարունակության մեջ ավանդված

<sup>75</sup> *Կորին, Վարք Մաշտոցի*, բնագիրը ձեռագրական այլ ընթերցվածներով, թարգմանությամբ, առաջաբանով եւ ծանոթագրություններով ի ձեռն պրոֆ. դ-ր. Մանուկ Արեղյանի, Երևան, 1941, էջ 64-65:

<sup>76</sup> *Հայկ Պերպերեան*, Հայկական. «Ակումիտ անուն կոչելոյ», «Հանդես Ամսորեայ», 1968, թիվ 4-6, սյունակ 172-173:

<sup>77</sup> Անո, սյունակ 173-176. Հ. Յ. *Թորոսեան*, Քանի մը խնդրական կէտեր Կորեան գրքին մեջ, «Բազմավեպ», Նոյեմբեր 1931, էջ 473. Հ. *Ներսես վ. Ալիմեան*, *Կորին, Վարք Ս. Մաշտոցի*, Վիեննա, 1952, էջ 38 (=ԺԳ, 1<sub>14-15</sub>), 97:

<sup>78</sup> *H. Mapp*, էջ 19-20: Հմմտ. *ա. ծղջլածոյ*, էջ 0155-0156. *Մուրադյան, Սուրբ Շուշանիկի վկայաբանությունը*, էջ 114-115:

«երկաթապատք» բնութագրումը, որը նույնպես անհարիր է և չկա *Սուրբ Շուշանիկի վկայաբանության* բնագրում ու վրացերեն թարգմանության մեջ:

**Բ. «ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԲ ՀԱՅՐԱՊԵՏԱՅՆ ՀԱՅՈՑ ԱՐԻՍՏԱԿԻՍԻ, ՎՐԹԱՆԻՍԻ, ՅՈՒՍԿԱՆ, ԳՐԻԳՈՐԻՍԻ, ԴԱՆԻԷԼԻ»**

Խորենացուց քաղված մի քանի ծավալուն հատվածներ ենք գտնում *«Վկայություն սուրբ հայրապետացն Հայոց Արիստակիսի, Վրթանիսի, Յուսկան, Գրիգորիսի, Դանիելի»* վաղմիջնադարյան վկայաբանական երկում<sup>79</sup>, մասնավորապես՝ Պատմահոր Բ. գրքի ՂԱ., Գ. գրքի Բ., ԺԱ., ԺԳ., և ԺԴ. գլուխներից:

Գրիգոր Լուսավորչի որդու՝ Արիստակես Հայրապետի սպանությունն ու նրան փոխարինած Վրթանեսին վերակացու նշանակելը և Տրդատ արքայի փութաջանությունը ներկայացնելուց հետո, Խորենացին շարունակում է. «Վասն որոյ եկեալ գործակաք կողմանցն արեւելից [...] հիսիսոյ, վերակացուք հեռատր քաղաքին, որ կոչի Փայտակարան՝ ասեն ցարքայ. «Եթէ կամիցիս ուղղութեամբ վարել կողմանցն այնոցիկ ըստ այսմ հաւատոյ՝ առաքեա՛ նոցա եպիսկոպոս *ի զաւակէ* սրբոյն Գրիգորի, զի յոյժ փափագելով խնդրեն. եւ զհտենք հաւաստի, թէ ի հռչակեալ անուանէն Գրիգորի՝ ակնածեսցեն եւ ի նորին *զաւակէ՝ առնել զամենայն ըստ հրամանի»*: Այսմ հաւանեալ երանելին Տրդատ՝ տայ նոցա եպիսկոպոս զամնուկն Գրիգորիս, զերեց որոյն Վրթանիսի: Թէպէտ եւ յանլիութիւն ատուրցն հայելով՝ *պարականոն զիրն վարկանէր*, այլ տեսեալ զհոգոյն մեծանձնութիւն...»<sup>80</sup> (ընդգծումները մերն են – Պ.Մ.):

Վկայաբանության հայերեն բնագիրն ու մանավանդ նրա ԺԱ. դարի աթոյան գրչագրով ավանդված հին վրացերեն թարգմանությունը<sup>81</sup> հնարավորություն են տալիս այս հատվածում մի քանի սրբագրություն առաջարկել.

ա) «Կողմանցն արեւելից հիսիսոյ» արտահայտությունը ընկալվում է իբրև Փայտակարանի գտնված տեղի սահմանում, մինչդեռ նրան վերաբերում է «վերակացուք հեռատր քաղաքին» բնորոշումը: Ուստի նախորդ արտահայտությունը պիտի սրբագրել «կողմանցն արեւելից եւ հիսիսոյ», ինչպես եղել է վրացերենի համար հիմք ծառայած հայերեն բնագրում:

բ) «Առաքեա՛ նոցա եպիսկոպոս *ի զաւակէ* սրբոյն Գրիգորի» նախադասության «ի զաւակէ»ն բացորոշ աղավաղում է, որովհետև բացառական հոլովի

<sup>79</sup> Տե՛ս Մաշտոցյան Մատենադարանի 1456-ին գրված թիվ 933 ձեռագիրը:  
<sup>80</sup> Խորենացի (1913), էջ 259:  
<sup>81</sup> Հայերեն բնագրի եւ հին վրացերեն թարգմանության գիտական հրատակությունը տե՛ս օ. Տեյլեֆեթյան, գլջ. 62-68:

ցուցիչը վկայում է, թե Գրիգորի զավակներից մեկին ուղարկելու մասին է խոսքը, ուստի պիտի ունենայինք *«ի զաւակաց»*, ինչպես և կա վրացերենում:

գ) Եթե հետևելու լինենք Վկայաբանության վրացերեն տարբերակի բնագիր հայերենին, Խորենացու տեքստում առկա «առնել զամենայն ըստ հրամանի» բացատրությունը պիտի դիտվի իբրև ընդմիջարկություն:

դ) Առավել կարևոր է Խորենացու բնագրի ընդօրինակությունների ժամանակ տեղի ունեցած հետևյալ փոփոխությունը. մեզ հասած «պարականոն զիրն վարկանէր» արտահայտությունը հետևանք է «պատանոյն» բառի «պարականոն» ընթերցման, որին իբրև բացատրություն պիտի ավելացվեր «զիրն վարկանէր» (փաստը անկասկած էր համարում): Սրբագրությունը հաստատվում է Խորենացու Պատմության ՏԽ՝ ձեռագրական ու տպագրական խմբերի ընթացումներով և Վկայաբանության վաղմիջնադարյան վրացերեն թարգմանությունը՝ «թեպետ պատանին տարիքով (օրերով) լի չէր»: Խորենացու հեղինակային բնագրում պիտի լիներ *«Երանելի Տրդատ տայ նոցա եպիսկոպոս զմնուկն Գրիգորիս, զերեց որոյն Վրթանիսի՝ թէպէտ եւ յանլիութիւն ատուրցն հայելով պատանոյն, այլ տեսեալ զհոգոյն մեծանձնութիւն»*: Հետևաբար՝ սրբագրելի են առկա բոլոր թարգմանությունները:

Խորենացու Գ. գրքի Բ. գլուխը խմբագրելիս, Ստ. Մալխասյանը կասկածել է բնագրի նախնականությանը և տողատակին առաջարկել ենթադրելի ընթերցումը. «12 Տա ինքեամբ / Խ չիք ինքեան: Նախնական ձևն երևի եղել է. «կամ առ նովին ինքեամբ Քրիստոսի...» Ստ. Մ.»<sup>82</sup>: Քննարկվող Վկայաբանության հայերեն բնագիրը նույնությամբ ընդօրինակում է ընդմիջարկված-խաթարված տեքստը, մինչդեռ հին վրացերեն թարգմանության հիմք ծառայած հայերեն օրինակում *«այնուիկ ի հնուն կամ նորին ինքեան Քրիստոսի Աստուծոյ մերոյ զարկուցեալ Հրեայքն»* հատվածն ամբողջությամբ բացակայել է, ուստի շարադրանքն ավելի հստակ է և անխաթար: Դժվարանում ենք ասել՝ թարգմանչի ձեռքի տակ Վկայաբանության ա՛յլ տարբերակ է եղել, թե՞ նա ինքն է կոտակել խաթարումը և կրճատել ընդմիջարկումը: Բոլոր պարագաներում՝ այժմ Խորենացու այդ հատվածը սրբագրելու համար բնագրական հիմք ունենք:

Սրբագրելի տեղիներ է հուշում Վկայաբանության հաջորդ պարբերությունը ևս: Հանդիպադրենք այդ հատվածները.

*Խ ո ր ե ն ա ց ի*                                      Վ կ ա յ ա բ ա ն ո յ ը ու ն  
Իսկ յետ լնլոյ հնգետասան ամաց      Իսկ յետ լնլոյ հնգետասան ամի  
եպիսկոպոսութեան մեծին Վրթանայ՝      եպիսկոպոսութեան մեծին Վրթանի-

<sup>82</sup> Խորենացի (1913), էջ 258:

փոխի յաշխարհես յերրորդ ամի Տիրանայ: Եւ ի հրամանէ նորին տարեալ հանգուցանեն ի գեղն Թորոյան, *իբրու մարգարեական ակամբ հայեցեալ՝ որ զկնի բազում ժամանակաց եւ հօրն ի նոյն տեղոց հանգուցան նշխարք:* Եւ յաջորդէ զաթոռն Յուսիկ որդի նորին ի չորրորդ ամին Տիրանայ, յոյժ հետեւող եղեալ հարցն առաքինութեան<sup>83</sup>:

Կարծում ենք, ընդգծված դրվագը կրճատելու ենթակա չպիտի լիներ՝ եթե այն կար Խորենացու հեղինակային բնագրում: Ինչպես երևում է, Ե. դարի պատմիչ Ագաթանգեղոսի երկի մասն, Խորենացու գործը ևս հետագայում ոճական - գեղարվեստական որոշ վերամշակում է ապրել: Վկայաբանության վրացերեն թարգմանության լրացուցիչ տարբերությունը «հնգետասանի» փոխարեն «յեթօտասան» է (հետևանք՝ Ե-Է շփոթի):

Ընդմիջարկությանը պիտի բացատրել Խորենացու Գ. գրքի, ԺԳ. գլխի սկզբի «ամբարիշտն Յուլիանոս» արտահայտության մեկնաբանությունը՝ «ուրացաւ նա զԱստուած և պաշտեաց զկուռս», որ չկա Վկայաբանության քաղած դրվագում: Անհասկանալի է նաև «յարոյց հալածանս եւ խռովութիւն ի վերայ եկեղեցոյ» արտահայտության «եւ խռովութիւն» լրացումը:

Վկայաբանության շարունակությունը նույնությամբ կրկնում է Խորենացու «Վկայութիւն Սրբոյ Յուսկանն եւ Դանիէլի» գլուխը (Գ. գրքի, ԺԳ.)<sup>85</sup>: Ունեցած տարբերություններից համեմատաբար կարևորը նահատակվող Դանիել Ծերունի քահանային Սուրբ Գրիգորի «եւ հիւպերետ» (Կորնթոս, այսինքն՝ «ծառայ»), «սպասաւոր», «փոքրատոր») լինելու հիշատակության բացակայությունն է, որ չկա նաև Խորենացու բնագրի 1699-ին ընդօրինակված ձեռագրում<sup>86</sup>: Եթե նախնականը Վկայաբանության տարբերակն է, ապա հիշյալ փոխառյալ բառի հնագույն խորենացիական վկայությունը պիտի նկատել անգո:

Այսպիսով, մինչև Է.-Ը. դարերը Ագաթանգեղոսի<sup>87</sup> և Խորենացու հեղինակած Պատմություններից քաղածո դրվագների հարատուով կազմված *Վկայաբանութիւն սուրբ հայրապետացն Հայոց Արիստակիսի, Վրթանիսի, Յուսկան,*

<sup>83</sup> Նույն, էջ 269:  
<sup>84</sup> օ. ՏՃՂԵՏԺԳ, նշվ. աշխ., էջ 67:  
<sup>85</sup> *Խորենացի* (1913), էջ 272:  
<sup>86</sup> Նույն:  
<sup>87</sup> *Պարույր Մուրադյան, Ագաթանգեղոսի Հին Վրացերեն Խմբագրությունները*, Երևան, 1982, էջ 112-123:

*Գրիգորիսի, Դանիէլի* կարճառոտ երկը և նրա վրացերեն թարգմանությունը բնագրական հիմքեր են տալիս քննարկելու այդ պատմիչների երկերի առանձին դրվագների նախնականության խնդիրը և իրական ընթերցումներ առաջարկում նրանց սրբագրության համար:

Մենք այստեղ արծարծեցինք միայն երկու վկայաբանության ընձեռած ընթերցումները, մինչդեռ կան և ուրիշները, որոնց խորենացիագիտությունը դեռևս չի դիմել՝ Պատմահոր աշխատությունը հետագա ընդմիջարկություններից ու վերամշակում-փոփոխություններից քայլ առ քայլ ազատելու համար:

Այս մարզում խորենացիագիտության դանդաղումը ամենևին արդարացում չունի, որովհետև Խորենացու երկից Ժ. դարի պատմիչ Հովհաննես Կաթողիկոս Դրասխանակերտցու *Պատմության* մեջ պահպանված վկայակոչական հատվածների համեմատությունը Պատմահոր ձեռագրական երկու խմբերի (Ա և Տ) ընթերցումներին հիմք են տվել Մ. Աբեղյանին եզրակացնելու, թե՛ «Յոզիաննես Կաթողիկոսի ձեռքն եղած օրինակը իր մեջ ունի թե՛ Ա և թե՛ Տ խմբերի ընթերցումներ» և թե նույն օրինակը «ոչ Ա խմբին է պատկանում և ոչ Տ խմբին. այլ դա հաւասարադաս է Ա եւ Տ խմբերի ընդհանուր մայր օրինակին»<sup>88</sup>: Գրեթե նույն արդյունքն է արձանագրել և Ն. Ալիյանը՝ Խորենացու ընթերցումները համեմատելով Անանիա Շիրակացուն վերագրված *Ժամանակագրության*<sup>89</sup> հեղինակի մոտ եղած քաղումներին, ապա և Թ.-Ժ. դարերով թվագրվող կրկնագիր բնագրի մեկ էջը վերծանել-հրապարակելիս<sup>90</sup>:

Մեր քննարկած վարքագրական բնագրերը ժամանակագրերն նախորդում են և՛ Դրասխանակերտցուն, և՛ կրկնագիր պատառիկին. նրանք կարող են ժամանակակից համարվել Անանուն ժամանակագրին, ուստի նրանց ընձեռած բնագրական սրբագրությունները վերաբերում են Ալիյանի կողմից այսպես կոչված «ընդհանուր մայր օրինակին» և նյութ են տալիս նրա մատնանշած «քննադատական բոլոր պահանջմանց համաձայն» բնագիրը վերակազմելու համար:

\* \* \*

Անդրադառնալով Աթոսում իր հիմնական անելիքներին, Ն. Մառը գրում է. «Աթոս ուղևորվելու իմ նախանշած գլխավոր աշխատանքը հին վրացական ե-

<sup>88</sup> *Խորենացի* (1913), էջ Խ-ԽԱ:  
<sup>89</sup> «Անանուն Ժամանակագրութիւն», խմբագիր յօրինեալ յէ դարու ի հնագոյն ժամանակագրաց եւ հրատարակեալ ներածութեամբ եւ քաղդատութեամբք [ի ձեռն Հ. Բ. Սարգիսեանի], Վեներտիկ, 1904: Հմմտ.՝ Ա. Գ. *Արթաշահման*, Անանիա Շիրակացու մատենագրութիւնը, Երեւան, 1944, էջ 357-399:  
<sup>90</sup> Հ. Ն. *Ալիյան*, Մովսիսի Խորենացոյ..., «ՀԱ», 1914, թիվ 10-11, սյունակ 690-692:

կեղեցական մատենագրության, կարծում են, հիմնական հարցի շուրջ՝ հայ մատենագրության ազդեցության հարցը վրացականի վրա, նյութեր հավաքելն էր: Այն նշանակություն ունի ոչ միայն վրաց մատենագրության համար, այլև հայկականի, իսկ մասամբ էլ ասորականի համար: Ինչպես երևում է, առանց այս մասնավոր հարցի լուծման, առանց վրաց մատենագրության վրա հայոց ազդեցության չափերի ու որակի լուսաբանության ոչ մի հնարավորություն չկա պատկերացնելու գրական ու առհասարակ Ասորիքի, Հայաստանի ու Վրաստանի քրիստոնեական – մշակութային հաղորդակցման բնույթը»<sup>91</sup>:

Հիշյալ առումով առանձնապես նշանակալի եղավ Իվերոնի հավաքածոյի № 57 (=8) գրչագրի ուսումնասիրությունը: Այս ձեռագրում են պահպանվել, ինչպես բազմիցս նշվեց, մեր ներկա ուսումնասիրության առարկա հուշարձանները, նրանց թվում և «Ընթերցումն երկու սուրբ եղբայր տղաների՝ Դավթի և Տիրիճանի» (էջ 302v – 308r, այսուհետև կոչելու ենք՝ «Դավթի և Տիրիճանի վկայաբանություն») և «Վկայաբանություն թվով ինը սուրբ տղաների, որոնք սուրբ ավագանի մկրտությանը հոգևոր եղբայրներ էին, իսկ ծնված՝ յուրաքանչյուրն իր սնորհից» (էջ 173r – 175r, այսուհետև՝ «Կողացիների վկայաբանություն»): Մեզ հետաքրքրող «Դավթի և Տիրիճանի վկայաբանությունը» Ն. Մառը համարում է «անկասկած հայկական ծագման», որը «հայ գրականությունից անհետ չբացել է», իսկ «վրաց մատենագրությունը թարգմանաբար պահել է հայոց հին վարքագրության կորած հուշարձանը»<sup>92</sup>:

«Կողացիների վկայաբանության» կապակցությամբ գիտնականը այլ կարծիք է հայտնել, այն համարելով «թերևս ինքնուրույն վրացական ստեղծագործություն»<sup>93</sup>: 1903 թվականին նա հրատարակեց այս վկայաբանության բնագիրը, այն օժտելով ռուսերեն թարգմանությամբ ու կարճառոտ ներածականով<sup>94</sup>: Այստեղ ի մասնավորի նշվում է, որ հուշարձանը առանձնակի կարևորություն է ներկայացնում քրիստոնեության մուսքի հետ կապված հանգամանքներ քննելիս, քանի որ նրանում նկարագրված է քրիստոնեության և տեղական հեթանոսության պայքարը, սրբագրելով «քրիստոնեության» կայծակնային արագությամբ տարածվելու» մասին եղած ավանդական պատկերա-

ցումները: Ընդ որում՝ «Ակներև է, հուշարձանը (իմա՝ Կողացիների վկայաբանությունը - Պ. Մ.) շատ հին է, ինչը վկայվում է և լեզվի հնավանդությամբ ու գրչագրով (X դ.)»<sup>95</sup>:

Այսպիսով, ըստ ակադ. Ն. Մառի «Դավթի և Տիրիճանի վկայաբանությունը» թարգմանություն է հայերենից, իսկ «Կողացիների վկայաբանությունը»՝ թերևս ինքնուրույն վրացական ստեղծագործություն:

Ինչպես ասացինք, 1902 թ. Աթոսի վրաց մայրավանքում պրպտումներ էր կատարում պրոֆ. Ա. Խախանաշվիլին: Նրա հանձնարարությամբ ընդօրինակված վարքերից է նաև «Դավթի և Տիրիճանի վկայաբանությունը»<sup>96</sup>: Ա. Խախանաշվիլին ևս կարծում է, որ սույն երկը թարգմանություն է հայերենից, «չավանդված հայերեն բնագրով»<sup>97</sup>: Նոր և ուշագրավ է Ա. Խախանաշվիլու այն դիտողությունը, թե հայերեն բառերի առատությունը, ոչ հարթ ոճն ու խառնիխուռն ուղղագրությունը վկայում են, որ «այդ վարքերը (սուսքը հիշյալ № 8 ձեռագրում եղածների մասին է – Պ. Մ.) հայերենից վրացերեն են թարգմանել վրացերենին ոչ կատարելապես հմտացած հայերը»<sup>98</sup>: Այս բնորոշումը, հարկավ, վերաբերում է նաև մեզ հետաքրքրող «Դավթի և Տիրիճանի վկայաբանությանը»:

Ինչպես արդեն նկատեցինք, ո՛չ Ն. Մառը և ո՛չ էլ Ա. Խախանաշվիլին արժարժվող բնագրերի հետ կապված հարցերը հաստիկ քննության նյութ չեն դարձրել:

«Դավթի և Տիրիճանի վկայաբանության» համեմատաբար հանգամանալից բնագրագիտական քննություն կատարել է պրոֆ. Իվ. Ջավախիշվիլին<sup>99</sup>: Նրա կարծիքով հուշարձանը թարգմանական է, գրված VIII դարից ոչ շուտ և վրացերենի թարգմանված IX դարին մոտիկ շրջանում<sup>100</sup>, ընդ որում՝ «այս հուշարձանը գրեթե ոչ մի պատմական արժեք չունի»<sup>101</sup>: Իվ. Ջավախիշվիլին գտնում է նաև, որ Դավթի ու Տիրիճանի և Կողացի մանկանց վկայաբանությունների միջև որևէ առնչություն–ընդհանրություն չկա և որ «Կողացիների վկայաբանությունը» թարգմանական լինելու նշաններ չունի»<sup>102</sup>: Արձանագրելի է, սակայն, որ գիտնականը մնամ եզրակացության է հանգում առանց բնագրագիտական անհրաժեշտ վկայակոչումների, մի բան, որ բնորոշ չէ նրա հիշյալ աշխատության մյուս հատվածներին:

<sup>91</sup> *H. Mapp*, Из поедзки..., стр. 10.

<sup>92</sup> «Որ վրացերեն տեքստը ներկա դեպքում սովորական թարգմանություն է հայերենից,- գրում է Մառը,- դրանում համոզում են ինչպես բառազանձային ու ոճական հայկաբանությունները, այնպես էլ հուշարձանի իսկ բովանդակությունն ու շարադրանքի եղանակը, ի միջի այլոց՝ դեպքերի թվագրումը ըստ Հայաստանին տիրապետած օտարերկրացի թագավորների ու Հայոց կաթողիկոսների» (*H. Mapp*, Из поедзки..., стр. 21).

<sup>93</sup> Նշվ. աշխ., էջ 16:

<sup>94</sup> *H. Mapp*, Мученичество девяти отроков колайцев. ТР АГФ, т. V, стр. 53-61.

<sup>95</sup> Նշվ. աշխ., էջ 54:

<sup>96</sup> «Метриалы по грузинской агиологии (по рукописям X века)», М., 1910, стр. 72-77.

<sup>97</sup> Նշվ. աշխ., էջ XXIII.

<sup>98</sup> Նշվ. աշխ., էջ XXIV.

<sup>99</sup> *ივანე ჯავახიშვილი*, ძველი სომხური საისტორიო მწვერლოდა, გვ. 32-38.

<sup>100</sup> Նշվ. աշխ., էջ 38:

<sup>101</sup> Ամդ:

<sup>102</sup> Նշվ. աշխ., էջ 37:

«Կողացիների վկայաբանության» հետ կապված խնդիրներ արծարծված են Իվ. Ջավախիշվիլու մեկ այլ աշխատության մեջ<sup>103</sup>, ուր այն համարվում է «շատ կողմերով ուշագրավ» հուշարձան, գրված IX դարից ոչ վաղ, սակայն մեկ-երկու անգամ խմբագրված-վերանայված: Գիտնականի եզրակացությանը, Վկայաբանությունը կարևոր աղբյուր է Վրաստանի պատմության, իրավունքի պատմության և եկեղեցական արարողության հին շրջանի պատկերի հետ կապված հարցեր լուսաբանելու համար: Վկայաբանությունը դիտվում է իբրև ինքնուրույն վրացական ստեղծագործություն:

Վարքագրական այս երկու հուշարձանների մասին այլ կարծիքի է ակադ. Կ. Կեկելիձեն<sup>104</sup>: Նա գտնում է, որ «Կողացիների վկայաբանության» մեջ ներկայացված պատկերը քրիստոնեության հնագույն շրջանի է, վեցերորդ դարից ոչ ուշ, որի վկայությունն են՝ ժամասացության խիստ պարզունակությունը, արարողության իմաստով *ժամորա* (շամობա) տերմինի գործածությունը, գետուն մկրտություն առնելը և այլն<sup>105</sup>: Կ. Կեկելիձեն արձանագրում է նաև, որ այդ երկու վկայաբանությունները խիստ աղերսվում են միմյանց, «ինչպես արտաքուստ, այնպես էլ բովանդակությամբ»<sup>106</sup>: Նույնական է նրանց ոճը, ընդհանուր է տերմինաբանությունը (օրինակ՝ եջջօ-խևի, Խօջջելօ-սուվելի, թօսջարօ-մթավարի), գործողությունը երկու հուշարձանում էլ նույն՝ Տայքի միջավայրում է տեղի ունենում, գրեթե ընդհանուր է և սյուժեն (մի դեպքում հարագատ եղբայրներ են, մյուսում՝ հոգևոր, երկուսում էլ մանկահասակ, երկուսում էլ հանուն քրիստոնեության նահատակվող, սպանողները՝ մերձավոր ազգականներ): Հետևաբար, «կամ երկուսն էլ ինքնուրույն վրացական ստեղծագործություն են, իններորդ դարից ոչ վաղ գրված..., կամ թե՛ երկուսն էլ ինքնուրույն հայկական ստեղծագործություններ են, վրացերենի թարգմանված իններորդ դարից ոչ շուտ...»<sup>107</sup>: Գիտնականը հակված է դեպի երկրորդ եզրակացությունը, ուստի կարծում է, որ «Դավթի և Տիրիճանի վկայաբանության» մեջ Հերակլ կայսեր անունը կարող է ընդմիջարկված լինել և վրացի թարգմանչի կողմից, իսկ մեկ այլ առիթով սույն երկը հիշատակում է վրաց թարգմանական վարքերի շարքում<sup>108</sup>: Կ. Կեկելիձեն նույնիսկ անհրաժեշտ է համարում նկատել, որ «առհասարակ Իվ. Ջավախիշվիլու դրույքները, թե այս երկու հուշարձանները չեն մերձենում

<sup>103</sup> *Օջանջ Ջաջախիշվիլու*, ժգեղօ կարտօղօ Նօսիտրօս ՄՄերղօբօ, տօ., 1945, ՅՅ. 61-66.

<sup>104</sup> *Կօրնջղօ Աթթղօթթ*, կարտօղօ լօիտրօթթրօսի օսիտրօս, Թ. I, տօ., 1960, ՅՅ. 516-520.

<sup>105</sup> Նշվ. աշխ., էջ 517:

<sup>106</sup> Նշվ. աշխ., էջ 518:

<sup>107</sup> Անդ:

<sup>108</sup> *Ե. Աթթղօթթ*, յթօղդօթթ..., Թ. V, ՅՅ. 123. Հմնտ. «յթօղդօթթ...», Թ. X, ՅՅ. 130.

միմյանց ոճականորեն ու բովանդակությամբ՝ թյուրիմացության արդյունք են»<sup>109</sup>:

Արծարծվող վկայաբանությունների կապակցությամբ բավականաչափ ինքնատիպ դրույք առաջադրեց պրոֆ. Ի. Աբուլաձեն, ըստ որի Տայքի աստիճանաբար վրացականացող հայ բնակչությունը «շահագրգռված էր հայոց վարքագրական հուշարձանների թարգմանության կողքին, գոյություն ունեցող ավանդությունների հիմքի վրա, ստեղծել տեղական, Տայքի հետ կապված նահատակների վկայաբանության երկեր (գրքեր), ինչպես և հիշատակ սահմանել (կարգել) այդպիսիներին իրենց եկեղեցում: Այսպիսի գործունեության արդյունք պետք է լինեն, մեր եզրակացությամբ, Դավթի և Տիրիճանի ու Կողացիների վկայաբանության երկերը»<sup>110</sup>: Նա բերում է մի շարք բառ-տերմիններ, որոնք ընդհանուր գործածություն ունեն այս վարքերում և բնորոշ չեն նույն միջավայրում հայերենից կատարվող թարգմանություններին, իսկ որ այդ երկու հուշարձանն էլ *քաղկեդոնական հայերի* ստեղծագործություն են՝ ապացուցում է «Դավթի և Տիրիճանի վկայաբանության» մեջ պահպանված ակնարկումներով. եղելությունը թվագրվում է ըստ հայոց թագավորի ու կաթողիկոսի, Ներսեսը կոչված է «սուրբ հայր մեր» և այլն<sup>111</sup>: Բայց միաժամանակ՝ «թե Դավթի և Տիրիճանի վկայաբանությունը, շարունակում է գիտնականը, հայերենի թարգմանություն ներկայացնել, ապա, անկասկած, բնագրի ազդեցությամբ այստեղ էլ ինչ որ մի տեղ ի հայտ կգար առանց թարգմանության թողած որևէ հայերեն տերմին»<sup>112</sup>: Նույն միջավայրում ու շրջանում է ստեղծվել նաև «Կողացիների վկայաբանությունը». «նրանց գոյացումը IX դարի կեսերից է հնարավոր, Տայքի այն հայ բնակչության ծոցում, որը վրացիների հետ դավանական կապի մեջ էր գտնվում և, ինչպես երևում է, վրաց մշակույթի այնպիսի մեծ ազդեցություն է եղել, որ հայերենի մատենագրության հուշարձանների տարածման համար դրանք (խոսքը թարգմանական մյուս երկերի մասին է - Պ. Մ.) վրացերենի են թարգմանել և միաժամանակ՝ սեփական ստեղծագործությունն էլ (նկատի ունի մեզ հետաքրքրող երկու վկայաբանությունները - Պ. Մ.) այդ նույն լեզվով շարադրել»<sup>113</sup>:

Այսպիսով, Ի. Աբուլաձեն մերժում է Ն. Մառի, Իվ. Ջավախիշվիլու և Կ. Կեկելիձեի վարկածը, «Դավթի և Տիրիճանի վկայաբանության» թարգմանական

<sup>109</sup> *Ե. Աթթղօթթ*, ժՅ. կարտ. լօիտ. օսիտ., I, 518. Մեծ. 2

<sup>110</sup> *Օղօս Աթթղօթթ*, կարտօղօ լօիտօղօ լօիտրօթթրօղօ յրտօյրտօթթ IX-X ՆՆ-Մօ, ՅՅ. 064.

<sup>111</sup> Անդ:

<sup>112</sup> Նշվ. աշխ., էջ 067:

<sup>113</sup> Նշվ. աշխ., էջ 070:

լինելու վերաբերյալ, բայց ընդունում է Կ. Կեկելիձեի եզրակացությունը, որ այս և «Կողացիների վկայաբանություն» երկերը նույն միջավայրի ծնունդ են, միմյանց խիստ աղերսված, դրանք համարելով հայ քաղկեդոնականների միջավայրում ստեղծված՝ սկզբնապես իսկ վրացալեզու, ինքնուրույն երկեր<sup>114</sup>:

Պրոֆ. Ի. Աբուլաձեն, ինչպես երևում է, հետագայում որևէ չափով չի վերանայել իր առաջադրած հիմնական դրույթը, ուստի այդ վկայաբանությունների բնագրերը գետնողված ենք գտնում 1964 թվականին նույն գիտնականի ղեկավարությամբ ու խմբագրությամբ լույս տեսած «Հին վրացական վարքագրական մատենագրության հուշարձանների» առաջին հատորում, որ ամփոփված են բացառապես ինքնուրույն վրացական երկերը<sup>115</sup>:

Այսպիսին է վարքագրական այս երկու ուշագրավ հուշարձանների ուսումնասիրության և հրատարակության պատմությունը<sup>116</sup>: Ինչպես տեսնում ենք, նրանց գնահատության խնդրում տարակարծությունները բավական շատ են, մանավանդ՝ թարգմանական թե ինքնուրույն լինելու հարցում: Պատճառն այն է, որ բնագրերն ուսումնասիրող կամ հրատարակող գիտնականներին չի հաջողվել մատնացույց անել բնագրագիտական այնպիսի կովաններ, որոնք վճռական նշանակություն ունենային հիշյալ խնդիրը պարզաբանելու: Ստորև կհամոզվենք, որ այդպիսի չնկատված կովաններ այնուամենայնիվ կան: Բայց մինչև այդ անհրաժեշտ է հիշեցնել, որ երկու վարքագրությունների միջև ակադ. Կ. Կեկելիձեի նկատած ընդհանրությունները անհերքելի փաստեր են, իսկ պրոֆ. Ի. Աբուլաձեի վկայակոչված նույնական տերմինների գործածությունը խոսում է դարձյալ ի նպաստ Կ. Կեկելիձեի եզրակացության: Կարելի էր լրացուցիչ փաստեր վկայակոչել (օրինակ՝ նույն «Պեղեղ» – կարել, կարողանալ բայի խոնարհման հետ կապված վրիպումը երկու տեքստերում<sup>117</sup> ձևեր – խաղ, խաղալ տերմինի գործածությունը<sup>118</sup> և այլն), սակայն ընդհանրությունն այնքան ակներև է և այնպես հիմնավոր ապացուցված, որ նոր պրպտում ծավալելու անհրաժեշտություն չկա: Կ. Կեկելիձեի խոսքերով ասած՝ կամ *երկու*

<sup>114</sup> Գրքի հավելվածում Ի. Աբուլաձեն հրապարակել է հիշյալ երկու վկայաբանությունների բնագրերը, ինչպես նաև Դավթին և Տիրիմանին ձեռնած միջնադարյան ներքողյանը (նշվ. աշխ., էջ 178-183, 184-186, 199-201):

<sup>115</sup> «ძველი ქართული ავთოგრაფიული ლიტერატურის ძეგლები», I, დახაბეჭდად შოაშხაძეს ივ. აბულაძემ, ნ. ათანელიშვილმა, ნ. გოგუაძემ, ლ. ქაჯაიათ, ც. ქურციკიძემ, ც. ჭანკვიციანი და ც. ჯღამიათ, ილია აბულაძის ხელმძღვანელობითა და რედაქციით, თბ., 1963, გვ. 183-185, 186-191, Աკოხიტის «ძეგლები».

<sup>116</sup> «Կողացիների վկայաբանությունը» պրոֆ. Դ. Լենգի կողմից թարգմանվել է անգլերեն (տես նրա՝ *Lives and Legends of the Georgian Saints*, London (1956), էջ 40-43):

<sup>117</sup> «ძეგლები», I, 185<sup>11</sup>, 186<sup>43</sup>

<sup>118</sup> Նշվ. աշխ., էջ 184- 187<sup>35</sup>:

*հուշարձանն էլ թարգմանական են, կամ երկուսն էլ՝ ինքնուրույն վրացական:* Որ այս վկայաբանությունների հեղինակը հայագի է և «նկատի ունի անկասկած հայերից բաղկացած ընթերցող կամ ունկնդրող շրջան» նույնպես ապացուցված է<sup>119</sup>, ուստի մեզ մնում է ճշգրտել՝ այդ գործերը սկզբնապես հայերե՞ն են գրվել, թե՞ վրացերեն:

Պրոֆ. Ի. Աբուլաձեն, ինչպես ասվեց, երկուսն էլ համարում էր վրացերեն գրված, վկայակոչելով հետևյալ կովանները.

ա) «Դավթի և Տիրիմանի վկայաբանության» հեղինակը ապրել է 860 թվականից ոչ շուտ, տայեցի է եղել, հետևաբար և՛ երկարակ: Եթե միաբնակի ստեղծագործություն լիներ, ապա վկայաբանությունը ընդունելի կլիներ Հայոց եկեղեցու համար, իսկ նրա հետքը միջնադարյան ժողովածուներում ինչ-որ կերպ կպահպանվեր: Մինդեռ Վրաց եկեղեցին հիշատակի օր է սահմանել, շարականներ ձոնել:

Նախ դիտենք, որ այս երկու վկայաբանությունների հեղինակի երկարակ լինելու մասին *ոչ մի* դրվագ կամ ակնարկ չկա, ուստի Ի. Աբուլաձեն իր վարկածն առաջադրել է խիստ թեական ձևով, քիչ հետո ավելացնելով՝ «դավանական ինչ շրջանից էլ եղած լինի»<sup>120</sup>: Այնուհետև՝ հեղինակի տայեցի լինելը, ինչպես այժմ պարզված է, երկարակ համարելու բավարար հիմք չէ, քանի որ Տայքում միաբնակ հայեր կային ոչ միայն IX, այլև X-XI դարերում, որի լավագույն ապացույցը Բոյիլասի կտակում եղած հիշատակություններն են<sup>121</sup>: Սակայն եթե անգամ ենթադրենք, թե այս վկայաբանությունների հեղինակը իրոք հայ-քաղկեդոնական է, հիշյալ պարագան դարձյալ վրացերենով ստեղծագործելու երաշխիք չէ, քանի որ մատենագրության պատմությունից բավականաչափ փաստեր են հայտնի՝ երկարակ հայոց շրջանում հայալեզու գրականության գոյության մասին<sup>122</sup>:

Ինչ վերաբերում է սրբերի հիշատակը եկեղեցում կարգված չլինելուն, ապա, կարծում ենք, այլ բացատրություն պետք է փնտրել. VIII-IX դարերից ար-

<sup>119</sup> *Օ. Աբուլաձե*, նշվ. աշխ., էջ 064:

<sup>120</sup> Նշվ. աշխ., էջ 065:

<sup>121</sup> Տես *Հ. Բարթիկյան*, Եվստրափիոս Բոյիլասի կտակը (1059 թ.) էջ 393-429:

<sup>122</sup> Տես *Ն. Ալիևնան*, Սիմեոն Պղնձահանցի և իր թարգմանությունները վրացերեն, Վիեննա, 1951, էջ 224-266: Հմմ. *Հ. Բարթիկյան*, «Narratio de rebus Armeniae», հունարեն թարգմանությամբ մեզ հասած մի հայ-քաղկեդոնական սկզբնաղբյուր, «Բանբեր Մատենադարանի» № 6, էջ 457-470: Հմմտ. *Պ. Մուրադյան*, Վրացերեն արձանագրությունները Հայաստանում (Պղնձահանց): «Լրաբեր», 1973, № 1, էջ 39-58: *Վ. Հարությունով* - *Ֆիդանյանի* «Повествование о делах армянских. VII век. Источники и время» (Մ., 2004) գրքում փորձ է արվում ապացուցելու, որ Narratio-ն սկզբնապես հունարեն գրված գործ է, սակայն չեն բերվում այդ վկայող բնագրական կովաններ:





մանությունը կատարված պիտի լինի IX-X դարերի միջոցին: Մակայն դիտելի է, որ այս երկու հուշարձանը մասամբ տարբերվում են համաբնույթ մյուս թարգմանություններից (մանավանդ որոշ տերմինների հետևողական գործածությամբ), իսկ սույն պարագան թերևս այլ թարգմանչի գոյություն է հուշում, այն է՝ ոչ անպայման հայ-քաղկեդոնական, ինչպես մյուսների դեպքում է:

Մեզ հետաքրքրող վկայաբանությունների հրատարակիչները գոհացել են մի քանի ուղղագրական վրիպակների սրբագրումով կամ արձանագրումով, չնկատելով «Դավթի և Տիրիճանի վկայաբանության» բնագրի երկու կարևոր խաթարում, երբ շարադրանքը անսպասելիորեն ընդհատվում է: Ահա այդ հատվածը.

... և մայրիցս Խոլո  
ամբարձրեալ մտաջարի օջի Լուսինոսա  
և Եղևալ յերթոյորտ տշևոտ  
մտաճա մաս Նյեա ցրօալ մալալա, և  
ՐաժաժմՅա օնօլա յրի օջի և  
Գլուսնեճա-յոմՅա միՅեՅի օջի  
Մջոտոսա միս. և ցիտարՅա  
օնօլա յրի օջի Մեջլեթբայլի և  
յրիտայցի մատի մՄջնարը [ . . . . .  
. . . . . ]. և Եթ յեջրա միօՄի  
Եթ օջի ամբօնօնա միս [ . . . . .  
. . . . . ], Րոմբլօ-օջի օյթն  
Մջիլտա միստա Նյեա ՆեՅրիսա  
տայնցեստա. և Եղևալ Եղևալ  
օջի տայնց և Եղևալ թաժա:

Եվ Դիվրի իշխանն անմիջապես իսկ ձին թամբեց ու իր գորբերի հետ բարձրացավ այդ հույժ բարձր լեռը, որպեսզի գոնե տեսնի [այնտեղի] գորբն ու հասկանա իրարանցման պատճառը: Ու երբ գորբը տեսավ սարսափահար, իսկ նրանց գորպայետը տրտում՝ [ . . . . . ]: Եվ ահա, [ . . . . . ] հասավ երանելի Թագինեի որդիների հանդես կատարված խոսքի պարբեր: Վեր կացավ կինն այդ Թագինե և փութաց սար ի վեր:

Դիվրի իշխանը գնացել է իրարանցման պատճառը հասկանալու և երբ տեսել է գորբ ու գորպայետ, սպասելի էր՝ կռահել է եղելությունը: Պարզ ի պարզ այդ է թեևադրում կիսատ մնացած նախադասության շարադրանքը: Շարունակության մեջ հին վրացերենում պիտի ունենայինք [ցլուսնեճա-յո կմնօլօ օջի մատի], որ հայերեն կլինի՝ «հասկացավ նրանց կատարածը»: Երկայուն գրչության պարագայում մեր վերականգնածը մեկ տող է կազմում, իսկ որ ձեռագրերի ընդօրինակության միջոցին մնան բացթողումներ հնարավոր են՝ կարելի է հավաստել տասնյակ օրինակներով: Ի դեպ, կարելի է նույնիսկ մանրամասնության մեջ մտնել՝ բացթողման պատճառը իրար հարող տողերի նույնահանգ վերջավորությունն է. հաջորդում և Եթ յեջրա միօՄի Եթ օջի:

Վկայակոչված հատվածում մյուս բացթողումը վերաբերում է տեղանվանը. սպասելի էր, որ բնագրում ասվեր, *թե բորը գնաց հասավ* այն տեղը. ուր ասարում էր Թագինե, որանով իսկ բնական կլիներ Թագինեի «վեր կենալ» ու «ասար ի վեր փութալը»: Քանի որ նախորդ հատվածներից հայտնի է այդ բնակավայրի անունը, ուստի, կարծում ենք, պիտի ունենայինք ևս Եթ յեջրա միօՄի Եթ օջի ամբօնօնա միս [ցլուսնեճա], Րոմբլօ-օջի (իմա՝... բորը գնաց հասավ *Վաժան*):

Այսպիսի խաթարումները կարող են պատճառաբանվել հուշարձանի՝ մինչև Աթուհի № 8 ձեռագիր հասնելը գեթ մեկ-երկու անգամ ընդօրինակված լինելով կամ գաղափար օրինակի՝ ինչ-որ չափով հնացած-մաշվածությամբ<sup>135</sup>: Երկու դեպքում էլ իրերի փաստական վիճակը մեզ կարող է առաջ տանել մինչև VIII-IX դարերը: Բայց դա թարգմանության ժամանակին է վերաբերում և ոչ հայերեն բնագրերի ստեղծմանը: Վերջինիս հետ կապված խնդիրները արծարծելիս որոշ կռվածներ է ընձեռում վկայաբանություններում նկարագրված առանձին դրվագների բնությունը. «Դավթի և Տիրիճանի վկայաբանության» սկզբում ասվում է, թե նահատակությունը տեղի է ունեցել այն ժամանակներում, երբ աշխարհակալ թագավորներ էին Հունաստանում՝ Հերակլ արքան, Հայաստանում՝ Արշակը և Պարսկաստանում՝ Վռամշապուիը: Հայտնի է, որ Արշակի գահակալության տարիներն են 345-367/8 թվականները, Վռամշապուիինը (եթե դա Շապուհ Բ-ն է)՝ 309-379, Հերակլինը՝ 610-641: Հաջորդ պարբերության մեջ հիշատակվում է և Հայոց կաթողիկոսը՝ Ներսես Մեծ (353-373): Ներսես դեպքում Հերակլի հիշատակությունը պարզ անախրոնիզմ է: Արշակի, Ներսեսի ու Վռամշապուիի (իմա Շապուհ Բ) ժամանակակից բյուզանդական հինգ կայսր է եղել (Կոստանդ, Հովիմանոս Ուրացող, Հովբիմանոս, Վաղենտինոս, Վաղես), բայց ոչ Հերակլը: Քանի որ երկու վկայաբանություններում էլ խոսքը տեղական հեթանոսության ու նորամուտ քրիստոնեության պայքարի մասին է, ուրեմն սխալ կարող է լինել Հերակլի անվան հիշատակությունը և ոչ չորրորդ դարի վերոհիշյալ իրական անձնավորությունների: Բայց հենց այս անախրոնիզմն էլ վկայում է (հիարկե, եթե այն հետագա կամ թարգմանության ժամանակ կատարված ընդմիջարկություն չէ), որ «Դավթի և Տիրիճանի վկայաբանությունը» (հավանաբար և «Կողացիների վկայաբանությունը») գրված պիտի լինի Հերակլի թագավորության տարիներից (610-641) հետո: Այդ, ինչպես նկատել է Իվ. Ջավախիշվիլին, փաստվում է և մեկ այլ հիշատակությամբ. վկայաբանության վերջում Ներսես Մեծը դառնում է «մեր սուրբ հայր Ներսես Հայոց կաթողի-

<sup>135</sup> Ընդօրինակության միջոցին տեղի ունեցած վրիպումով կարելի է բացատրել ձեռագրում առկա յօժեջնի ընթերցումը: Ըփոթված են մրզովանի Ե և Յ գրերը:

կոս», որը «Իշխանից տեսնում էր հրաշքը», «փութով հասնում Դիվրի»: *Իշխանից* գնացողը արդեն Ներսես Տայեցին է (641-661): Ինչ խոսք, միայն VII դարի երկրորդ կեսից հետո կարող էին հիշատակվել այս երկու անձինք՝ Հերակլն ու Ներսեսը: Եթե վկայաբանությունների հեղինակը ժամանակակից լիներ այդ երկուսին, կամ թեկուզ միայն Ներսեսին, ապա նրան չէր շփոթի Ներսես Մեծի հետ և ոչ էլ Հերակլին՝ Արշակի ժամանակակից կայսր կիռչակեր: Այդպիսի անտեղյակություն կամ անախրոնիզմ թույլ տալու համար նա հիշյալ դեմքերից գեթ 50-100 տարի հետո ապրած պետք է լիներ, որի աղբյուրը ժամանակակից իրականությունը չէ, այլ սերնդից-սերունդ անցած ավանդությունը: Անտեղի կլիներ ենթադրել, թե այս անհարթություններն առաջացել են թարգմանության ժամանակ կամ հետագա ընդօրինակությունների ընթացքում, քանի որ նման պարագայում որոշակի միտում էր ակնկալելի, ինչպիսին իրականում չկա: Կարծում ենք՝ սխալված չենք լինի, եթե եզրակացնենք, թե արժարժվող վկայաբանությունների հայերեն բնագրերի երևան գալը սպասելի է VIII դարից ոչ շուտ և ոչ ուշ քան IX դարը, երբ նրանք արդեն վրացերենի են թարգմանվել<sup>136</sup>:

Որ սույն վկայաբանություններն արժեքավոր են տեղական հեթանոսության և նոր մուսուլման գործող քրիստոնեության բախումներն ուսումնասիրելու առումով՝ արդեն նկատված է: Պատմական Հայաստանի «Տայոց աշխարհի» սահմաններում այդ շրջանում կատարված իրադարձությունների մասին այլուստ ամփոփ տեղեկություն քիչ ունենք, ուստի քննարկվող վկայաբանությունների հաղորդումները առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում: Պակաս արժեքավոր չեն նաև Տայքի պատմական աշխարհագրությանը (տեղագրությանը) վերաբերող տվյալները: Բասեսանի գավառի Օնկոմ (իմա՝ Օկոմի)<sup>137</sup> ավանում իշխող Վարդանի կինն ու գավակները, նրա մահվանից հետո, ապաստանում են «Կյուսիսային կողմ»- Տայոց աշխարհում, ազատվելով Բա-

<sup>136</sup> Իվ. Ջավախիշվիլին և Ի. Աբուլաձեն վկայակոչում են ժամանակագրական ցուցում պարունակող մեկ ուրիշ փաստ ևս, որ, մեր համոզմամբ, կեղևն լինել չի կարող: Նահատակության տեղում Դավթի ձեռքից գետին է ընկնում ճիպոտն ու «գեռան վրա մեծ ծառ դառնում: Եվ մնաց այդ ծառը *մոտ երկու հարյուր տարի*, ու ուխտավորները ի հիշատակ տարան»: Այս երկու հարյուր տարին հիշյալ գիտնականներն ընդունել են իբրև ցուցում և, ավելացնելով Ներսես Տայեցու գահակալության տարիների վրա, ստացել 860-ական թվականներ: Նման հաշիվը ամենևին հիմնավոր չէ, որովհետև այն կարող է սոսկ *երկար ժամանակի* գաղափարը շեշտելու ժողովրդական-վարքագրական եղանակ լինել: Բայց անգամ եթե հիշատակված *երկու հարյուր տարիներն* իրողություն ընդունենք, ապա այն գումարելու ենք նահատակության տեղի ունեցած ժամանակի՝ IV դարի վրա, որից հետո ծառը երկու հարյուր տարի գոյատևել է և ոչ՝ Տայեցու գահակալության, քանի որ վերջինիս հիշատակությունը պարզորոշ անախրոնիզմ է:

<sup>137</sup> Արիստակես Լաստիվերտցին *Օկոմի*-ն կոչում է «նեմ աւան», «մարդաշատ և ընչաւելտ» (Կ.Յուզբաշյանի հրատ., էջ 29, 102), հմմտ. *Ղուկաս Բնճիճեան*, Ստորագրութիւն իին Հայաստանայց (Մեծ Հայք), Վենետիկ, 1822, էջ 385-386:

սեանի գավառի մեկ այլ իշխանավորից՝ Թեղոսից: Թագինեն հաստատվում է Տայքի Վաժգան ավանում<sup>138</sup>, իրենց ազգական Վազգեն (բնագրում՝ Վահգեն) իշխանի մոտ: Ուշագրավ է, որ այս երեք իշխանների միջև էլ ազգակցություն-արյունակցություն կա, իսկ Վարդանն ու նրա կին Թագինեն «Փազավորական տոհմից էին»: Տայքի պատմության ապագա ուսումնասիրությունը պետք է պարզի՝ սրանք պատմական-իրական դեմքեր են, թե՞ վարքագրական հերոսներ (նույնը վերաբերում է Դիվրի կոչվող գյուղում նստող իշխանին): Արդյո՞ք նրանք բոլորը իրոք իշխաններ են՝ իրենց գործով, ինչպես վկայաբանություններում է ներկայացվում:

«Կողացիների վկայաբանությունը» այսքան լայն աշխարհագրական ընդգրկում չունի. նրանում խոսվում է միայն Կող գավառում (Տայքի գավառներից առաջինը), «Կուր կոչվող գետի ակունքի մոտ» գտնվող մի գյուղի մասին: Սակայն հենց այդ միակ բնակավայրի հիշատակությունն էլ հետաքրքրական է. «Աշխարհացոյց»-ում ասվում է, որ «...Տայք... ունի գաւառս ուր. Գւող յելից կուսէ, յորմէ բոխեն աղբիւրք գետոյն Կուրայ, ի *գեղջէն, որ ասի Կրի ակունք*»<sup>139</sup>: Վկայաբանության մեջ փաստորեն հենց այդ «Կրի ակունք – Կրակունք» գյուղն է հիշատակվում (*Կուր* կոչվող գետի *ակունք*), անվան կազմության թելադրանքով մի քիչ նկարագրական ձևով:

Մասնավոր քննության առարկա կարող են լինել և «Դավթի ու Տիրիճանի վկայաբանության» տեքստում հանվան հիշատակված որոշ գործիչներ: Հեղինակը, եղելության ժամանակը սահմանելիս, Հայոց կաթողիկոս Ներսես Մեծի հետ միաժամանակ վկայակոչում է *Աղամ Արագածոտնեցուն*: Վերջինս, դատելով հիշատակության հանգամանքներից, IV դարի Հայաստանի հոգևոր առավել նշանավոր գործիչներից մեկը պետք է լինի, որի մասին, ցավոք, տողերիս հեղինակին ուրիշ որևէ տեղեկություն հայտնի չէ: Անցուդարձի շտապած Ներսես Տայեցին (sic!) իր հետ բերում է քահանաներ՝ *Հովհաննես, Սահակ, Գրիգոր*: Ովքե՞ր են այս անձինք, իրո՞ք Իշխանում գործող քահանաներ: Եթե ելակետ ընդունենք Հ. Աճառյանի կազմած «Անճճանունների բառարանը», ապա *Թագինեն* անունը պիտի համարենք հայ մատենագրության մեջ չավանդված և սույն բնագրով միայն ներկայացող: Մասնավոր ուշադրության է արժանի *Տիրիճան* անունը: Բնագրում ստուգաբանորեն վկայվում է, թե այդպես են կոչել *հայերեն լեզվով* (շեօտս Եօթջեջծրօտս), իսկ «Արուեստ Դիոնիսեսայ Քերականի» երկի հայերեն թարգմանիչը հունարեն Թէօն «անուն ինչ քերդոցեալի» դի-

<sup>138</sup> *Վաժգան* տեղանունը ստուգաբանելի է իբրև *վիժ-ական-վժական-վաժգան* (վիժել-վիժան-разлив բառից, հմմտ. *Н. Адоца*, Армения в эпоху Юстиниана, Ереван, 1971, стр. 144-145):

<sup>139</sup> Տե՛ս *Մ. Տ. Երեմյան*, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 110:

մաց դնում է *Տիրիծան*, ակնհայտորեն ելակետ ունենալով նրա *տէր* բաղադրիչը<sup>140</sup> և «ցանկանալով հայկականացնել հունարեն անունը»<sup>141</sup>:

Թրակացու աշխատության հայերեն թարգմանության և Տայքում գրված վկայաբանության մեջ *Տիրիծան* սակավ գործածական անվան հիշատակությունը կարող է օժանդակ աղբյուր ծառայել թե՛ քերականության թարգմանության միջավայրը որոշելիս և թե՛ վկայաբանության հետ կապված հարցեր արծարծելիս: Կարելի է նույնիսկ վարկած առաջադրել, թե վարքի հեղինակը կամ վրացերենի թարգմանողը անձնանունն ստուգաբանելիս ծանոթ է եղել հիշյալ բացատրությանը<sup>142</sup>:

Վարքագրական այս երկու հուշարձաններում կան և այլ բնույթի նկատառելի վկայություններ. նրանցից մեկում, օրինակ, նյութեր կան ժառանգության իրավունքի, քեռու խնամակալության (avunculus), ապաստանության և այլ խնդիրների վերաբերյալ: Ազգագրության համար հետաքրքրական են խաչնարածությանը, մանկական խաղերին վերաբերող տեղեկությունները: Ի վերջո, երկու վարքերն էլ մանուկների մասին գրված կարճառոտ ու անպաճույճ պատմվածքներ են. նրանցից կարելի է գրականագիտական մակաբերումներ կատարել գործողությունների զարգացման, հոգեբանական պատճառաբանվածության, կերպավորման և նման այլ հասկացողությունների իմաստով: Թերևս կարելի է նյութեր հայթայթել և արարողության պատմության համար, բայց ներկա դեպքում այդ ամենի քննությունը մեր նպատակից դուրս է:

Ստորև թարգմանաբար հրապարակում ենք հիշյալ վկայաբանությունները, աշխատելով հարազատ մնալ բնագրին: Տերմինները փոխանցվում են հայերենի՝ ըստ ժամանակակից ու գրավոր վկայված համապատասխանությունների: Հատուկ անունները, բնական է, հայերենին ընտանի ձևով են տրվում, ինչպես եղել է նրանց սկզբնազգում: Որևէ նկատառում կամ տարակուսանք ունենալիս փակագծում տալիս ենք վրացերենի տառադարձությունը: Թարգմանությունը կատարված է վրացերեն տեքստերի վերջին հրատարակությունից:

*Պարտքս կատարած չեմ լինի՝ եթե անկեղծ երախտագիտություն չհայտնեմ զիրքս տպագրության պատրաստող Հրատարակչական բաժնին, մանավանդ Տ. Ղևոնդ քահանա Մայիլյանին: - Պ. Ս.*

<sup>140</sup> Տե՛ս *Н. Адонц*, Дионисий Фракийский и армянские толкователи, Пгд, 1915, стр. 16.

<sup>141</sup> *Н. Адонц*, նշվ. աշխ., էջ CLXXII. Անանուն մեկնիչը ընդունում է այդ ստուգաբանությունը (...ի տիրութենէ՝ Տիրիծան), իսկ Ստեփանոս Սյունեցին այն վկայակոչում է իբրև երկու անկատար գոյականներից կազմված բարդություն (անդ, էջ 142):

<sup>142</sup> Հմմտ. *Н. Марр*, [Рец. на кн.] Дионисий Фракийский и армянские толкователи, издал и исследовал Н. Адонц, "Х. В.", т. V, вып. 1, Петроград, 1916, стр. 60. Ի դեպ, այստեղ Ն. Մառը Տիրիծանին համարում է "армянский святой VII века"

ՎԱՐՔ ՍՐԲՈՑ

## 1. ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ՍՈՒՐԲ ԹԱԳՈՒՀԻ ՍԱՆԳՈՒԽՏԻ

Ա. Սուրբ Սանդուխտը Հայաստանի թագավոր Սանատրուկի դուստրն էր: Կույս էր և իր սպասավորների պատմածով հոժարությամբ ընդունեց Թադևոս առաքյալի քարոզած Կենաց Բանը: Հավատաց առ Տե՛ր Աստված կենդանի՝ արարիչ երկնի և երկրի, երկյուղածությամբ բաղձում էր առ [նա] և հավատավոր սրբությամբ կատարում [պատվիրանները]: Պատեհ ժամ գտավ և այցելեց Առաքյալին, մեծ հոժարությամբ նրանից լսեց Կենաց Բանը, որով իր անձն ազատեց թշնամու պատրանքներից և նախնայաց մոլորություններից, կամեցավ հաստատուն մնալ հավատքին և Քրիստոսով գերծ լինել փորձություններից:

Առաքյալն ասաց. «Զգուշ եղիր և բարով մարտիր քեզ նեղողներին ու լիկողներին, միտքդ առ Քրիստոսին և ապավինիր նրան, որպեսզի օգնական լինի ու զորացնի քեզ, ամոթով թողնի հանդուգին: Քաղցր մի համարիր այս աշխարհի սերը, որը այսօր կա, իսկ շուտով կոչնչանա ու անհետ կդառնա, այլ և ամրապնդվիր հավատով և սիրով, հույսով առ Աստված՝ որպեսզի չարը քեզ չմերձենա, և ոչ էլ սատանայական հնարքները խառնակեն հավիտենական ու անանց բարյաց հույսերդ, [Աստծո] սիրելիների հետ ուրախանաս այս աշխարհում [կրեիրք] չարչարանքների համար, որ հանուն Քրիստոսի գլխիդ են գալու»:

Բ. Այդ ժամանակ եկան հասան Հայոց ավագանիները և նրանց հետ՝ զորաց բազմություն, և զնացին դեպի ապարանք, ուր Առաքյալն էր: Նա դուրս եկավ, [խառնվեց] ավագանուն ու զնաց, նրանք չկարողացան տեսնել Առաքյալին: Շատ որոնեցին սուրբ Առաքյալին, բայց չգտան: Բռնեցին սուրբ Սանդուխտին և նրան ասացին. «Փոխանակ այնու, որ թողիր կուռքերը և անարգեցիր մեծն թագավոր քո հորը, զնացիր քրիստոնյաների Աստուծո հտեից՝ այսու ծանր-ծանր հարվածներով կվերջացնենք քեզ, քանզի անարգեցիր Հայոց երկիրը»:

Իսկ սուրբ Սանդուխտը աչքերը երկինք հանեց և աղաղակելով ասաց. «Տեր Հիսուս Քրիստոս, օգնության արի ինձ հասած

այս պատուհասի պաշին, կորով տուր ինձ Քո զորությամբ՝ մեռնելու Քո սուրբ անվան համար և այլոց հետ միանալու Քո սրբերի գնդին, նրանց թվին, ովքեր սիրեցին Քեզ և արժանացան աստվածությանդ, որոնք փառավորյալ են տիրությանդ առաջ»:

Սուրբ Առաքյալը ապարանք մտավ նրանց առաջ և զորացնում էր երանելուն ի Քրիստոս: Իսկ սուրբ Սանդուխտը աղերսում էր ու ասում. «Հայր իմ, մի՛ լքիր ինձ՝ մինչև կկատարեմ ընթացս»: Եվ Առաքյալն ասաց. «Զորացիր և այս է ահա կտեսնես Քրիստոսին, առ որը բաղձում էիր»: Իսկ այդ անհավատները չէին կարող տեսնել Քրիստոսի սուրբ վկային:

Սուրբ Սանդուխտին տարան այն տեղը, ուր սպանելու էին: Իրեն բռնողներին նա ասում էր. «Համբերեք մի պահ՝ աղոթեմ առ իմ տեր Աստված» և արտասովալից աչքերը հառեց դեպի երկինք և մրմնջաց. «Երկնավոր Հայր, Քո սիրելի Որդի, մեր տեր ու փրկիչ Հիսուս Քրիստոսով Հայիր մեզ երկնքից Քո սրբությամբ և Քո մարգասիրությամբ ողորմած եղիր իմ հանդեպ ու ընդունիր ինձ՝ աղախնիդ, հանուն սիրելի Որդուդ, հաճությամբ և արժանի արա Քո աստվածային լույսին, անասելի վայելչությանց, որ խոստացար քեզ սիրողներին»:

Գ. Ապա բաժանվեց սուրբ Առաքյալից, օրհնություն առավ նրանից և գնաց հասավ այն տեղը, ուր պիտի սպանվեր: [Դահլիճներին] ասում էր. «Վեր կացեք և կատարեք ձեր սատանա հոր կամքը», և կամավոր երկարեց պարանոցը: Իսկ զորականը քաշեց իր սուրը սրբին սպանելու, մինչդեռ խփեց դահճապետին ու սպանեց նրան: Ու երբ բարբարոսները այդ տեսան՝ առավել սաստկացան չարությամբ, բարձրացրին սրերն ու միմյանց հրմշտելով սպանեցին: Մինչ այդ Քրիստոսի սուրբ աղախինը աղոթում էր ու ասում. «Քրիստոս Աստված, ընդունիր ինձ հավիտենական հարկացդ մեջ, քանզի ցանկանում եմ, տեր, ելնել ի մարմնոց և Քեզ տեսնել ու ժառանգել Քո անպատմելի բարությունները. հանուն Քո սուրբ անվան ուրախ եմ չարչարանքներիս ու մահվան համար, որ փառավորի քո անունը, որով զորավիդ եղար հաղթելու ինձ հալածողներին: Ուստի Քոնն է հաղթանակը և Քեզ է վայել փառք հավիտյանս: Ամեն»:

Այդ պաշին պատանի ոմն խփեց սուրբ օրիորդի կրծքին, արյունն ու ջուրը, անուշահոտությունը հորդեցին, և անդեն ավան-

դեց իր հոգին առ Քրիստոս՝ Հոր, Որդու և Սուրբ Հոգու բարեխոստովանությամբ:

Հրո սյուն երևաց երկնից, երկնային զորաց շարժում ու ահեղ ձայն եղավ, որոնք օրհնում էին Աստծուն, իսկ լուսո սյունը երեք օր ու զիշեր մնաց նրա սուրբ մարմնի վրա: Եվ այդ օրվա ընթացքում շուրջ երեք հազար այր ու կին հավատքի եկան և չէին հեռանում այն տեղից, ուր գտնվում էին սուրբ վկա Սանդուխտի նշխարները:

Գիշերով եկավ Առաքյալը և հանուն Հոր, Որդու և Սուրբ Հոգու մկրտեց դրանք: Վերցրին սուրբ Սանդուխտի նշխարները և դրին նույն տեղում և սուրբ թագուհու հանգիստը աներևույթ արին:

Սուրբ Սանդուխտը վկայեցավ մայիսի հինգին՝ սուրբ Երրորդության բարեխոսությամբ, որին է փառք հավիտյանս հավիտենից: Ամեն:

## 2. ԽՈՍՔ ՍՈՒՐԲ ՈՍԿԻԻ ԵՎ ՆՐԱ ԸՆԿԵՐԱՑ ՎԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ա. Հունաց կողմերում գտա մեկ այլ տեղեկագրի՝ Տատիանոս անունով ուսումնասեր մի մարդու, որն ապրում էր Վաղենտիանոս կայսեր օրերում: Նա հույների մատյաններից մեկ բազում բաներ պատմեց. նրա գրութունները շատ են և այժմ մեզանում կան, և ինքս էլ բազմիցս կարդացել եմ: Նրա ճառերից տեղեկացա, թե Թադևոս առաքյալի աշակերտներից ոմանք տոհմով Քոնիվս (Գոնիկ) անուն մարդու գլխավորությամբ Առաքյալի վախճանից հետո գնացել են Հյուսիսային ինչ-որ լեռներ՝ Եփրատ գետի ափերին մոտ [գտնվող] մի կիրճի խառնարան, ուր սկիզբ է առնում գետն ու հասնում Ծաղկե կոչվող տեղանքը, և կարգավորներ դարձել, ուստի մինչև այսօր բնակավայրը կոչվում է Ծաղկոտք:

Այս մարդիկ գալիս են Արտաշես թագավորի առաջ և նրան պատմում Քրիստոսի աստվածության և կուռքերի մերժվածության մասին, թե՛ «ոչինչ են»:

Երբ թագավորը լսեց՝ անտեղի չհամարեց նրանց խոսքերը և ասաց. «Այդ ես լսել եմ, սակայն հույժ անպարապ էի պատերազմներից»: Եվ հրամայեց նրանց ուրիշ անգամ լսել:

Իսկ այդ սուրբ մարդիկ այնուհետև պատմեցին թագուհուն և նրա որդիներին, ինչը լսեցին թագուհու մոտ Հերեթից եկած մերձավորները, որոնց մտքերը Աստված պայծառացրեց՝ կենաց խոսքն ընկալելու: Իսկ այդ սրբերից քահանայության շնորհ ունեցող ինչ-որ մեկը երբ տեսավ նրանց ամուր հավատը, կես գիշերվա մոտ նրանց կանչեց գետափ և մկրտեց Քրիստոսի լույսով, իսկ նրանց անունները գրվեցին Կենաց գրքում:

Բ. Սաթենիկի որդին երբ այս լսեց՝ բարկությամբ ու մեծ վրդովմամբ լցվեց նրանց հանդեպ և հալածեց նրանց արքունի դռնից: Իսկ նրանք ուրախությամբ գնացին, և յուրաքանչյուրը նստեց իր մենաստան կացարանում: Իսկ այն մարդիկ, որոնց մտքերը Աստված բացեց, և ընկալեցին կենաց խոսքը՝ ընդունեցին և ջերմ հավատով հետևեցին սրբերին. օր-օրի գնում էին

նրանց մոտ ամրապնդվում հավատի հանդեպ: Այս մարդիկ փառավոր էին և անվանի, դասերով կարգավոր և հմուտ պատերազմական դորձերում:

Երբ թագավորի որդիներ Վնոնին (Վնոն) ու Վրոյին (Վրոյն) իմացան, թագավորը աղերսում էր նրանց հեռու մնալ Քրիստոսի երկրպագութունից: Մինչդեռ նրանք չանսացին և ոչ էլ հեթանոսության դարձի գալու հակվեցին, իսկ երբ տեղեկացան նրանց հավատի հաստատությունն ու անդրդվելիությունը, [մարդ] ուղարկեցին և մենաստաններից կանչեցին սրբերին: Հարկադրում էին նրանց խոսել այդ մարդկանց հետ՝ որպեսզի հեռանան Քրիստոսի հավատքից: Սակայն նրանք անսասան էին, այլև առավել ևս հաստատուն դարձան հավատին և գաղտնաբար զնացին: Եվ երբ հայտնի դարձավ նրանց սրտում եղածը՝ իբրև ակնառու և անձկելի աղամանդ, և սրբերի երկուստեք խորհուրդը՝ խնայեցին այդ մարդկանց և մեկ անգամ ակնածեցին իրենց մորից:

Սուրբ Քրիվսը ընկերներին հետ տակավին տեղ էջր հասել, երբ հասան նրանք ու կոտորեցին խցերի մոտակայքում:

Գ. Մի քանի օր անց, իրենց ազգականի՝ թագուհի Սաթենիկի երեսին նայելով այդ սուրբ մարդիկ հասկացան՝ քանզի իրենց հանդեպ այնպես էջր, ինչպես երեկ և եռանդուն: Կասկածեցին՝ միգուցե փորձության վտանգի հանդիպեն, և միասնաբար խորհեցին հեռու մնալ նրանից: Գնացին ու բնակութուն հաստատեցին Ջրաբաշխ կոչվող լեռան առատաբուխ աղբյուրի մոտ: Եվ սուրբ հոգու շնորհիվ այնտեղ մնացին քառասունչորս տարի:

Սաթենիկի մահից հետո ինչ-որ ուրիշներ եկան ի ծանոթութուն նրա որդիների և բարեկամացան նրանց: Հարցրին սուրբ մարդկանց մասին և իմացան նրանց բնակության տեղը, եկան նրանց մոտ ու ստիպում էին, դատարկ խոսքերով խորհուրդ տալիս [թողնել հավատը]: Տեսան նրանց հաստատությունն ու սրտի անընկճելիությունը՝ քանզի նրանց մտքերը վերինի հանդեպ էին, ուստի այդ իբրև անարգանք համարեցին իրենց անձի նկատմամբ ու սրով կոտորեցին՝ շուրջ վաթսուներեք հոգու: Վերցրին ու վիճը նետեցին և քարեր կիտեցին նրանց վրա:

Դ. Այսպես վախճանվեցին այդ սրբերը և մնացին գերեզմանում մինչև սուրբ Գրիգորի ժամանակները, որին և հայտնեց Սուրբ Հոգին: Գրիգորը նրանց վրա վկայարաններ կառուցեց ու

առաջնորդ քահանա կարգեց՝ հայր վանաց, իր աշակերտներից մեկին:

Իսկ նրանցից երկու ոմանք, որոնց պատանեկության տարիները էջին լրացել, տկար էին, փախան ու թաքնվեցին լեռներում, իսկ մի քանի օր անց զնացին այն տեղը՝ սրբերի մարմինները ժողովելու, սակայն չգտան այդպիսիք, այլ միայն սպանության տեղը: Հոգով ծածկեցին նրանց հեղած արյունը և յուրաքանչյուրին տեղում քարե արձան կանգնեցրին: Չհանդգնեցին մնալ այդտեղ, զնացին դեպի արևմուտք լեռան ստորոտը և բարենպաստ վայր գտան դաշտի բերանին մոտ, որտեղից բազում աղբյուրներ էին բխում: Հաստատվեցին այդ տեղում և ի հիշատակ նրանց՝ իրենց կացարան դարձրին զառիթափի գետնախորշերը ու բնակվեցին այնտեղ մինչև իրենց վախճանը: Ինչ-որ հովիվներ գտան նրանց աճյունները և ամփոփեցին նույն տեղում որպես աշխարհից հալածված հիվանդ ոմանց:

Սակայն քիչ ժամանակ անց Վաղարշ թագավորի կողմից այդ տեղում մենաստան կառուցվեց և տեղանքի բարեխառնության հանգամանքով անդ բնակեցրեց իր որդուն ու վայրը կոչվեց Վաղարշակերտ՝ իր անունով: Իսկ Ջրաբաշխ՝ լեռը ի հիշատակ սրբերի նրանց գլխավոր Սուքիասի անունով Սուկավ կոչեց: Մինչև այսօր այդ երկու տեղանքի հոգը հիվանդութունների բուժիչ է՝ սրբերի աղոթքով մեր տեր Հիսուս Քրիստոսի կողմից շնորհված, որին փառք հավիտյանս հավիտենից: Ամեն:

\* Նույնտրի գրչության շ-ի գրերի շփոթի պատճառով Ջրաբաշխը դարձել է Ջրաբախտ:

### 3. ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ՍՐԲՈՑ ՎԿԱՅԻՑ ՍՈՒԿԱՎԵՏՅԱՑ՝

Ա. «Զգուշացուք այլևս, եղբարք, բարւօք՝ իբրև գնացուք ոչ որպէս երկմիտք, այլ իբրև իմաստունք փառաւոր առնեսցուք զժամանակսն»<sup>1</sup>, ինչպես ասում է երանելի Առաքյալը՝ հեթանոսներին կոչ անելիս, որ խուսափենք չար օրից: Եռանդազին հիշատակմամբ խոստովանենք սուրբ վկաների չարչարանքը, որպեսզի նրանցից օժանդակութիւնն առնենք, շնորհ գտնենք ընդունելութեան պահին՝ քանզի հիրավի երանելի է, ով արժանի եղավ վայելուչ ներքող ձոնելու և ծառայելու այդ մարդկանց սրտի ողջ մտոք, որոնց ոչ իսկ էր արժանի այս աշխարհը:

Խոսքս վերաբերում է այն անպարտելի գնդին, ովքեր բարի ոչխարներն պես Հյուսիսային երկրից Օսքի դռնով Հայոց երկիր եկան հասան՝ Քրիստոսի համար զոհվելու, որպեսզի հոգևոր հաղթանակի ասպարեզում նախասացներ և երեք հարյուր երկնայնոց՝ ամենայն այդ սրբերի առաջին ծանուցողները դառնան, որոնք պիտի հայտնվեն իրենցից հետո Հայոց երկրում: Այլև ո՛ր սրամիտը կկարողանա պատմել նրանց չարչարանաց ահավոր եղելութիւնը: Սակայն ինչպես տեղեկացա ճշմարիտ պատմիչներից ու հոգևոր գրքերից, որոնք հաղորդում են Հայաստանի պատմութիւնն ու կարգավորութիւնը, այս երանելիները սպասավորների գնդից ու տոհմից են եղել. և պատիվ ստացած Օսքի թագավորներից, երևելի և պատերազմում թշնամիների հանդեպ անպարտ խիզախ և պատվական՝ թագավորաց ծառայութեան մեջ, ուստի և թագավորից կոչեցան՝ ուղեկցելու Սաթենիկ թագուհուն: Եկան հասան Հայաստան, սակայն այս ամենը կատարվում էր առավելապես աստվածային զորութեամբ, քանզի «Աստուած է, որ արարէ ամենայնոց զկամելն և զօգնութիւն»,— ինչպես Առաքյալն է ասում<sup>2</sup>:

\* Խորագրին ձեռագիրն ավելացնում է. «Քրիստոս բոլորից առավել փառավորիք հայրապետ Արսենին՝ Քո սուրբ վկաների փառավորողին»:

<sup>1</sup> Հմմտ. Եփես., Ե, 15-16

<sup>2</sup> Հմմտ. Առ Փիլ. Բ, 13:

Երբ սրանք տեսան աստվածային պատգամի լույսը, պայծառացան հոգով, և նրանց սրտում բորբոքվեց ծանոթ այն հուրը, որ տարածելու եկավ Աստծո միածին Բանը: Եվ դտան անգին մարգարիտը, քանզի հանդիպեցին Թադևոս առաքյալի աշակերտի աշակերտին ու ստացան սուրբ Երրորդություն հավատի մկրտություն:

Լցվեցին Սուրբ Հոգով և իսկույն անգոսնելի համարեցին աշխարհային ողջ փառքը և նախանձախնդիր եղան մեծն մարգարեներին՝ Նղիային և Հովհաննիս: Արհամարհեցին, գորական հարկն ու իրենց բանակով լեռան անապատում ապաստանեցին, որը Սուրբավյան է կոչվում: Եվ կացարան դարձան երկրային խոռոչները, հանուն Քրիստոսի սիրո, կենդանիների նմանողությամբ, ամփոփեցին անձերը [խոռոչներում] և կենում էին իբրև անմարմիններ, անգամ բրդոտ ոչխարների պես դարձան, և մարդկանց համար սարսափելի էր նրանց տեսքը:

Բ. Սուրբ երանելիները այսպես լեռան վրա մնացին քառասունչորս տարի՝ մինչև հասավ նրանց նվիրումի պահը, ինչպես Մարգարեն է ասում. «Զի ես այսուհետև նուիրեալ եմ, և ժամանակ դարձի իմոյ Հասեալ կայ»<sup>3</sup>: Սրբերը միմյանց այսպես ձայնեցին. «Այսուհետ մեզ սպասում է արդարության պսակը՝ ընտրյալ Առաքյալի և ամենայն առաքելոց ու մարգարեների հետ, որոնց հետ ուրախությամբ կկանգնենք Քրիստոս Բագինի առաջ»:

Եվ այսպես, սուրբ երանելիները կատարեցան արդյունավոր վախճանմամբ, քանզի պտղավորվեցին երեսնակի, վաթսունակի և հարյուրակի»<sup>4</sup>:

Մաթենիկ թագուհու մոտ Օսքի (Ալանաց) դռնից Հայաստան նահատակության եկածները, լուսավորված սուրբ մարդկանց՝ Թադևոս առաքյալի աշակերտների կողմից, միավորվել էին Եփրատի ափունքներում, կարգավորներ դարձել: Նրանցից առաջինը Ոսկեն (Ոսկի) էր, որ վրաց լեզվով Օքրո է թարգմանվում: Սրանց կողմից Քրիստոսի Կենաց բանի հավատով լուսավորվածներն ու մկրտվածները օր-օրի մեծապես վարժ էին դառնում հավատին, և այդ երանելի մարդը նրանց վարդապետության, Քրիստոսի հանդեպ հավատի համար կատարեցավ Մաթենիկի որդիների կողմից:

Այնու նրանք ուղևորվեցին եկան և բնակություն հաստատեցին Սուրբավյան լեռան վրա, որը հանուն նրանց առաջնորդ Սուրբիսի՝ Սուրբավյան կոչվեց, Բագրեանդի գավառում, Բագվան գյուղի դիմաց, Նպատ լեռան հանդիման: Շապուհ թագավորի տարիններին Աստծո տեսչությամբ իբրև վայրենի քոչեր խոտաճարակ էին: Այդ տարիներին Հայոց երկիրը ավերված էր, նրանք թագավոր չունեին, քանզի սպանված էր Վաղարշի որդի Արտավանը, և Հայաստանի թագավոր ինուսարոն (Խոսրով)՝ Պարսից թագավորից, վրիժառու լինելով՝ իր հայրենյաց վրիժառուությամբ: Այնուհետև կամեցավ կործանել Հայաստան երկիրը և ասում էր. «Գնամ և ավերեմ Հայոց երկիրը և վրեժ լուծեմ ըստ հայրենի սովորության»:

Գ. Այնուհետ զորաժողով կատարեց բոլոր երկրներից և կամեցավ կործանել ու ոչնչացնել Հայոց երկիրը: Իսկ երանելիները կայանել էին և հետևում էին, թե Պարսից թագավորը ինչպես է վրեժ լուծելու Հայոց երկրից: Եվ Հայոց երկիրը մեծ տխրության ու տագնապի մեջ էր: Երբ սուրբ վկաները տեսան Հայոց երկրի նեղությունն ու տառապանքը, երանելի Կողբատոսը սուրբ Սուրբիսին ասում էր. «Եկանք և աղոթք անենք, որպեսզի Տերը խաղաղություն անի այս աշխարհի համար»: Եվ աղոթեցին նրանք բոլորն ու ասացին. «Ողորմած եղիր, Տեր, այս երկրի հանդեպ քո մեծ ողորմածությամբ, որովհետև թեկուզ սրանց մեջ անօրենություն կա, սակայն Դու, ստեղծիչ Տեր, արարիչը ամենայն արարածոց, բոլորին ողորմալն ու օժանդակությունը քեզնով է լինում, հեռու տար սրանցից բարկության սուրբ, ով մարդասեր և անոխակալ Տեր: Եվ Քեզ փառք ամենայնի համար»:

Հենց նույն ժամանակ Պարսից թագավորը վերադարձավ իր երկիրը, և Հայոց երկրում մեծ խաղաղություն տիրեց: Այս տեսած սրբերը շատ ուրախացան և փառաբանեցին Աստծուն: Սակայն նույն գիշերը տեսիլ երևաց սուրբ Պողոթսեին, և եղբայրներին ասում էր. «Տեսիլ երևաց այս գիշեր ինձ՝ իբրև թե մի առյուծ կար մեր գունդից դուրս, գալիս հասնում էր մինչև մեզ ու կռվով մարտնչում մեզ»: Երանելիները ծնկի չոքեցին, աղոթում էին ու ասում այսպես. «Տեր Աստված մեր, որդ գիտես ամենայն ինչ, մի [թողնիր] մեզ սարսափեցնի այդ չար գազանը, որը գալիս է Աստծո ծառաների վրա, և մի թող մեզ առանց քո օգնության ու հույսի, որդ զորու ես բոլորի հանդեպ: Մի՛ տուր քո սրբությունը շնորհին, ամեն ինչի տեղյակ Աստված, որ գիտես մարդորդու սրտում

<sup>3</sup> Առ Տիմոթ., II, Գ, 6:

<sup>4</sup> Հմմտ. Մատթ., ԺԳ, 23: Սկզբից մինչև այստեղ եղած դրվագը հայերեն առկա բնագրում բացակայում է:

բոլոր եղածը: Տեր, դու գիտես, որ մենք մեր անձը տվել ենք Քեզ ծառայելուն, որպեսզի Հավիտյանս արժանանանք Քո անսուտ խոստումներին»:

Փառաբանության և օրհնության այս աղոթքը արտասովալից ձոնելուց հետո, բոլորը առ Աստված «Ամեն» ասացին ու ցրվեցին իրենց կացարանը և սովորության համաձայն առանձնական աղոթք էին առաքում առ Տերը:

Դ. Սուրբ Սուքիասը օրվա երրորդ ժամին երազ տեսավ, հավաքեց իր եղբայրներին և ասաց նրանց. «Այսօր տեսիլ երևաց ինձ, որ Շապուհը վախճանվել էր և նրա գահին նստել էր Դիդիանոսը և մեզ մոտ ուղարկել մի արնաթաթախ ազուավ և ուզում էր մեզ ցրել՝ իբրև աղավնու ձագեր, ինչպես որ դայլն է հարձակվում գառների փարախի վրա, ցանկանալով հափշտակել ու ոչնչացնել նրանց: Սակայն դուք հաստատ եղեք և ձեր սրտում վախից չհերկմտեք, քանզի Աստված զորու է մեզ օգնության՝ որպես բոլոր իրեն հուսացողներին»:

Այս տեսավ երանելի Սուքիասը, ուսուցանում էր եղբայրներին, որ քաջալերեն միմյանց և ասում էր. «Արի լինենք ու հաստատապես նախանձախնդիր, որպեսզի Աստված մեզ բոլորիս արժանի անի առաջինք դարձած վերջին մշակաց հետ, և երկնային Տիրոջից շնորհ առնենք՝ մեր չարչարանքների դիմաց»:

Երբ սուրբ Սուքիասից երանելիներն այս լսեցին, ում հանդեպ հաստատուն էին, օր-օրի առավել ևս իրենց ծառայության մեջ եռանդուն դարձան: Այնուհետև Սուքիասը դարձյալ հիշեցնում էր նախորդների մասին և ասում. «Տեսեք, իմ եղբայրներ և զինակիցներ, ինչպես որ թագավորաց կռիվներում առաջամարտին եղանք, այնպես էլ այս կովում ջանադիր լինենք ծառայելու, որպեսզի վերջին մշակների հետ մեզ շնորհ տա, ովքեր առաջինք դարձան»:

Այնժամ եղբայրներից Ղուկիանոս անունով մեկը երանելի Սուքիասին ասաց. «Քանի որ մեր անձերը Աստծո ծառայության տվեցինք, եկանք ձեռնամուխ լինելու Բագվանի բազիլիկների [ավերումին]»: Պատասխանեց Սուքիասն ու ասաց. «Մեզանից հետո գալու է այլ զորեղ մշակ, նա կկործանի նրան»:

Ե. Եվ ապրում էին սուրբ վկաները Սուքիասի լեռան վրա՝ խոտաճարակների տեսքով հրեշտակաբար, սրբերի մարմինները դարձել էին քարի մամուռներ, իբրև քոչի երկարել էին նրանց

մազերը: Եվ ոչինչ ունեին, այլ Աստծո հույսով էին ապրում և օրհնում Աստծուն:

Թագավորի վախճանից մի քանի տարի անց, Օսերի Դիդադնես թագավորի օրոք զորաց ու նրանց բանակատեղի հաշվառում կատարվեց: Այն ժամանակ թագավորին մատնացույց արին երանելիների վերաբերմամբ, թե «Թագավորի գնդերից ոմանք հաստատվել են Հայոց երկրում, քաջ ու անվանի մարդիկ, որոնք հնազանդ չեն ծառայելու թագավորաց աստվածներին, Քրիստոսի հավատի պատճառով հալածված են, կայանել են Սուկավ լեռան վրա՝ Հայոց երկրում, շատ խեղճության ու նեղության մեջ են, որ նրանց հույս է կոչվում»:

Սկոհե (Սկոհեր) անունով մարդուց երբ այս ամենը լսեց, անմիջապես իր զորքերից խիզախ մարդիկ ընտրեց և սպառազեն առած ուղարկեց Հայոց երկիր՝ Սուկավյան լեռ, ասելով. «Եթե գտնեք նրանց՝ մեծ պարգևով հնազանդեցրեք գալ մեզ մոտ, իսկ թե անհնազանդ եղան՝ սրի բերանով կոտորեք նրանց»:

Չորքերը եկան հասան Հայոց երկիր և եկան Սուկավետ լեռ, ուր բնակվում էին այդ երանելիները: Տեսան երանելիներին ու զարմացան, քանի որ ոչխարների պես խոտով էին սնվում, իսկ մարմինները դարձել էին մամուռակալ քարեր: Նրանց դիմեց զորազուլիսը, որի անունն էր Բարլահա, և ասաց. «Ի՞նչ եք դուք, քանզի ձեր պատկերը մարդու է, [բայց] և քոչի պես խոտաճարակ եք»:

Չ. Սուրբ Սուքիասը պատասխան տվեց ու ասաց. «Բնությամբ մարդ ենք, օսերի մարդկանցից և թագավորների անհավատության և նրանց անաստվածությունից փախել ենք և վերին զորությամբ այսպես ապրում ենք՝ հավիտենից հույսով, որ մեզ խոտացավ մեր Տերն ու Աստվածը»: Բարլահա պատասխանեց ու ասաց. «Այս տեղանքը ծմակային է, և սարի վրա ձյունը շատ: Ինչպե՞ս կարող եք սրա վրա բնակվել նման կենոք»: Պատասխանեց սուրբ Սուքիասն ու ասաց. «Լսիր, որդյակ, ես հայտնեմ քեզ. ով հավատա Աստված կենդանի՝ երկնի ու երկրի արարչին, ամենայն ինչ ըստ նրա կամքի է դառնում՝ նրա անունը փառավորողների և նրան ծառայողների համար»: Բարլահան ասաց. «Ո՞ր տոհմից ես դու»: Սուրբ Սուքիասը պատասխանեց. «Երկրորդականաց գնդից թագակից էի»: Չորազուլիսը պատասխանեց ու ասաց. «Ի՞նչ է քո անունը»: Երանելին ասաց. «Սկզբնապես անունս

Բարաքաղրա էր, բայց երբ աստվածճանաչության հասա՝ Սու-  
քիաս անուն կրեցի, որ է խաղաղական կյանք ընկալողը: Ձորազ-  
լուխը նրան ասաց. «Մարտնչող մարդ ես երևում»: Երանելին  
պատասխանեց. «Նիզակակից էի Շապուհ թագավորին»: Ձորազ-  
լուխն ասաց. «Ենթարկվիր ինձ և դարձիր նախկին այդ պատվիդ  
և կնստես նորից երկրորդական գահին»: Երանելին ասաց. «Մշակ  
եմ իմ Տիրոջ և ժամ է առնելու իմ վարձը»: Ձորազլուխն ասաց.  
«Այո, հայտնի է քո տերը, որին պատկանում ես»: Երանելին պա-  
տասխանեց. «Այո, հայտնի է»: Ձորազլուխն ասաց. «Ազնվակա-  
նությունը թողել ես և մշակության ես մատնել քո անձը»: Երա-  
նելին պատասխանեց. «Եթե ճանաչեիր իմ Տիրոջը՝ դու նույնպես  
կծառայեիր իմ այս մշակությանը, որպեսզի դու ևս չնորհ առ-  
նեիր», - և մերժեց նրա խոսքերն ու խիստ սաստեց զայրությամբ:

Եվ երբ երանելին իմացավ, թե նրա հետ ողորջանոք խոսելը օ-  
գուտ չունի, հավաքեց իր եղբայրներին ու նրանց ասաց. «Հասել  
է վախճանի և վարձը ստանալու ժամանակը»: Երանելիները  
խնդրությամբ լցվեցին, ուրախացած հույժ փառաբանում էին  
Աստծուն, քանզի հասել էր կատարման և Քրիստոսից պսակ առ-  
նելու ժամը, որ բաղձում էին երանելիները:

Է. Ձորազլուխը երբ [այս] տեսավ, նրանց մեկտեղ հավա-  
քեց, հույժ աղերսում էր և մեծ պարգևներ տալ խոստանում՝ «Ե-  
թե հնազանդվեք նորից ձեր երկիրը վերադառնալ»: Սրբերը պա-  
տասխանեցին և ասացին. «Մեզ պարգև տվողը մեր Աստվածն է,  
որը մեզ անմահ շնորհ կպարգևի, որը մեզ ազատեց աստանայից  
ու նրա արարքներից: Քո պարգևները թող քեզ մնան՝ ի կորուստ  
քեզ, որպիսին խոստանում ես մեզ տալ քո թագավորից՝ աստա-  
նայի գործակից ու նրա սպասավոր քո թագավորից: Եվ դու էլ  
նրա հետ: Իսկ մենք ախնկալում ենք Աստծո պարգևը, առ որ է  
մեր հույսը»:

Բռնակալը նրան ասաց. «Ո՞ր է ձեզ պարգև շնորհողը»: Երա-  
նելիները պատասխանեցին. «Մեզ պարգև շնորհողը Աստված է,  
որը կերտեց երկին ու երկիր և նրանում եղած բոլոր արարածնե-  
րը, նա է մեր Տերը, որը բոլոր կենդանյաց վրա մահվան ու կենաց  
իշխանություն ունի, որի հրամանով է երկինքը զողում և երկիրը  
սարսում, հրամայում է ծովին ու ցամաքացնում այն, փրկիաց-  
նում զետերն ու նույնժամայն վերստին դարձի բերում և այլևս

չեն հորդանում՝ զետինը ծածկելու: Կսաստե քեզ և քո խոհակից  
աստանային, և չի կայանա քո կամքը Աստծո ծառաների վրա»:

Երբ բռնակալն այս իմացավ, սրտնեղությամբ լցվեց նրանց  
հանդեպ և խորհում էր, թե ինչպես ոչնչացնի նրանց:

Ը. Երբ երանելիները տեղեկացան, թե հասել է առ Քրիստոս  
իրենց կատարման ժամանակը, բռնակալին ասացին. «Ժամ տուր  
մեզ, որպեսզի աղոթենք առ մեր տեր Աստված»: Ծավվեցին երա-  
նելիների ծնկները, աղոթում էին և այսպես ասում. «Տեր Աստ-  
ված, արարիչ երկնի և երկրի, որդ ոչնչից արարեցիր ամենայն ա-  
րարածները, դու ես ճշմարիտ Աստված և մեր տեր Հիսուս Քրիս-  
տոսի հայրը, որը եկավ ու մարմին առավ և խաչի միջոցով աշ-  
խարհը փրկեց՝ թաղումով ու հարությամբ, և քո Սուրբ Հոգին, ո-  
րը ի քեզ է մկրտում բոլոր արարածներին: Դու ես, որ ծնեցիր ա-  
ռաջին մարդուն և նրա մեջ ներդրիր իմաստության հոգի՝ որպես-  
զի փափկությամբ ուրախանա նա դրախտում, ինչպես հրահան-  
դեց քո կամքը՝ կենաց դրախտում ինչից ուտել և ինչերից հեռու  
մնալ ըստ հրամանիդ, և նրան կարգեցիր զլուսն ամենայնի: Նա-  
խանձով լցվեց թշնամին առ մարդու պատիվը, պատրելով նրան  
հանեց դրախտից, որ դու քո բարերարությամբ շնորհեցիր մարդ-  
կանց, և կործանեցին այն: Իսկ դու, մարդասերդ և քաղցր, անտես  
չարիք քո արարածին, ուղարկեցիր քո միածին Որդուն՝ մար-  
դկանց քո կամքին դարձնելու, լուսավորելու Քեզ ճանաչելու  
լույսով, և սիրեցին [մարդիկ] Քո որդու գալստյան՝ հայտնութ-  
յան օրը: Արդ, բարեգործ Տեր, ուշադրության առ քո ծառաներին,  
որքս Քեզ սիրեցինք մեր ողջ կարողությամբ և հավատացինք Քո  
անսուտ խոստումներին, որ խոստացար Քո սիրելիներին:

Առ Քեզ հուսացողներին ուժ տուր և զորացրու հանուն քո  
անվան պայքարում ու ամոթով արա սատանային՝ բռնակալով  
հանդերձ, ծառաներիդ հանդեպ փառավորիք Քո անունը, Աստ-  
ված սիրելի և տեր զթության հայր մեզ՝ Քեզ հուսացողներիս և  
ապավինողներիս, և թող չկործանի թշնամին մեզ՝ Քո հոտը Քո  
գավթից: Մեղմիր, Տեր, մեր հանդեպ շարժված այս ալիքը, որպես-  
զի հասնենք խաղաղության նավահանգիստ, կարողություն տուր  
առ Քեզ հուսացող ծառաներին՝ Քո անպարտ զորությամբ հաղ-  
թելու, և չդառնանք իբրև ավազի վրա կառուցված տուն, որը  
կործանվում է հողմերի և անձրևի փորձությունից, այլ պահպա-  
նիր մեզ Քրիստոսի հավատքի վիմի վրա՝ առ մեր հույս Աստված:

Քո ողորմածությամբ, տեր, հայիր մեզ՝ առ Քեզ հուսացող ծառաներիս և ի Քեզ ապավինածներիս, որպեսզի հեռացած ու մաքրված լինենք այս կովից, որով նեղում են մեզ, թող չխառնակի մեզ իր պատրոզ խոսքերի դառնության որոմը, որպեսզի չապականի աստվածային շտեմարանդ հավաքելիք ցորեանը և թող մեր այգում վնասակար մոլախոտ չբուսնի, որպեսզի չապականի օրհնության ողկույզը, որը պիտի հավերժական շտեմարաններդ հավաքես: Եվ մի տուր սասնություն մեր ոտքերը, այլև ամրապնդիր Քո աջով և անահ պահիր մեզ տեսանելի և անտես թշնամիներից ու փառավորիր Քո անունը»:

Թ. Երբ կատարեցին աղոթքը և «Ամէն» ասացին, երանելիները զորացան վերին տեսչությունից ստացած օժանդակությամբ: Եվ դարձյալ ծնրադրեցին ու օրհնում էին Աստծուն բոլոր այդ շնորհների համար, որ ստացան տիրոջից. «Գոհություն Քեզ, տեր, որ մեզ դարձի բերի ճանաչելու ճշմարիտ Աստծուն, քանզի խավարյալ էինք՝ մեզ լուսավորեցիր Քեզ ճանաչելու լույսով, անիծյալներին ազատեցիր բանսարկունների կապանքներից, քանզի խարխափյալ էինք մահվան ստվերի խավարի մեջ, և Քո լույսի պայծառությունը տրվեց մեզ ու լուսավերց մեզ՝ Քո արդարության և ճշմարտության ճանապարհներով գնալու, տեր: Լսիր, տե՛ր, և հայիր՝ քո ծառաների աղոթքը և տեղ մի տուր սատանային, զորացրու մեզ Սուրբ Հոգու զորությամբ, որը առաջնորդեց մեզ այստեղ գալու ժամանակ, որպեսզի անարատությամբ ավարտենք մեր ընթացքը, բարի խոստովանությամբ, շնորհով ու մեր Հիսուս Քրիստոս Աստծու մարդասիրությամբ, զի փառավորվի Քո սուրբ անունը, մեր տեր Աստված: Լսիր, տեր, մեր աղոթքը, ինչպես ունկնդրեցիր Եղիա մարգարեի աղոթքը՝ երբ նա լեռան վրա էր՝ հալածված Եզրելայից, ինչպես որ այժմ մենք ենք հալածված անօրեն թագավորներից և ազատված ենք բանսարկուից այս լեռան վրա. մեզ ծանուցած անպատմելի շնորհներիդ համար անդադրուն ներբողմով Քեզ ենք փառաբանում, տեր: Լսիր, տե՛ր, առ քեզ հուսացողների աղոթքը, ինչպես որ լսեցիր Դանիելի ու Սուսանայի աղոթքը և փրկեցիր Դանիելին առյուծների բերանից և Սուսանային՝ պատիր ծերերից և չար մահվամբ սատակեցիր վերակացուններին, ազատեցիր Քեզ հուսացողներին: Եվ այժմ ազատիր մեզ և զորացրու, որդ տեր ես և Աստված, հաղթելու թշնամուն: Լսիր, տեր, մեր աղոթքը, ինչպես որ լսեցիր Եսա-

յիի և Եզեկիայի աղոթքը, որոնք ապավինել էին Քեզ և արցունքակալ Քեզանից ամբարտավանացած և համարձակված թշնամու հանդեպ հաղթանակ էին աղերսում, ոտնակոխ արիր: Եվ արդ, զորացրու մեզ՝ հաղթանակ տանելու թշնամիների հանդեպ, որպեսզի մեզանից ոչ մեկը չվարատի և չզրկվի Քո բարի խոստովանելից, մեր տեր Աստված: Լսիր, տե՛ր, մեր աղոթքը, ինչպես որ լսեցիր Հնոցում երեք մանուկներին, որոնք մերժեցին թագավորին և Քո խոսքերը պահեցին ու օրհնեցին Քեզ, տեր Աստված հարանց մերոց: Տուր մեզ՝ առ Քեզ հուսացողներին, տեր, զորություն, որպեսզի խուսափենք այս փորձության կրակից, որ վերահաս է մեզ, որպեսզի արժանի դառնանք փառք տալու Հորը և Որդուն և Սուրբ Հոգուն այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից: Ամեն»:

Ժ. Բռնակալը զարմացել էր երանելիների աղոթքից: Եվ երանելիները նորից ասում են նրան. «Ժամանակ տուր մեզ՝ աղոթելու առ մեր տեր Աստվածը և ապա կատարիր քո կամքը»: Եվ երանելիները միասնաբար սկսեցին ու ասացին. «Քոնն ենք, Տե՛ր, առ Քեզ հուսացյալ և Քո առաջ ընկած՝ [հնար] տուր մեզ կատարելու մերը ընթացքը այս նեղությանց մեջ, ուր գտնվում ենք և արժանի արա մեզ մեռնելու Քո մեծ անվան համար և Քեզ հաճո եղածների վարձ առնելու, որոնք փառավորեցին Քո անունը և իրենց կամավոր մահվամբ վկա եղան փառավորությանդ և վայելում են պսակ առած և ուրախանում Քո անհասանելի փառքով անանց կենաց մեջ, «Ձոր ակն ոչ ետես, և ունին ոչ լուսա և ի սիրտ մարդոյ ոչ անկալ [զոր] պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց»<sup>5</sup>: Շտապում ենք, տեր, ելնելու մարմիններից և միանալու Քո սրբերի գնդին, որպեսզի մեզ լուսավորեն Քո աստվածային լույսով, որպեսզի առաջնորդեն մեզ երկնային Երուսաղեմ, ուր ժողովում ես բոլոր սրբերին ու Քո սիրելիներին, քանզի Քո է տիրություն և Քեզ ենք փառավորություն մատուցում հավիտյանս հավիտենից: Ամեն»:

Եվ երբ ավարտեցին այս աղոթքը, իրենց անձերը հանձնեցին բռնակալին և ասացին. «Այժմ կատարիր քո թագավորի և ձեր խորհրդակից սատանայի հրամանը»:

Մինչդեռ բռնակալը զարմացած էր և զայրացած երանելիների համարձակությամբ, հրամայեց զորականների խմբին կապել

<sup>5</sup> Առ Կորնթ. I, Բ, 9:

նրանց, ծեծել գավազանով: Հրամայեց լապտերներ բերել և հպել սրբերի մարմիններին և ասաց. «Կրակի բոցով կայրեմ ձեր մարմինները և կկատարեմ թագավորի հրամանը՝ քանի որ չկամեցաք մեզ մոտ գալ և թագավորից պատիվ ստանալ»: Եվ այդ անօրենը կարծում էր, թե զարհուրեցնում է սրբերին, [մինչդեռ] ծեծի պահին նրանց պիլելի համարձակ էր տեսնում, քանզի ոչինչ համարեցին այդ չարչարանքները, այլ և օրհնում էին Աստծուն և ասում. «Աստուած յօգնել մեզ նայեաց, և տէր յընկերել մեզ փութած»<sup>6</sup> և սրա շարունակությունը. «Տէր ի նեղութեան յիշեցաք զքեզ, և քո առատ ողորմութեամբդ մխիթարեա զմեզ», - ասում էր երանելի Սուքիասը՝ եղբայրներով հանդերձ, և արիաբար համբերում չարանքները:

ԺԱ. Բռնակալը դարձյալ զայրանում էր՝ Աստծուն փառք տալու համար, քանի որ նրանք չարչարանքը առ ոչինչ համարեցին: Եվ հրամայեց գելարան խցկել նրանց բերանը, որպեսզի չփառաբանեն Աստծուն:

Սուրբ Կողբատոսն այն ժամանակ սկսեց այս սաղմոսը. «Որպէս փափագէ եղջերու յաղբերաց ջուրց՝ այնպէս փափագէ անձն իմ առ քեզ, Աստուած [մեր]»<sup>7</sup>:

Բռնակալն ասաց. «Ի՞նչ են այդ եղջերուները, որոնք փափագում են աղբյուրների ջրերին, ինչի՞ն են այդպես փափագում ձեր հոգիները»: Երանելի Կողբատոսն ասաց. «Ինչպես որ նրանք իրենց մարմինները զովացնում են ջրով՝ վիրավորված որսորդների կողմից, այդպես մենք ենք փափագում այդ ջուրը, որը կապրեցնի հավիտենական կենսք՝ զերծելով սատանայի որոգայթից, քանզի հավերժ ծարավի ենք մեր Աստծո հանդեպ՝ դեպի գորեղն ու կենդանին, շտապում ենք ելնել մեր մարմիններից և հասնել մեր բաղձալի Քրիստոսին, դեպի որը փափագում ենք, որին՝ մեր տեր Հիսուս Քրիստոսին, արժանի դառնանք»:

Այն ժամանակ հրամայեց ազատել նրանց այդ չարաչար տանջանքներից և իր խորհրդակցի հետ, որ սատանան է, որոշեց երանելիներին սրով սպանել: Երբ երանելիները իմացան, որ հասել է ժամը, ծնրադրեցին, աղոթեցին ու ասացին. «Տեր Աստված կարողությունց, որ արժանի արիւր մեր այս անարատ ընթացքը՝

<sup>6</sup> Սաղմ., ԿԹ, 2:  
<sup>7</sup> Սաղմ., ԽԱ, 2:

փառավորելու ամենայն սուրբ երրորդությունը: Լսիր, տե՛ր, մեր աղոթքը և զորացրու մեզ մեր մահվան այս ժամին Սուրբ Հոգու գորությունը և աներկյուղ պահիր մեզ թշնամու բանսարկությունից և բռնավորի սարսուձից և մեզ բուրբիս արժանի արա ճշմարիտ խոստովանությունը վկայել քեզ համար՝ պսակ առնելու և վայելելու անպատմելի կյանքը: Լսիր, տե՛ր, մեր աղոթքը և գթա Հայոց այս երկրին, որպեսզի երկրպագություն դարձի քան՝ փառավորելու ամենասուրբ երրորդության, քանզի Քո արարածներն են և քեզ է վայել երկրպագություն ամենայն արարածներից, մեր տեր Աստված:

Լսիր, տե՛ր, Քո ծառաների և առ Քեզ հուսացողների աղոթքը, որպեսզի ուր էլ թափվի մեր արյունը՝ թող այդ երկրի հողը բուժիչ դառնա բուրբին, ովքեր բռնված են հիվանդությունը, թող երկիրը հիվանդներին բուժող աղբյուր բխեցնի, որպեսզի եթե մեկը մեր անունով ջերմ հավատով և անամոքելի ախտից արցունքով կամ խորապես տառապյալ, կամ թշնամու՝ պիղծ սատանայի կողմից տանջված, կամ բազում հիվանդություններից նեղված լինի և քեզ աղբսի, տե՛ր Աստված, մեր սպանման այս վայրում, Դու լսիր և ողորմացիր և փրկիր նրանց ամենայն հոգու և մարմնոց վտանգից, քանզի Դու ես ամենակարողը և Քեզ է վայել փառք հավիտյանս հավիտեցից: Ամեն»:

ԺԲ. Այնժամ երկնից ձայն եղավ նրանց և ասում էր. «Ինչ միանգամայն խնդրեցիք՝ կտամ ձեզ, թող ձեր վկայություն վայրում կենարար աղբյուր լինի, երկրի հողը տարվա երեք հարյուր վաթսուներեղ համեմատ, որ դառնում է այս աշխարհը, հիվանդությունների բուժիչ և ձեզ՝ բազում նեղություններից հանդիստ և ուրախություն լինի, որ մեծ ճգնությունը պատրաստեցիք ձեզ համար, ինչը ձեր կմնա հավիտյանս»:

Վերին օժանդակությունը գորացան սրբերը, [խաչա]կնքեցին իրենց անձերն ու ընթացան բռնակալի մոտ ի մահ, որոնց կոտորեց սրով: Նրանք հրեշտակի ողջույն առան և բարի խոստովանությունը ավանդեցին իրենց հոգիները ամենասուրբ և միազոյ երրորդության ձեռքը՝ ապրիլ ամսի 15-ին: Այդ երանելիների անուններն են, նախ սուրբ Սուքիաս, Ղուկիանոս, Պողոթոս, Կոստրատոս, Իքզիոք, Սյուլբերիոն, Մենաս (Մեմնաս), Փոկաս, Սյուրջիոս (Սերգիս), Դոմենտիոս, Անդրեանոս, Ջոսիմոս, Բիկտոր, Թալեիոս, Յորդանես, Անաստասիոս, Թեդոտիոս, Հակոբ, Թեդոսիոս:

Եվ ապրեցին այդ սրբերը Սուկայվ լեռան վրա քառասունչորս տարի և սնվում էին ոչ թե հացով, այլ Քրիստոսի զորությամբ: Եվ այսպես՝ քաջ վկաները Քրիստոսից անբիծ պսակ առան:

Այնուհետև բռնակալը շարժվեց իր զորքով և ուղևորվեց դեպի իր երկիր և պատմեց իր թագավորին, թե ինչպես վախճանվեցին այդ սրբերը:

ԺԳ. Իսկ՝ վկաների նշխարները անշարժ ընկած էին լեռան վրա, քանի որ ողջ երկիրը բռնված էր անաստվածությամբ, և նրանց թաղող ոչ ոք կար, ինչպես Մարգարեն է ասում՝ «Հեղին զարևունս նոցու որպէս ջուր, և ոչ ոք էր թաղէր զնոսա»<sup>9</sup>, և դարձյալ, թե՛ «Արկին զղրիակունս ծառային քոց [գէշ] թռչնոց երկնից»<sup>10</sup>: Սակայն անտես ձեռքով պահպանվում էին, և երկնի զնդերից պատրվ առնում հաղթանակով զարդարված նրանց ոսկորները:

Եվ այսպես փայլում էին՝ ինչպես աստղեր սարի վրա, և մինչև Փրկչի գալը և մեր փրկության քարոզի հայտնությունը և Երրորդ դարձյալ հավատով աշխարհի լցվելը:

Երբ թագավոր դարձավ Կոստանդինը և միտքը լուսավորեց ճշմարտության ճանաչմամբ և հայտնապես հրաման եկավ հասավ, որպեսզի քրիստոնյաները հայտնի դառնան և ամենայն տեղ եկեղեցիներ կառուցեն, սրտի մեծ հոժարությամբ հավաքեցին վկաների նշխարները, և բազում պերճանքով զարդարվեցին նրանց վկայարանները: Արժանի եղան աստվածային շնորհ ընկալելուն ու օր-օրի հրեշտակի տեսության, որը հայտնում է նրանց Աստծո՝ կատարման պատշաճող բոլոր հրամանները: Այս օրերին Աստված կամեցավ բացահայտել երանելի այդ վկաներին և հրեշտակի միջոցով Կոստանդին թագավորին հայտնեց նրանց կրած ճգնությունը: Եվ հրամայեց նրան գնալ Հայոց երկիր և որոնել նրանց նշխարները: Եվ թաղեցին դրանք հենց նույն տեղում, ուր ավարտեցին իրենց ընթացքը:

<sup>8</sup> Այստեղից հայերեն բնագիրն այլևս չի շարունակվում:  
<sup>9</sup> Սաղմ., ՀԸ, 3:  
<sup>10</sup> Սաղմ., ՀԸ, 2:

\*\*\*

ԿՈՍՏԱՆԴԻՆ ԹԱԳԱՎՈՐԻ ՏԵՍԻԼԻ ՄԱՍԻՆ

Տեսիլի մեջ Աստծո հրեշտակին տեսա, որ ինձ ասում էր. «Գնա Հայաստան՝ Բագրեանդ, Սուկայվես լեռ, քանի որ այնտեղ նահատակվեցին վկաները և երկար ժամանակ է, որ թաղված չեն նրանց նշխարները: Աստված քեզ հայտնի կդարձնի, և դու կգտնես կապարե տախտակ, որի վրա գրված են նահատակների անունները: Հավաքիր նրանց ի մի և յուրաքանչյուրը նշխարից մասունք վերցրու և այդ երկրի հողից, ուր հեղվել է սրբերի արյունը, բեր քո երկիր ու քո քաղաք. նրանք բուժիչ կլինեն քո երկրին հասանելիք 365 հիվանդություններին՝ տարվա օրերի թվին համապատասխան:

Այսպիսին է այդ երկրի հողի կերպը՝ կանաչ և մոխրագույն, դեղին և ձվի միջուկի [պես]՝ սև և սպիտակ ու երկնագույն, և հողը՝ ծակոտկեն: Եվ ըստ յուրաքանչյուր գույնի՝ համապատասխան ցավի [դեղ] կանես, որպեսզի հավատքով բժշկություն լինի սրբերի օժանդակությամբ: Եվ տարեց-տարի նրանց վկայության մեծ տոն կկատարես»:

Թագավորը պատասխանեց և ասաց հրեշտակին. «Ես ինչպե՞ս գնամ Հայոց երկիր, քանի որ ես թագավոր եմ, և երբ իմ գալու լուրը դուրս գա՝ այդ երկրում մեծ խռովություն կլինի»: Հրեշտակը թագավորին ասաց. «Հայոց երկրում հիմարացում և թմբիր կլինի, և չեն գգա քո գնալը»:

Հրեշտակի խոսքի համաձայն հաջորդ տարի Կոստանդին թագավորը գնաց և երբ հասավ՝ նահատակների նշխարները կատարելապես անվնաս գտավ Սուկայվյան լեռան վրա, ինչպես նրան հայտնել էր հրեշտակը: Նրանց վերաբերող տախտակը գտնելիս ուրախացավ և շնորհակալ եղավ Աստծո անպատում սքանչելիքներին: Եվ այդ նշխարներից որոշ ինչ-ինչ մասունքներ առավ, երկրի հողից՝ ուր սրբերը հեղեցին իրենց արյունը, [նշմարներ] վերցրեց, իսկ նրանց մյուս նշխարները հավաքեց մեկ տասպանի մեջ և ծածկեց տեղում, ինչպես նրան հրամայված էր: Եվ տարեց-տարի տոն էր կատարում՝ սպիտակ զվարակներ ու նոխազներ [զոհաբերելով]:

Ինքը վերադարձավ իր երկիրը, նրա հետ՝ սրբերի նշխարներ և երկրի հողից [նշմարներ], մինչ նրանց տապանը ոչ ոք իմացավ: Վկայարան կառուցեց և նրա մեջ ամփոփեց սրբերի մասունքները՝ սկզբները: մեծ բժշկություն էր լինում և ուրախություն առ Աստված: Եվ թագավորն այս էր ասում, թե ինչպես վերջին ժամանակներս Հայոց գնդի զորացումը կոչված է նահատակների մասունքներով և այնտեղ մինչև այսօր կատարվում է նրանց վկայություն հիշատակը՝ ի փառավորումն Հոր և Որդու և Սուրբ Հոգու այժմ և միշտ ու հավիտյանս հավիտենից: Ամեն:

\* \* \*

Ես՝ Անտոն անապատական Հռոմայեցիս ցանկացող եղա նրանց կենաց ու նահատակության [պատմությունը], որպեսզի տեղյակ լինեմ, թե մեծն Կոստանդինի ձեռքով ինչպես հայտնվեցին [նշխարները]: Եվ Աստված ինձ արժանացրեց մատյանների մեջ գտնելու [եղևությունը], և գրեցի նրանց պատմությունը՝ թե ինչպես սուրբ վկաները թաքուն էին մինչև այն ժամանակները, երբ Աստված նրանց հայտնի դարձրեց, որոնք բարեխոս են մեզ համար:

Եվ ինձ՝ Անտոնիս հիշեցեք, ով սրբերի անունը կտա և նրանց հիշատակը կկատարի, ինչ էլ խնդրի վկաների անունով՝ թող լինի մշտապես վերին պարգևողից, սուրբ վկաների բարեխոսությունը թող կատարվի ինչպես նա կամենում է, ինչպես կկամենա բարեգութն Աստված, որին վայել է պատիվ և փառք այժմ և միշտ՝ հավիտյանս հավիտենից: Ամեն:

Հովիտ ամիս 19-ից

#### 4. ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ ՍՈՒՐԲ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԵՐ ԱՐԻՍՏԱԿԵՍԻ, ՎՐԹԱՆԵՍԻ, ՀՈՒՍԻԿԻ, ԳՐԻԳՈՐԻ, ԳԱՆԻԵԼԻ

Ա. Տրդատ թագավորը ոմանցից լսեց Գրիգորի մասին, քանի որ նրան վերահասու արին, թե պատանեկության տարիներին, երբ նա զինվորության մեջ էր, կին ուներ և երկու որդի: Անգրանկի անունը Օրթան (Վրթանես) էր և ապրում էր աշխարհակեցությունում, իսկ հետո քահանայության աստիճան ընդունեց: Երկրորդը Արիստակես անունն էր կրում, մանկությունից Աստծո ծառայությունում զբաղվում՝ մենակեցությամբ, ամենայն կարգով ապրում էր լեռներում և բազում ազգակցաց հոգածու լինում: Նա հոգևոր կրթությամբ բոլորի հետ կրում էր [հոգսերը] և իր անձը տալիս ամենայն ճշնություն՝ սովի ու ծարավի, բանջարակերության և խավար կացարաններում մնալու: Ձորձագզեստ գետին էր պառկում՝ ամենևին հանգիստ չառնելով, գիշերն արթմնի և քնի հարկը ոտքի կանգնած և թարթափ աչքերով վճարում: Ապա գտավ ոմանց, որոնք հարեցին նրան ու աշակերտեցին. և այսպես՝ Աստծուն ու մարդուն հաճո ապրում էին:

Այս իմացած Տրդատ թագավորը շտապ-շտապ ավագանի և պատվավոր մարդիկ ուղարկեց, որպեսզի Գրիգորի երկու որդուն էլ շուտով բերեն իր մոտ: Եվ երբ ուղարկվածները հասան Կապադովկիա երկիր, անդրանիկ որդի Վրթանեսին Կեսարիա քաղաքում գտան, իսկ Արիստակեսին՝ միայնակեցությամբ անապատում իր վանում, և չէր հնազանդվում նրանց՝ անապատից դուրս գալ: Քրիստոնյաների մեծ բազմություն հավաքվեց և ասացին նրան. «Քեզ ավելի նախընտրելի է հոգևոր ծառայությունը, քան մենակեցությամբ քո մնալը»:

Այսպիսի խոսքերով համոզեցին նրան, և երկուսն էլ ուղևորվեցին եկան Հայոց երկիր, ու երկուսին էլ ներկայացրին թագավորի առաջ: Եվ թագավորը դուրս եկավ Գրիգորին որոնելու՝ ուր էլ գտնվի: Իսկ Գրիգորի երկու որդիները նրա հետ էին:

Բ. Սուրբ Գրիգորին գտան Դարանաղյաց երկրում, Մանեհի այր կոչվող լեռան վրա: Երանելի թագավորը ազաչուժ էր սուրբ Գրիգորին և ասում նրան. «Դու չկամեցար մեր մեջ լինել և նախընտրեցիր անապատասիրությունը: Այժմ քո փոխարեն Արիստակես որդու՞ ձեռնադրիր», որին և ձեռնադրեց իր փոխարեն՝ ըստ գրածին, թե «Փոխանակ հարց եղիցին որդիք, և կացուցես զնոսա իշխանս ընդ ամենայն երկիր»<sup>1</sup>: Արիստակեսը իր հորից առավել յուր վարդապետությունն էր ցուցաբերում՝ ավելին քան հայրը<sup>2</sup>:

Եվ սուրբ Գրիգորը իր սուրբ որդու և նրա երեկելի օգնականների ու աշակերտների հետ շրջում էր ամենուր և Քրիստոսի ճշմարիտ հավատի հանդեպ հաստատում: Արիստակեսի Նիկիո սուրբ ժողովից վերադառնալուց հետո սուրբ Գրիգորը այլևս ոչ ոքի չէր երևում:

Եվ քանի որ սուրբ Արիստակեսը բոլոր չարագործների և ոչ սուրբ մարդկանց հանդեպ դաժան էր թվում, այդու Չորրորդ Հայքի իշխանավոր կարգված Արքեղայոսը, որ հանդիմանության էր արժանացել երանելու կողմից, Ծոփաց երկրի ճանապարհին հանդիպեց նրան, խփեց սրով ու սպանեց երանելուն, իսկ ինքը փախավ Կիլիկիայի Տարսոն:

Սրբի մարմինը վերցրին իր աշակերտներն ու հասցրին Թիլ ավան, իսկ նրա աթոռին նստեց անդրանիկ եղբայր Վրթանեսը: Սա ևս հաջողութամբ [վարում] էր հոր կարգով՝ մեծ գգուչութամբ:

Գ. Եվ երանելի Տրդատ թագավորը հավատքի խանդով էր տարված, սակայն առավելապես իր տերության հեռավոր տեղերում եղածների վերաբերմամբ: Ուստի նրա մոտ էին գալիս արևելքի և հյուսիսի գործակալները, Փայտակարան քաղաքի, որ է Տիգրիս, վերակացուները և ասում. «Եթե կամենում ես, ով թագավոր, որ կողմանք<sup>3</sup> արդար ճանապարհով ընթանան և հավատարիմ կենան, նրանց եպիսկոպոս տուր սուրբ Գրիգորի ժառանգներից<sup>4</sup>, որովհետև հույժ փափագում են և բաղձանքով խնդրում: Եվ

այսպես իմացեք, որ հերավի կամրապնդվեն ու կակնածեն սուրբ Գրիգորի և նրա որդիների անուններից»:

Համաձայնեց երանելի Տրդատն ու նրանց տվեց Գրիգորիս մանկանը՝ Վրթանեսի անդրանիկ որդուն: Մանուկը թեև լիատարիք չէր, բայց կատարյալ էր հոգով. նա հիշատակեց Սողոմոնին, քանի որ երբ նա Իսրայելի թագավոր դարձավ տասներկու տարեկան էր: Ուղարկեց [Գրիգորիսին], քանզի խելքի կատարելություն ունեեր, և հետը դրեց իր տոհմակից Արշակունի ոմն Սանատրուկի:

Երբ սուրբ Գրիգորիսը [տեղ] հասավ, իր նախնյաց պես առաքինութամբ էր ընթանում, իսկ կուսութամբ գերազանցում էր նախորդներին, անկարգության գլուխ չէր դնում և թագավորի պես անվախ էր: Եվ երբ երանելի Տրդատ թագավորի վախճանման լուրը հասավ՝ նույն Սանատրուկն ու այլ նենգ մարդիկ սպանեցին երանելի Գրիգորիսին, բարբարոսների ձիերի ոտքերի տակ առնելով Վատնեան դաշտում, Կասպից ծովին մերձ: Սարկավագները վերցրին նրա մարմինը և բերին Փոքր Սյունիք և երանելի Գրիգորիսին ամփոփեցին դաշտում Ամարաս (Ամարես) գյուղում:

Դ. Իսկ սուրբ Վրթանեսը երանելի Տրդատի վախճանման ժամանակ սուրբ [Հովհաննես] Մկրտչի և Աթանազիոսի վկայարանում էր, որ կառուցել էր նրա հայրը Տարոն երկրում: Այդ լեռան վրա գտնվող դավադիրները նախարարների սաղբանքով կամեցան սպանել մեծն Վրթանեսին. [սակայն] կապանքվեցին առանց մարդկային ձեռքի՝ ինչպես Եղիսեի ժամանակ, իսկ սուրբը անխոչընդոտ գնաց Եկեղյաց երկիր, Թիլ գյուղը և ողբում էր Հայոց երկրի [վիճակը], որովհետև չուներ իշխան ու առաջնորդ:

Իր քահանայապետության տասնյոթերորդ տարում փոխվեց այս աշխարհից: Տարան նրան Թորդան գյուղ, քանի որ հրամայել էր այնտեղ թաղել իրեն: Եվ աթոռին նստեց նրա որդի Հուսիկը՝ Տիրանի թագավորության չորրորդ տարում, որը ամենայն առաքինութամբ գնում էր իր նախնյաց ճանապարհով:

Այս ընթացքում հույների թագավոր նստեց Հուլիանոս Ուրացողը և պայքար հարուցեց Քրիստոսի եկեղեցիների դեմ: Հայաստան բերել տվեց իր պատկերը և հրամայեց այն դնել եկեղեցում՝ արևելյան կողմում: Իսկ նրա պատկերի այս ու այն կողմում սատանաների պատկերներ էին դրված, և կամենում էր, [որ] խար-

<sup>1</sup> Սաղմ., ԽԴ, 16-17:  
<sup>2</sup> Վկայաբանության սկզբից մինչև այստեղ հայերեն բնագրում ներկայացված չէ: Վրացերենը մասնակի միջամտություններով քաղված է Ագաթանգեղոսից՝ § 859-862:  
<sup>3</sup> Բնագրում՝ սահմանները:  
<sup>4</sup> Բնագրում՝ որդիներից:

դախուծությամբ դեպի արևելք երկրպագելիս սատանաներին աղոթեն:

Եվ երբ Տիրան թագավորը պատկերն ստացավ, Հրամայեց այն կանգնեցնել արքայական եկեղեցում: Իսկ սուրբ Հուսիկը թագավորի ձեռքից խլեց պատկերը և դրեց գետնին, ոտքով կոխոտեց և ավերեց այն, թագավորին հայտնելով [Հուլիանոսի] խորամանկուծությունը: Թագավորը զայրացավ նրա վրա, քանզի վախեցավ և ասաց. «Որպես թագավորի պատկերը ոտնակոխ անողի կսպանի ինձ»: Եվ ավելի չարուծությամբ լցվեց սրբի հանդեպ, որ մինչ այդ էլ ուներ, քանի որ [սուրբը] մշտապես հանդիմանում էր նրան՝ Աստծո պատվիրանից դուրս գալու համար: Եվ Հրամայեց գավազանով այնքան ծեծել նրան, մինչև ծեծի ընթացքում կավանդի հոգին: Իսկ նա մինչև հոգին ավանդելը գոհունակութուն էր հայտնում Աստծուն:

Սրբի վախճանից հետո ծերացյալ քահանա սուրբ Դանիելը, որը սուրբ Գրիգորի աշակերտն էր եղել, արհամարհանքով պարսավեց և անիծեց թագավորին: Իսկ նա Հրամայեց խեղդամահ անել երանելուն: Վերցրին նրա [մարմինն] աշակերտներն ու տարան իր միայնարան, որ Հացեաց դրախտ է կոչվում: Իսկ սուրբ Հուսիկի դիակը տարան Թորդան, ուր թաղված էր նրա հայրը: Նա եպիսկոպոսութուն արեց վեց տարի:

Այսպիսի վկայութայամբ վախճանվեցին երանելիները և զնացին առ իրենց Տերը՝ փառաբանելու Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն այժմ և միշտ ու հավիտյան հավիտենից: Ամեն:

Հովիս ամսի 1-ից

## 5. ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ՆԵՐՍԵՍԻ ԵՎ ՆՐԱ ԱՇԱԿԵՐՏ ԽԱԳ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Ա. Արշակի թագավորութայան երկրորդ տարում եպիսկոպոսապետ դարձավ Ներսես Մեծը՝ Աթենագինեսի որդին, որդի Վրթանեսի, որդի երանելի Գրիգորի: Երբ Մեծն Ներսեսը վերադարձել էր Բյուզանդիայից Կեսարիա, այնտեղից եկավ հասավ Հայք և իր նախորդների բոլոր կարգերը նորոգեց և վարում էր արդարութայամբ՝ Հունաց աշխարհի նմանութայամբ և ավելի: Ինչ բարեկարգութուն տեսնում էր թագավորական քաղաքում՝ սահմանում էր [նաև] Հայոց աշխարհում: Նա ի մի հավաքեց եպիսկոպոսներին ու ողջ Հայքը և կանոն սահմանեց նրանց՝ որպեսզի նրանցից հեռացնի անգթութունը և սեր հաստատի, քանզի սկզբնապես անողորմութուն ուներ մեր երկիրը. բորոտները հրեական հավատքի նմանութայամբ հալածվում էին իբրև պիղծ համարված, խուսափում էին նրանցից՝ մի գուցե նրանցից փոխանցվի, ուստի կենալու համար անապատներ և անմատչելի տեղեր ունեին: Նրանց ապաստան էին ժայռերն ու մացառները, թշվառութայան համար ոչ ոքից մխիթարութուն չէին գտնում: Եվ այսպես՝ հաշմված անդամով, չէին ընդունվում մարդկանց կողմից, և նրանք օտարաց հանդուրժողութուն չունեին:

Ներսեսը Հրամայեց, որպեսզի գավառ առ գավառ խորհրդում ու անմատչելի վայրերում աղքատանոցներ կառուցեն, և [սրանք] Հունաց հիվանդանոցների փոխանակ լինեն՝ հուրախութուն նրանց հիվանդ մարմինների: Եվ հարկ նշանակեց ավանների և գյուղերի արդյունքների վրա՝ ի ծառայումն, արոտականների ու կովերի կիթից, հարկի տեսքով բաժին հատկացրեք նրանց՝ մինչև տների կառուցումը, և դուք մի մերձենաք ինչպես կամենաք: Եվ այս գործը հանձնարարեց իր ավագ սարկավագ Խազին, որը Կարնո երկրից էր՝ Մարգաց գյուղից: Կարգադրեց, որպեսզի յուրաքանչյուր գյուղում կացարան շինեն՝ օտարներին ընդունելու համար, և տեղեր՝ որբերի ու այրիների, աղքատների համար:

Եվ անապատ տեղերում եղբարց միաբանութուններ ու մենաստաններ, իջևաններ ու խրճիթներ կառուցեցին, իսկ նրանց

վրա հայր ու վերակացու նշանակեց Շալիտային, Եփրեմին, Ետիփանին ու Գինդին, որ Սլկուենյաց տոհմից էր, և բազում այլոց ու մանց նրանց հետ: Իշխանաց միջից վերացրեց այս երկու [բանը]. նախ՝ երկու մերձավորների խնամությունը, որ ազահուստյան [թեւալորությամբ] ունեին սեպուհ աղնվականները, և ապա՝ որ հեթանոսների պես էին վարվում հանգուցյալների հետ՝ նախնայց սովորությամբ կոծելով: Ուստի մեր երկիրը լցվեց ուրախությամբ՝ ի ձեռն երանելի Ներսեսի բարի հաջողումի:

Բ. Սակայն Արշակը ըստ կարգի արդարությամբ չէր թագավորում և ոչ էլ հնազանդվում այդ աստվածային մարդուն՝ երբ հանդիմանում էր նրան ու խրատում: Իսկ սուրբ Ներսեսը իր անձը հեռու էր պահում թագավորից և ողբում ինչպես Սամուելը Սաուլի հանդեպ: Եվ երբ Արշակը տեսավ, որ նրան թշնամի են Պարսից Շապուհ արքան և Հունաց Վաղես թագավորը, իր նախարարները, ամենայն կողմով տարակուսանքի մեջ ընկավ և բազմիցս պաղատում էր երանելի Ներսեսին և նրան խոստանում դառնալ բոլոր չար ճանապարհներից ու լինել ըստ նրա կամեցածի, ապաշխարել մոխրով ու քուրձով, միայն թե գանրամոտ և խաղաղություն հաստատի և փրկի նրան գորեղ Հույների ձեռքից: Նույնպես և նախարարներն էին ստեպ-ստեպ [մարդ] ուղարկում՝ մեծ պաղատանքով: Եպիսկոպոսները հավաքվեցին և աղերսեցին, որ անտես չառնի այս աշխարհի կորուստը և փութա ի սեր իր վիճակի:

Երանելին լսեց ու գնաց նրանց մոտ և խաղաղություն հաստատեց. նրան հնազանդվեցին թագավորն ու նախարարները և ուխտեցին, որ կզնան արդարության ու ճշմարտության ճանապարհով, և թագավորը իրավամբ կվարի ու նրանք [էլ] հավատարմությամբ կծառայեն՝ ըստ այդ սրբի հրամանի: Իսկ երանելի Ներսեսը գնաց Հույների գորքերի մոտ և աղաչեց նրանց չվնասել մեր երկրին:

Եվ լսեց խաղաղարար ու մարդասեր Թևդոս Մեծը, քանի որ նա էր այդ ընթացքում Հույների գորքի գորավարը, և ողորմած գտնվեց: Անդուստ դարձավ կայսեր մոտ՝ իր հետ տանելով պատանդներ, [ինքը]՝ երանելի Ներսես և թագավորի որդուն, որի անունը Պապ էր, նրա հետ նաև թագավոր Արշակի նամակը:

Սակայն Վաղես (Վելիո) կայսրը չստացավ թագավորի թուղթը և ոչ էլ երանելի Ներսեսին կանչեց, [այլև] հրամայեց սրբին աքսորել անբնակ կղզի:

Գ. Այն ժամանակ հոգեմարտ Մակեդոնը երանելուն ասում էր. «Հնազանդվիր ինձ, և ես քեզ կազատեմ այդ չարիքներից ու թագավորի բարկությունից»: Մինչդեռ սուրբը գլուխ չդրեց և գնաց աքսոր: Իսկ թագավորացնը և նախարարները որդիները, որ պատանդ էին, հնազանդվեցին, և նրանց ծովամույն չարին, ինչպես թագավորն էր հրամայել<sup>1</sup>:

Երբ նավը ընթանում էր, ուր տանում էին երանելուն, ձմեռվա եղանակի խստությունից [այն] ջարդվեց, նրանց նետելով ինչ-որ կղզի: Դժվարությամբ դուրս եկան ու սնվում էին անտառի արմտիքներով<sup>2</sup>: Առ այրն ունեցած աստվածային տեսչությամբ շուրջ ութ ամիս բոլորը սնվեցին ծովից կենդանի արտանետված ձկներով:

Սուրբ Ներսեսի հեռանալուց հետո Արշակը դրժեց ողջ խոստումը և կոտորեց իր նախարարներին, իշխաններին՝ հանուն իր կողմից կառուցված անկարգ Արշակավանի, իսկ մանավանդ կամսարականների տոհմը ամբողջովին կոտորեց, վերացրեց, նույնիսկ կանանց մանուկներով ընաջնջեց, և նրանցից ոչ ոք փրկվեց՝ բացառությամբ Արշակի որդի Սպանդիարի, որը իր ընտանիքով փախավ Հունաց աշխարհ:

Դ. Մեր երկրից մեկնելիս երանելի Ներսեսը Բագրևանդի և Արշարունյաց երկրի վրա [վերակացու] ձեռնադրեց սուրբ Խաղին, նրան ավանդեց ողջ Հայքը՝ մինչև իր գալը: Այս Խաղը ամենայն կողմով նմանվում էր երանելի Ներսեսին, հատկապես աղքատաց տեսչությամբ, որի շտեմարանները աղբյուրի պես սքանչելապես [լցվեցին], ինչպես Եղիայի և Եղիսեի ժամանակ, և սաստկորեն ու առանց քաշվելու հանդիմանում էր թագավորին՝ ամենևին աներկյուղ: Եվ սատանան չկարողացավ նրա մոտ բնակություն հաստատել, բայց միայն այն է՝ հանդերձով պճնող էր և ձիասեր, որի համար այսպես էին նրա կողմից հանդիմանվողները, ուստի թողեց իր կամքը և մինչև կյանքի վերջը խարազնազգեստ և իշով էր շրջում: Հանդիմանում էր թագավորին և մեղմությամբ կշտամբում խրատներից դուրս գալու համար:

Թագավորը հրամայեց քարշ տալ երանելուն և քարկոծ առնել, սակայն Ապահուենյաց իշխանները քաշեցին իրենց սրբերն ու

<sup>1</sup> Սույն պարբերությունը վկայարանության հայերեն բնագրում ներկայացված չէ. այն արձագանքում է Մովսես Խորենացու Պատմության որվազին (III, 30):

<sup>2</sup> Բնագրում բույսերով:

վանեցին նրանց, ովքեր ձեռք էին բարձրացրել սրբի վրա, վիրավորյալ փոեցին նրանց: Երանելուն փախցրին նրանց ձեռքերից ու հետները տարան իրենց երկիր: Եվ Արշակը չհամարձակվեց ցուցաբերել իր բարկութունը նրանց հանդեպ՝ չլինի թե խոտվութուն բարձրանա նախապես տեղի ունեցած իշխանների կոտորելու համար:

Ե. Այն ժամանակ Պարսից արքա Շապուհը մեծաթիվ գործ ուղարկեց Հայոց երկիր. Արշակը շատ նեղվեց ու ոչ իր կամքով դնաց Շապուհի մոտ, իսկ Շապուհը հրամայեց երկաթե շղթայով կապել Արշակին և տանել տվեց Խուժաստան, Խուժաստան անունը կրող բանա:

Արշակը Սավուղի պես մահ գտավ, այդպես էլ Վաղես կայսրը իր խորհրդին արժանի հավերժական գեհեհնն այստեղ իսկ առավ, քանզի հրով այրվեց Ադրիանապոլսում, իսկ Աստծուց տրվող թագը Մեծն Թևդոսն ստացավ: Նա ավերեց կոոց տաճարները, ետ վերադարձրեց ուղղափառության համար հալածված սուրբ հայրերին, որոնց բանտարկել և աքսոր էին ուղարկել, ի թիվս որոնց ետ բերեց Ներսես երանելուն և մեծ պատվով պահեց իր մոտ:

Երբ սուրբ Ներսեսը տեղեկացավ այն ամենին, ինչ Պարսից թագավորը բերեց Հայոց գլխին և Արշակի մահվանը, դիմեց ինքնակալ Թևդոսին և նրանից օգնություն խնդրեց, որպեսզի թագավոր կարգի Արշակի որդի Պապին: Համաձայնեց նրան մեծն Թևդոսը և մեծագոր բանակ տվեց, որոնք Հայաստան հասնելով, պատերազմեցին Պարսից զորքի դեմ, և երբ պատրաստվում էին ճակատամարտի, սուրբ Ներսեսը բարձրացավ Նպատ լեռան կատարը և թևերը երկինք կարկառած օգնություն էր խնդրում Մովսես մարգարեի նման՝ մինչև որ պարտվեց այդ երկրորդ Ամաղեկը:

Պատերազմի ավարտից հետո, երբ խաղաղվեց Հայոց երկիրը, երանելի Ներսեսն սկսեց պատվիրանել և վկայել թագավորի և իշխանների միջև, որ արդարության ճանապարհով ընթանան, որպեսզի իրենց գործերը վկայեն հավատով և ապարդյուն չլինի քրիստոնյա կոչումը, թագավորը անհավատությամբ չնմանվի հորը, այլ ուղիղ գնա, խնայի իր իշխաններին: Իսկ իշխանները չհանդգնեն ընդդիմանալ նրան, այլև հնազանդությամբ և հավատարմությամբ ծառայեն թագավորին:

Զ. Հայաստանի թագավոր Պապը հոր անկշտաբար վերցրածը վերադարձրեց, գանձերի հանդեպ հույժ անընչասիրաբար վարվեց

և առատորեն բաժանում էր: Սակայն ամոթալի հակումները էր հետևում և երանելի Ներսեսի կողմից կշտամբանքով հանդիմանության ենթարկվում: Թագավորը չարությամբ լցվեց նրա հանդեպ, բայց ինքնակալ Թևդոսից [քաջվելով]՝ չէր համարձակվում ինչ-որ բան անել նրա վերաբերմամբ: Մահացու դեղ պատրաստեց և թաքուն ըմպել տվեց նրան, և սույն երանելին հեռացավ կյանքից. եպիսկոպոսական աթոռին մնալով երեսուներեք տարի փոխվեց վերին Երուսաղեմ: Վախճանվեց Եկեղյաց երկրում, Խախ կոչվող գյուղում:

Թագավոր Պապը վերցրեց նրա մարմինը և ամփոփեց թիլ ավանում՝ կոծկելով իր սույն արարքը: Եվ որքում էր ամենայն Հայաստանը այս աստվածային մարդու վախճանը:

Կարճ ժամանակ անց նրան բռնեց զորավարն ու հանձնեց մեծն կայսր Թևդոսին, և այն աստվածային մարդու հետ կատարած անզգամության համար սրով վախճանվեց՝ յոթ տարի [իշխած]:

Է. Եվ լեռան վրա գտնվող ինչ-որ անապատական մարդիկ, նրանց մեկի անունը Շալիտա՝ ազգով ասորի և լեռան վրա բնակվող, իսկ երկրորդը՝ Անախթատով (Անհատական) մեծ լեռան վրա բնակող ազգով հույն Եպիփանոս, սուրբ մարդիկ՝ հրեշտակային կյանքով, սնված անապատներում, կարող էին նշան ընկալել, իսկ նրանց վարքը հայտնի էր բոլորին: Սրանք մեծն Դանիելի աշակերտներն էին և ջոկ-ջոկ լեռան վրա էին ապրում: Երբ վախճանվեց երանելի Ներսեսը, նրանք ցերեկվա բաց աչքով տեսնում էին այդ աստվածային մարդուն՝ Ներսեսին ամպով պարուրված, քանի որ Աստծո հրեշտակները նրան տանում էին երկինք, և երկնային գորությունները գունդ առ գունդ դիմավորում էին նրան: Այս տեսիլը տեսած այդ հայերը զարմացան. Շալիտա կոչվածը ներքնատես արեղա էր և ըմբռնեց, թե վախճանվել է սուրբ Ներսեսը, և հրեշտակները տանում են նրա հոգին: Իսկ Եպիփանը կարծում էր, թե սուրբ Ներսեսը հափշտակված է մարմնով: Եվ ամեն մեկն իր բնակած լեռից մեծ շտապով դնացին հասան Եկեղյաց երկիր, թիլ ավան և տեսան սուրբ Հայրապետի հանգստարանը: Նրանցից յուրաքանչյուրը ժողովրդի առաջ պատմում էր իր տեսածը, որ տերը հայտնի էր արել սրբի հանդեպ: Եվ փառքով կատարեցին նրա և Խաղի հիշատակը՝ ի փառս Հոր և Որդու և Սուրբ Հոգու այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից: Ամեն:

6. ԿԱՏԱՐՈՒՄՆ ՆԵՐՍԵՍ ՄԵԾԻ ՈՐԳԻ ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ  
ՊԱՐԹԵՎԻ, ՈՐԸ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐԻ ՎԵՑԵՐՈՐԳ  
ՍԵՐՈՒՆԳՆ ԷՐ

Ա. Քանի որ նախնյաց սովորույթի համաձայն կարգով ամուսնացած էր և չուներ արու զավակ, այլ միայն մեկ աղջիկ, ուստի ախուր էր՝ միթե մեղոքս իմ զորությամբ էր ընդհատվելու նախնյաց սերունդը: Ուստի քրիստոնյա գործչի իր անձը ետ պահեց այսաշխարհային ամենայն վերուվարումներից և զբաղվեց աղոթքով: [Գոհացավ] իր մոտ ունեցած յոթնասուն աշակերտներով և ապրում էր անապատում հրեշտակային կենոք: Իսկ այնուհետև, երբ եպիսկոպոս դարձավ, վարում էր ըստ կարգի՝ ինչպես իր նախնիք: Այդու սուրբ եպիսկոպոսներից և արժանավոր քահանաներից շատերը չէին հեռանում նրա անընդհատ վարդապետությունից ու խրատից, քանզի աղբյուրի պես բղխում էր իմաստությամբ և աստվածային հոգով, որ հաստատված էր նրա մոտ:

Սա հասավ բարի ծերության և մի օր, երբ նստած էր սուրբ Կաթողիկե եկեղեցում, մերձ սուրբ սեղանին, զարմանալի տեսիլ երևաց նրան. նրա առաջ հայտնվեց Տիրոջ հրեշտակն ու ասաց, թե «Քեզ մոտ ուղարկվեցի՝ իբրև Դանիելի, ով խոհուն մարդ. ոչ թե դու մեղք գործեցիր, այլ ժողովրդոց մեղանշանքի պատճառով [Տերը] ձեր տոհմն առավ նրանցից»: Եվ հրեշտակը մխիթարեց, քանզի բազում էին նրա առաքինությունները, որ անկարող ենք սույն գրությամբ պատմել:

Հանդգնորեն ներկայացան թագավորաց առաջ, քանզի նրան տարան Պարսկաստան, և անհավատ թագավորի ու Պարսից մեծավորաց ժողովքի առաջ առանց երկյուղի ասում էր [այն], ինչ չհասցրինք հասկանալ՝ նրա խոսքերի խորության [պատճառով]: Եվ զարմացան թագավորն ու ողջ բազմությունը, թե ինչպես իր սրտում մահվան ահ չունի և այսքան հանդիստ մտոք իմաստություն է խորհում:

Իբրև մտոք քաջ ու անվախ մարդու [թագավորը] հրամայեց նրան արծաթ տալ, սակայն նա չընդունեց և ասաց. «Քո արծաթը թող քեզ մնա» և ողորմածություն խնդրեց նրանց հանդեպ, ով-

քեր նրա բարկուկթյունն էին հարուցել, և այսպես ուղևորվեց ե-  
կավ<sup>1</sup>:

Քանի որ երանելին իր դստերը կնուկթյան էր տվել Մամիկոն-  
յանց տեր Համազասպին, որը Հայաստանի սպարապետն է,  
դուստրը Համազասպին պարգևեց երեք որդի՝ սուրբ Վարդան,  
սուրբ Հմայակ և երանելի Համազասպեան, որոնց աստվածային  
այրը տվեց իր ժառանգուկթյունն ու գյուղերը:

Բ. Այս ընթացքում նա թողեց իր աթոռն ու Հաստատվեց  
Հունական բաժնում: Նրա մոտ եկան Հայաստանի իշխանները և  
խնդրում էին, որ վերստին նստի իր աթոռին: Սակայն չհնազանդ-  
վեց նրանց և հարկադրված եղավ պատմել տեսիլը: Իշխանները  
մեծապես տիրեցին: Եպիսկոպոսական աթոռի պահպանուկթյան  
համար [Սահակը] նրանց տվեց երանելի Մաշտոցին, որը Մեսրոպ  
էր կոչվում և չէր ուզում հեռանալ նրանից: Սակայն աստվածա-  
յին այրը դիմեց [Մաշտոցին] և ասաց. «Գնա նրանց հետ, և երբ  
ես հեռանամ այս կյանքից՝ դու նույնպես էլ ի կենաց»<sup>2</sup>:

Այնուհետև, երբ հասավ սրբի կատարման ժամանակը, օրհնեց  
մանուկներին և իր ունեցածը առմիշտ հանձնեց ժառանգներին ու  
նրանց հարազատներին և պատվիրեց, որ ամուր պահեն սուրբ  
Գրիգորի վարդապետուկթյունը, որ ճշմարտապես ուսուցանեց և  
ավանդեց բոլոր Հայաստանցիներին: Ձեռքերը առ երկինք կար-  
կառեց և աղոթքով ավարտեց մնաս բարովը Բագրևանդ երկրին,  
Բլուր կոչվող գյուղին՝ Վռամի որդի Հագիերտ Պարսից թագավո-  
րի երկրորդ տարվա սկզբին: Այս կատարվեց Նավասարդ ամսի  
30-ին, որ է ապրիլ, օրվա երկրորդ ժամին, ուստի երանելին վախ-  
ճանվեց նույն ամսի նույն օրը, երբ ծնվել էր:

Գ. Քահանաների ու ազատների բազմուկթյունը վերցրին  
նրա տենչալի մասունքները և տարան Տարոն աշխարհ, իր բնիկ  
ժառանգուկթյուն սեպհական գյուղ, որ կոչվում է Աշտիշատ, և  
անդ հանդստարան պատրաստեցին, տեղում նախախնամական  
ցուցմամբ վանք հաստատեցին և նրանում՝ լիուլի սնունդ և հա-  
գուստ ունեցող եղբարց բազմուկթյուն:

Սահմանեցին նրա հիշատակի տոն, երբ հավաքվում էր ժո-  
ղովրդյան բազմուկթյուն՝ հեռավորներ ու մերձավորներ, և ինք-  
նակամ գալիս էին ազատներ ու քահանայից բազմուկթյուն՝ ի հի-  
շատակ նրա: Նրա բարեխոսուկթյամբ շատերը բուժվում էին՝ ամեն  
մեկն իր հիվանդուկթյունից, և այդպես տուն վերադառնում՝ ի  
փառավորուկթյուն Հոր ու Որդու և Սուրբ Հոգու, որին և փառք  
հավիտյանս հավիտենից: Ամեն:

<sup>1</sup> Սկզբից մինչև այստեղ գրաբար բնագիրը ընդհատումներով է գուգակշիռ վրացերեն  
բարգմանությամբ:

<sup>2</sup> Այս դրվագը ևս չկա հայերենում:

**7. ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՆԻ ԵՎ ՆՐԱ  
ԵՂԱՅՅՐՆԵՐ ՀՄԱՅԱԿԻ, ՎԱՀԱՆԻ ԵՎ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԿ  
ՍԱՀԱԿԻ ԵՎ ՆՐԱՆՑ ՀԵՏ ՀԱՐՅՈՒՐ ԵՐԵՍՈՒՆՅՈՒԹ  
[ԱՐԱՆՑ] ԵՎ ԱՅԼՈՑ, ՈՐՈՆՔ ԿՈՏՈՐՎԵՑԻՆ ԱՆՀԱՎԱՏ  
ԹԱԳԱՎՈՐ ՀԱԶԿԵՐՏԻ ԿՈՂՄԻՑ ՄԵԾ  
ԾԱԿԱՏԱՄԱՐՏՈՒՄ, ԵՎ ՈՐՈՆՔ ԱՅԼՈՒՐ ՔՐԻՍՏՈՍԻ  
ՀԱՎԱՏԻ ՀԱՄԱՐ ՄԱՐՏՆՉԵԼՈՎ ՆԱՀԱՏԱԿՎԵՑԻՆ:  
ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՆԻ ԵՎ ՄՅՈՒՍ  
ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ՈՒ ՀԱՅՈՑ ԶՈՐԱԿԱՆԱՑ:**

*Օրհնա՛, Տեր*

Ա. Մեծ է Աստծո սերը, առավել և նախընտրելի անցողիկ ամենայն մեծությունից, որը իրեն հուսացողներին անազ է դարձնում՝ իբրև անմարմինների, ովքեր գինվում են քրիստոնեկան հավատքով՝ իբրև հաստատ զենքով, քանզի ոչինչ են նկատում իրենց անձանց մահը, նաև գանձերի հափշտակումը, ընկերաց կոտորածը, ընտանյաց գերեվարումը, ոչինչ են համարում իրենց հասած ծանրագույն չարիքները, այլ որպեսզի միտլթյամբ անձնանան Քրիստոսին:

Իսկ կորովին ու քաջ նետաձիգ Վարդանը Քրիստոսի գործությամբ իր գինակիցներով ոչ քիչ պատերազմ մղեց հանուն սուրբ եկեղեցու: Այսքան կռիվներից ու մարտերից հետո հաղթում էր ամեն անգամ: Իսկ վերջին մարտի ժամանակ ոչ սակավ քաջություն ցուցաբերեց և մարտնչեց այդ մեծ ճակատամարտի տեղում, ուր և ինքը արժանի եղավ քաջությամբ կատարյալ նահատակության: Եվ մարտը երկարելով՝ օրն ավարտվում էր և երեկոն հասնում: Ընթացքում [միջան մեջ] անթիվ կոտորվեցին և խտացյալ ընկան՝ ինչպես անտառի փայտը փայտահատից:

Եվ այնտեղ էր տեսնելու նիզակների բեկումն ու ազեղների կոտրատումը, որի պատճառով հայտնի չէին դառնում սրբերի մարմինները՝ ովքեր հանուն Քրիստոսի կոտորվեցին, և անհավատների, որոնք ընկան սրով, և սաստիկ տագնապ եղավ նրանց

\* Հայերեն քննադրում՝ Հրոտից L (30):

երկուստեք: Իսկ ովքեր կոտորածից [ողջ] էին մնացել ուժասպառ եղան և ցրվեցին լեռներն ու դաշտերը, ձորերի ամրուկները, և ուր միմյանց հանդիպում էին՝ դարձյալ մարտի էին բռնվում և կոտորում իրար՝ մինչև արևի [մայր] մտնելը, քանզի երկուստեք մարտողները իրար թիկունք չէին դարձնում, և չկար կողմ, որը պարտվում էր: Սակայն քանի որ Հայաստանի զորավարը ընկել էր այդ մեծ ճակատամարտում, ուստի չգտնվեց մեկը, որը ի մի հավաքեր ցրվածներին գունդ առ գունդ, ովքեր մնացել էին, թեև մնացյալները ավելի էին, քան թե որոնք կոտորվել էին, սակայն ցրվել էին ամեն տեղ, տեղից տեղ էին ընկնում երկրի ամրուկ-յուններում և ամրանում բազում գավառների բերդերում, որ ոչ ոք կարող էր գրավել:

Բ. Ահա այդ քաջ ավագանիների անունները. Մամիկոնյանների տոհմից արին այդ Վարդան՝ Հարյուր երեսուն երեք մերձավորներով, Խորխոռունյաց տոհմից զորեղ նետածիգ Խորենը՝ տասնութ մտերիմներով, զարմանալին Տաճատ՝ տասնութ այրերով, իսկ Դիմաքայանց տոհմից իմաստունն Հմայակ՝ քսաներկու մերձավորներով, Քաջբերունյաց տոհմից հրաշակերտն [Ներսես] բազում մտերիմներով, Գնունյաց տոհմից մանուկն Սահակ՝ երեք մոտիկներով, Անձավացյաց տոհմից արդարն Աձմինը՝ (Արսենը) յոթը մերձավորներով, Սրովանձոյաց տոհմից հաջողակն Գարեգինը՝ իր երկու տոհմակիցներով և տասնութ այրերով: Այս յոթանասունյոթ ավագանիք ճակատամարտի տեղում ընկան, և մեծամեծ նախարարներից ինը նույն տեղում վախճանվեցին: Արքայական տանից, Արծրունյաց տանից և այլ բազում տներից երկու Հարյուր երեսունյոթը և այլք յոթ Հարյուր քառասուն [նահատակներ], որոնց անունները զրված են կենաց գրքում, իսկ միահամուռ հաշվվում են հազար երեսուն մեկ, որոնք մեծ ճգնանքով կոտորվեցին հանուն Քրիստոսի սուրբ եկեղեցու:

Իսկ ուրացյալներից ընկածները չորս հազար քառասուն երեք մեծապես պատվականներ էին, որի պատճառով Հուլի վրդովվեց Մուշկան Նիվսալավարտը, երբ տեսավ, թե իր գնդերը յոթ անգամ ավելի են կոտորվել, քան Հայոց գնդերը, [մինչդեռ Հայոց զորքի] հատվածներ կային ամրոցներում: Նրանց մոտեցան Պարսից զորքերից և երգմամբ խոստացան խաղաղությամբ մնալ նրանց հետ: Իսկ նրանք ընդունեցին և լսեցին նրանց: Այնժամ այդ անհավատը հրամայեց կոտորել նրանց, իսկ այս հավատավորները երկու

Հարյուր հիսուններեք հոգի էին, որոնք բարբառեցին և ասացին. «Գոհուկթուն քեզ, տեր Աստված մեր, որովհետև քանի դեռ չեն ավերված քո եկեղեցիները և ազատ են քո սրբերի տաճարները և քո եկեղեցիների բոլոր ուխտերը ամուր պահած՝ մեզ երկինք կանչելու արժանի արիր: Եվ այժմ մեզ էլ համարիր այն երեկի քո ծառաներ քաջ նահատակների հետ ընկած և մեր արյունը նրանց արյան խառնված, որոնք ընկան և հաճո եղավ այս բազմուկթյունը Քրիստոս, իբրև զուարակ քո եկեղեցիների համար»:

Եվ այպես վախճանվեցին, և անհավատները անխնա որոնում էին այդ հավատավորներին, ուստի Տայոց երկրում Պարսից մեկ գունդ գտավ և դյուղերից մեկում այրեց երկու եկեղեցի:

Գ. Երբ Հայոց գունդը այս տեսավ, հարձակվեց թշնամու վրա և վերին օժանդակությամբ հաղթեց ու նրանցից շատերին կոտորեցին և ոմանց էլ փախուստի մատնեցին երկրից և բազմիցս հետապնդելով՝ սպանեցին:

Եվ այս բազմաթիվ ճակատամարտերում երանելին Հմայակը՝ Հայոց սպարապետի եղբայրը, վրա էր հասնում նրանց և անասման քաջությամբ կռվում թշնամու հետ ու վախճանվեց առաջին իսկ խոստման համաձայն, որ խոստացավ սուրբ եկեղեցիների հանդեպ: Իսկ մյուսները անընդմեջ հետապնդում էին թշնամուն: Եվ երբ այս ամենը կատարվեց, Աստծո օժանդակությամբ Պարսից գնդերը դադարեցին բոլոր վայրերում: Ուստի շատ ուրիշներ կովեցին հանուն ճշմարիտ հավատի և Քրիստոսից անապական պսակ ստացան, այն ժամանակ, երբ սուրբ Գարեգ[ինը] Քրիստոս քարոզելու համար կանգնեց թագավորի առջ: Թագավորը զայրացավ և հրամայեց կապել նրա ձեռքերն ու ոտքերը, դատապարտեց նրան երկու տարվա և զրկեց նրան տիրույթից և սպանեց նրան Քրիստոսի անվան համար:

Եվ բազումք նահատակվեցին հանուն Քրիստոսի փառավորման Հայոց երկրում, որոնց անունները զրված են ճշմարիտ սուրբ Երրորդուկթյան Կենաց գրքում, որին փառք հավիտյանս հավիտենից: Ամեն:

8. ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ՍՈՒՐԲ ՇՈՒՇԱՆԻԿԻ՝ ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՆԻ ԴՍՏԵՐ, ՈՐԸ ՍԱՀԱԿԻ ԴՍՏԵՐ ՈՐԴԻՆ ԷՐ: ԱՅՍ ՍՈՒՐԲ ՇՈՒՇԱՆԻԿԸ ՆԱՀԱՏԱԿՎԵՑ ՔԱՐԹԼԻՈՒՄ ԻՐ ԱՄՈՒՍՆՈՒ ԶԵՌՔՈՎ, ՈՐԸ ՔԱՐԹԼԻԻ ԱՆԹԻՊԱՏՐՈՍՆ ՈՒ ԱՌԱՋՆՈՐԴՆ ԷՐ

Ա. Սուրբ ու երանելի ոմանք՝ նախարարաց մեջ առաջինները և քահանայական կարգով Հայոց երկրի վերադիտողները, մեր լուսավորութեան պատճառներն [էին], որոնք որդեծնութեամբ, առաքիլի կենոք հասան մինչև սուրբ Սահակ, որը սուրբ Գրիգորի որդի Վրթանես Մեծի որդու՝ երանելի Հուսիկի որդու՝ Աթանազոսի որդի Ներսես Մեծի որդին էր: Սա ամենայն առաքիլութեամբ իր նախնայաց նման էր և աղոթքով ավելի ևս առավելյալ, քանզի իր մոտ ուներ յոթանասուն կրոնավոր՝ խնամածու և պահք պահող այրեր, մաշկեկ հագած, ձորձազգեստ, բոկոտն, որոնք հար նրա հետ էին շրջում և հանապազ կանոն կատարում՝ ինչպես անապատում գտնվողները, և սուրբ Սահակը միշտ գերազանցում էր: Սրա օրոք ավարտվեց երանելի հարց որդեթառանգությունը: Նա միայն մի դուստր ուներ, որին Սահականուշ կոչեց, [և] որը կնութեան տվեց Մամիկոնյանց տեր Համազասպին: Սրանից ծնվեց սուրբ Վարդանը, իսկ Վարդանից՝ սուրբ Շուշանիկը, որին կնութեան տվեցին Վրաց անթիպատրոս առաջնորդին: Նա մարդկային երկյուղով կամ թե յուր կամքով՝ հանուն իր դստեր, մոգութեան մտավ և զրադաշտյան կրոն խոստովանեց, որին չհնազանդվեց սուրբ Շուշանիկը, ուստի հանդիմանում էր նրան և վկայակոչում Աստծուն ու չարագործաց սպասող դատաստանը: Իսկ [ամուսինը] նրա հանդիմանություն և [իր] անօրեն անկողնու պատճառով ավելի ևս բորբոքվում էր: Բազում չարչարանք հասցրեց երանելի Շուշանիկին. գանահարումով, բանտով, սովով ու ծարավով և տեսակ-տեսակ տանջանքով վեց տարի այդ անաստվածն ու Աստծուց և քրիստոնեից հույսից ամենևին հեռացյալը նեղում էր նրան: Իսկ երանելի Շուշանիկը ամենայն ինչ տանում էր համբերությամբ ու գոհունակությամբ. լեզուն անկարող է պատմել, թե երանելի այդ կինը քաջությամբ ինչեր կրեց իր ամուսնուց:

Բ. Իսկ երբ նրա վախճանման ժամը հասավ, [մարդ] ուղարկեց և կանչեց քահանայապետ Սամուելին ու Հովհաննիս, որոնք քաջալերում և մխիթարում էին նրան իր նեղուլթյունների միջոցին ու մեծապես հոգածու էին նրա հանդեպ՝ հանդերձ ընտանյոք: Իսկ նրանք եկան և օրհնությամբ ու զոհոճությամբ ուղարկում էին նրան առ ի Քրիստոս՝ ամենեցուն նավահանգիստ, որը հանգրվան է տալիս հանուն իրեն տվայտանք կրողներին:

Եվ նրանց հետ գալիս էին իշխաններ և տիկիներ, Քարթլյան երկրի ազնաւորներ ու անագգիք, որպեսզի մասնավորվեն նրա երանությանը՝ իբրև Քրիստոսով խիզախի և երևելու: Եվ բոլորը փառաբանում էին Աստծուն, և բոլոր եպիսկոպոսներն ու իշխանները աղերսանքով խնդրում նրանից, որպեսզի իր ոտքերի կապանքները նրանց ի բժշկություն տա, որը և ծանուցեցին տիկնոջը: Իսկ նա պատասխանեց և ասաց նրանց, թե. «Ես արժանի չեմ այդ ամենին, սակայն ձեր աստվածսիրության համար թող լինի ինչպես կամենաք: Կամ՝ այլևս ինչ համարեմ այս նեղուլթյունները, որ հասան ինձ, այլև՝ ով բոլորի հույսն է և տեր՝ Հիսուս Քրիստոս, թող ընդունի մեզ բոլորիս միասին իր արքայություն և օրհնի ձեզ ու հաստատուն պահի և պարգև հատուցի ձեր վաստակոց:

Գ. Եվ հրամայեց իր մարմնի նշխարները դնել այն առաջին տեղը, որտեղից նրան քարշելով հանեցին՝ «Եթե պատշաճ համարեք»: Եվ արցունքով բաժանվեց բոլորից ու աստվածային շնորհով զորացած՝ ասում էր. «Փառք քեզ, սուրբ Երրորդություն, որ փառաբանվում ես ամենայն երևելի և աներևույթ արարածներից, ընդունիր ինձ քո սիրելյաց հետ, որպեսզի հասնեմ ես իմ սուրբ հայրերի մոտ, որոնք սիրեցին քեզ և հաճո եղան տերությանդ առջև, որոնց մահը պատվական է քո առաջ<sup>1</sup>: Տեր իմ Քրիստոս և իմ ապավեն, որդ զորություն տվեցիր ինձ իմ ամենայն նեղությունների մեջ՝ հանուն քեզ չարչարանքներ կրելու, և ամուր պահեցիր իմ հույսը քո հանդեպ, և արդ, սիրելիներիդ հետ քո անանց արքայությանդ մասն տուր ինձ, քանզի քո է տերություն և իշխանություն հավիտյանս հավիտենից»<sup>2</sup>: Ու բոլորն ասացին՝ ամեն: Եվ ավանդեց հոգին բարի խոստովանությամբ, ու բոլորը

փառաբանեցին Աստծուն, որը նրան այսպիսի համբերություն տվեց:

Դ. Եվ արագ-արագ մաքուր կտավ վերցրին ու լվացին սրբի մարմինը որդերից և թարախներից, որ կրում էր բանտում, երկու եպիսկոպոսներով վերցրին նրա սուրբ մարմինն ու ժողովրդյան, քահանաների և սարկավագների բազմությամբ, խնկով ու սաղմոսով, հոգևոր երգով, մոմերով ու հոտավետ խուկերով տարան սուրբ եկեղեցի և ամփոփեցին: Եվ երանելի քահանայապետեր Սամուելն ու Հովհաննը ամենայն ժողովրդի հետ փառաբանեցին Աստծուն և այդ գիշերը լուսացրին արթնությամբ:

Ե. Եվ փառաբանությամբ ու ժողովրդյան բազմությամբ նրա հիշատակը կարգեցին տարեց-տարի՝ ի փառս Հոր և Որդու և Սուրբ Հոգու այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից: Ամեն:

<sup>1</sup> Հմմտ. Մաղմ., ԾԺԵ, 15:

<sup>2</sup> Հմմտ. Մաղմ., ԾԽԵ, 13:

## 9. ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ՍՈՒՐԲ ԱՏՈՄԻ, ՆՐԱ ՈՐԳՈՒ ԵՎ ԸՆԿԵՐԱՑ

Ա. Պարսից անհավատ թագավոր Հագկերտի օրոք քրիստոնյաների հավատքը ամբողջ աշխարհում ծաղկում էր ապրում: Երբ այս տեսան մոգպետներն ու մոգերը, սատանայի օժանդակութամբ այսպես խորհեցին՝ ի մի ժողովվեցին և թագավորին հայտնեցին ու ասին. «Տերությունդ թող իմանա, որ մեր հավատքը և մագդեսը կործանվեցին, և ձեր դյուցազն նախնյաց ծառայությունը վերացավ, քանզի բոլորը քրիստոնեություն հակվեցին: Եթե չհրամայես կրակով, սրով ու կախաղանով կոտորել նրանց, ովքեր քրիստոնյաներ են կոչվում, իսկ առավելապես ովքեր Հայաստանից այստեղ հասած ազատներ և ավագանի հեծյալներ են, քանզի սրանք առավել ևս թշնամի են կրակին ու մոգությանը, այլևս չի փառավորվի աստվածոց պաշտամունքը»:

Իսկ անհավատ թագավորը հրամայեց իր տերության բոլոր ծայրերը հրովարտակ արձակել, որպեսզի «Ոչ ոք համարձակվի իր անձը քրիստոնյա կոչել, թե ոչ՝ սրով, կրակով և կախաղան հանելով կպատժվեն, իսկ ովքեր կատարեն մեր հրամանը և փառաբանեն կրակն ու մոգերին ծառայությունը, բարձի և մեծ պատվի տիրության կարժանանան»:

Այս պատճառով քրիստոնյաների հալածում եղավ, ուստի անսահման տանջանքով չարչարում էին և կոտորում այլազան մահվամբ: Իսկ քաջերը պսակ էին առնում և ոչինչ համարում մահն ու այդ տանջանքները՝ ըստ Առաքյալի խոսքի, թե «Ո՛վ մեկնեսցէ զմեզ ի սիրոյն Քրիստոսի՝ նեղութիւնն թէ՞ անծկութիւնն»<sup>1</sup> և ապա սրա շարունակությունը, և անցողական այդ մահվամբ ու չարչարանքներով և զրկանքով անանց բարյաց կարժանանանք և հավիտենական գանձեր կժառանգենք:

Բ. Ծշմարտություն թշնամի սատանան երբ այս տեսավ Հայոց ազատագնդի հանդեպ, որոնք Քրիստոսի սեպուհ ծառաներ են, խարդավանքով նրանց մոտ ուղարկեց ոմն ավագանու և այս-

\* Հայերեն քննադրում՝ Նաասարդի Թ:

<sup>1</sup> Առ Հով., Ը, 35:

պիսի թուղթ գրեց. «Աստվածազոր արքայից - արքա Հազկերտից Հայոց աշխարհի իմ սիրելի ծառա ազատանուն և պանծալի հեծե-լաղորաց, որքդ ինձ պատկանող մասում եք, խաղաղություն ձեզ իմ տերությունից: Հիշեցինք ձեր վաստակներն ու քաջություններն-ըը մեր թշնամիների հանդեպ և կամենում ենք պատվով ուղևորել ձեզ ձեր երկիր, որպեսզի առավել ևս ջանաք մեզ ծառայել: Արդ՝ չտապեք դալ արքունի դուռ»:

Երբ իմացան թագավորի հրամանն ու նրա կողմից ուղարկվածի խոսքերը, կռահեցին թշնամու դաղտաձիգ նետերը, որը միշտ մարտնչում է Աստծո ծառաներին, ճանապարհ ընկան: Եվ երբ հասան Հայաստանի սահմաններից հեռացող ճամփաբաժին, աստվածային շնորհով, վերին գորությամբ խորհեցին, և Գնունյաց տեր Ատոմը (Անոմը) ժողովեցի իր ազատներին, և միմյանց ասացին ու սկսեցին խոսել. «Մենք գիտենք, որ անհավատ թագավորը մեզ կանչում է, որպեսզի մեզ հնազանդեցնի իր մութ մտածումին և լույսի փոխարեն մեզ խավարի մատնի և մեզ անցողիկ պատիվ խոստանալով՝ հեռացնի հավիտենական կյանքից, որ խոստացավ Աստված իր յուրային ծառայոց անուտ բերանով իր սիրեցյալներին՝ լույսով ու անհատնում գանձով պսակել երկնքում: Թեև մենք անարժան ենք, բայց նրան ենք ապավինում, որպեսզի արժանի դռնվենք, քանզի աստված միայն հոժարություն է փնտրում»:

Այս կապակցությամբ միախորհուրդ եղան բոլորը, հանուն մեր տեր Հիսուս Քրիստոսի մահ նախընտրեցին, քան թե առ ժամանակ մի վայելել մեղքով, և ասացին. «Չենք սարսափում մարմնական կոտորումից՝ ըստ սուրբ Ավետարանի խոսքի, որ ասում է. «Մի գարհուրիցիք յանցանէ, որ սպանանեն զմարմին և սակայն զոգին ոչ կարեն սպանանել»<sup>2</sup>: Եվ այնուհետև իրենց անձերը վստահեցին սուրբ Երրորդության ու ետ դարձան Հայոց երկիր:

Գ. Եվ երբ այս լուրը արքունի դուռ հասավ, նրանց հետևից բազում գունդ ուղարկեց և հրաման տվեց նրանց բոլորին սրով սպանել: Իսկ այդ սրբերն ու երանելիները երբ Հայոց աշխարհ հասան՝ Անձավացյաց երկիր, մի լեռնոտ գեղեցիկ տեղում քարանձավի մեջ բնակող ոմն մենակյաց գտան, որ բազում պահքով ու զրկանքով էր ապրում: Բոլորը միասին նրան հասան և ծունր

<sup>2</sup> Հմմտ. Ղուկ., ԺԲ, 4:

դրին, օրհնություն առան նրանից և փառաբանեցին Աստծուն: Եվ հաղորդեցին իրենց հասած փորձությունները և ճանապարհին կրած նեղությունը: Սուրբ հոգու շնորհով, սակայն, ազդ էր եղել նրան և ասաց նրանց. «Երանելի եք դուք, աստվածասեր մարդիկ, քանզի շուտով տեսնելու եք, որի հանդեպ բաղձում եք, քանի որ տեր Քրիստոսը լավագույնը պիտի հոգա ձեզ համար»: Եվ օրհնություն առան նրանից ու լեռներով փոխադրվեցին և մեծ ուրախությամբ ճամբար հաստատեցին նրա մոտակայքում՝ իբրև հրեշտակաց գունդ՝ սաղմոսներով ու առ Աստված օրհնությամբ:

Դ. Եվ կեսգիշերին մոտ սուրբ Ատոմին զարմանալի տեսիլ ներկայացավ՝ բոլորի վրա կամարածև լույս փայլատակեց, և մի լույսով զարգարուն մարդ, տեսքով գեղեցիկ, ինչպես անբիծ, նրանց կարմիր վարդի պսակներ էր բաժանում և տեր Ատոմին ասում. «Արիացեք բոլորդ, Քրիստոսի զորականներ»:

Իսկ նա ահաբեկվեց տեսիլից, արթնացավ, բազում արցունքով ու հուզումով աղոթքում էր առ բարերար Աստված և ասում. «Տե՛ր, ինքդ գիտես մեր սրտերի խնդրելիքը, հանուն քեզ ենք մեր անձերն ի մահ դրել և արհամարհել այդ անհավատ թագավորի հրամանը, որովհետև սուտ խոսքերով ստիպում էր մեզ հեռանալ քո բարիքներից և մառախլապատ ու հողախառն նրանց հմայքով կամենում էր ոչնչացնել մեզ: Արդ, բարեգութ տեր, մեզնից մի խնայիր քո ողորմածությունը, այլ վերահասու եղիր մեզ, որպեսզի չպանծանա թշնամին քո ծառաների հանդեպ. թեպետ մենք անարժան ենք, սակայն դու, տե՛ր, մեղավորաց հանդեպ քո սովորությանդ պես ողորմած եղիր, քանզի եկար ոչ արդարներին, այլ մեղուցյալներին կոչելու, այլ և կենսատու քո արյունը բղխեցնելու, փրկիր մեզ»:

Այսպես էր աղոթում այդ երանելին՝ մինչև հասավ լուսաբացի ժամը, և բոլորը վեր կացան առավոտյան պատարագ կատարելու և սովորականի պես աղոթք կատարեցին:

Եվ ապա սուրբ Ատոմն սկսեց և պատմեց նրանց այդ գիշերային տեսիլը: Եվ նրանք բոլորը արցունքով ձայն տվեցին ու ծնկի չոքեցին բարեգութ Աստծո առաջ, միաբերան բարբառում էին և ասում. «Տե՛ր Աստված, մեր Հիսուս Քրիստոս, եթե մեզ արժանի ես նկատում քո անվան համար մեռնելու, այս է, ահա, պատրաստ ենք ամենայն ժամ, ինչպես սպանդի բերված ոչխարներ, որպեսզի վախճանվենք բոլորս հրաշալի քո խաչով, քան թե խաբվենք

մենք անիծյալ և սնապաշտ թագավորի կողմից, որպեսզի ամոթա-  
հար ոչնչանան մեր բոլոր թշնամիները»:

Ե. Իսկ սատանայի սպասավորները՝ Պարսից այդ սեազնդե-  
րը, ողջ գիշերը հետամուտ եղան նրանց և հասան լեռանը, բռնե-  
ցին ինչ-որ մեկին և հարցրեցին. «Ո՞ւր են բանակել»: Իսկ նա  
սարսափեց անցողիկ մահից և նմանվեց մատնիչ Հուզային ու  
հայտնեց նրանց տեղը: Իսկ նրանք մեծ ամբոխով արագ-արագ  
հասան այն տեղը, ուր էին այդ սրբերը: Եւ այդ քաջ նահատակ-  
ները երբ նրանց տեսան, քանզի անաստվածները արդեն հարձակ-  
վում էին, իրենց արիության սովորության համաձայն միմյանց  
ձայն տվեցին ու ասին. «Ձի նստեք», ուստի այդ տեղանքը այն օ-  
րից մինչև օրս կոչվեց Ձիակալ ի վանք: Մինչ այն քրիստոսասեր-  
ները հեծան իրենց ձիերն ու հավաքվեցին բարձունքի վրա պատ-  
րաստվեցին մարտի: Իսկ ի սկզբանե աստվածային պահպանութ-  
յամբ վերստին իր սիրեցյալներին նույն գիշերվա տեսիլը հայտն-  
վեց՝ անանցն այն լույսն ու անթառամ պսակը: Անմիջապես թո-  
ղին իրենց երիվարներն ու ուրախությամբ պահեցին իրենց զեն-  
քերը և առաջ ընթացան՝ ի կատարումն: Իսկ սուրբ Ատոմն իր  
սքանչատեսիլ որդուն վախճանման պահին առաջ մատուցեց՝ ան-  
գիտանալով նրա մանուկ տարիքը: Իսկ նա սրտառու խոստովա-  
նությամբ ընդունեց ի Քրիստոս վախճանը և պսակավոր դար-  
ձավ: Այն ժամանակ արդեն Ատոմը իր երանյալ խմբով սաղմոսե-  
ցին ու ասացին. «Սիրեցաք զքեզ, Տէր, զի լուար ձայնի աղօթից  
մերոց, ընկալ զկամաւոր պատարագս մեր և խառնեա զմեզ զամե-  
նեսեան ի գունդս սրբոց քոց»<sup>3</sup>: Եվ այդ ամբողջ գունդը արժանա-  
ցավ արիաբար բարի խոստովանության և նույն տեղում ավան-  
դեցին իրենց հոգին Աստծուն, և նրանց սուրբ արյունը հեղվեց  
գետնին:

Զ. Իսկ նույն գնդից մի պարսիկ շնորհով լցվեց և արժանա-  
ցավ նույն տեսիլին, բարբառեց ու ասաց. «Ես ևս քրիստոնյա  
եմ», որը նույնժամ վախճանվեց և մկրտվեց իր արյամբ ու դաս-  
վեց նախապես Աստծո իմացությամբ [նահատակված] սրբերի  
խմբին:

Մինչդեռ Հայոց գնդից մի թշվառական փախավ և ընկավ մի  
հովիտ մոտ, վերցրեց նրա հովվական մախաղն ու զիմափոխվեց

<sup>3</sup> Հմմտ. Սաղմ., ԾԳ, 8, ԾԺԳ, 1:

հովվի և փոխեց լուսե հագուստը և հավերժական կյանքը ապա-  
կանացու զգեստով՝ հանուն սին կյանքի: Իսկ այն հովիվը հոժա-  
րությամբ դիմեց նահատակության վայրը և ընկալեց մասն մար-  
տիրոսության ու այդ սրբերի հետ երկնային հարսանյաց արժա-  
նացավ: Իսկ նա հեռացավ՝ որպես սրբոց քառասնից մեկը, և կոչ-  
ման տեղը լրացրեց բաղնիսի պահապանը, քանի որ թույլերն ու  
երկմիտները ամենայն ժամ կորնչում են:

Է. Երկու օր անց հայտնություն եղավ սուրբ ճգնավորին,  
քանզի բոլորի վրա սքանչելի լույս պայծառացավ, որը և մեծ  
զարմանքով հայտնեց եպիսկոպոսին ու քահանաներին և ազատ-  
ներին ու ողջ ժողովրդին, որոնք և մեծ փութով հասան այդ տե-  
ղը: Եվ սպիտակ կտավ առնելով՝ ամփոփեցին սրբերի մասունքնե-  
րը և գետեղեցին հանգստարանում՝ լապտերներով ու խնկով,  
սաղմոսներով և հսկմամբ: Եվ տոն սահմանեցին բազմաց հավա-  
քումով ու մեծ ուրախությամբ ապրիլի իննին<sup>4</sup>:

Իսկ որ տեղում վախճանվեցին՝ սրանք են. նրանց գլխավոր  
սուրբն Ատոմը իր որդով հանդերձ Գնունյաց տոհմից և սուրբն  
Վարոսը Ոստան տանից, սուրբն Ներսեհ Երան[դու]նի տանից,  
սուրբն Վարձավորը և այլ բազում երանելի նրանց ընկերներ, ո-  
րոնք արիացան և անապական պսակ առան, որոնց անունները  
գրված են Կենաց գրքում:

Իսկ սուրբն Մանաճիհր Ռշտունին յուր երանելի ընկերների  
հետ առաջ էր անցել իր աշխարհի սահմանները և այնտեղ գտել  
վախճան՝ Ոչխարաց վանք կոչված տեղում: Հավաքեցին նրանց  
մասունքները և ամփոփեցին բարձունքի վրա գտնվող եկեղե-  
ցում:

Այսպես վախճանվեցին այդ ախոյաններն ու քաջերը Պարսից  
անհավատ արքա Հագկերտի կողմից՝ հանուն մեր տեր Հիսուս  
Քրիստոսի, մերժելով այս կյանքը և ամոթով թողին այդ անհա-  
վատ արքային՝ զորացած Աստուծով՝ Հորով և մեր տեր Հիսուս  
Քրիստոսով և Սուրբ Հոգով, որին է փառք հավիտյանս հավիտե-  
նից, ամեն:

<sup>4</sup> Նախապես եղել է «Նավասարդի», որը մաքրումով փոխարինվել է:

## 10. ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ՍՈՒՐԲ ՅԻՉՏԻԲՈՒՉՏԻ

Տեր ողորմյա

Ա. Պարսից Կավատ թագավորի որդի խոսրովի թագավորութ-  
յան ժամանակ առավել պայծառանում ու զորեղանում էր քրիս-  
տոնյաների հավատը, և Պարսից աշխարհում արքունի դրանը ոչ  
քչերը նահատակվեցին: Եվ երբեմնի մի մարդ կար՝ Մահաչոտ ա-  
նունով, նույն Պարսից աշխարհի Քնարաստան կոչվող գյուղից,  
որի ծնողները կրակի սպասավորներ էին: Հենց մանկությունից  
նա մոգություն սովորեց և բոլորից առավել հաջողակ էր ու կրա-  
կի սպասավորաց կողմից ուսյալ, ուստի իմաստուն էր խորհրդով:  
Պատահեց ինչ-որ ժամանակ, և սա թագավորի բանակատեղի հա-  
սավ և հանդիպեց այսպիսի գործի՝ երբ տանջանքի էր ենթարկ-  
վում ոմն վկա՝ Գրիգորիոս անունով մեկը: Նրան զարմացրեց նա-  
հատակի համար-ձակությունը, իր մտքում նախանձեց նրան բա-  
րի խանդով և ասաց. «Տեր Աստված քրիստոնեից, նկատիր ինձ և  
ճանապարհ ցույց տուր, որով գնամ, ինձ համար էլ բաց ողորմու-  
թյան դուռը՝ ինչպես այս քո ընտրյալին, որպեսզի արժանի լինեմ  
քո արքայությանը, որդ տեր ես երկնի և երկրի»:

Նույն գիշերն իսկ նրան տեսիլ երևաց՝ որպես թե նա  
գտնվում էր սուրբ եկեղեցում: Նրան հայտնվեց սպիտակազգեստ  
մի մարդ, որն ասում էր. «Երանելի ես դու, որ այսպիսի լուսավոր  
տեղի արժանի եղար, որպեսզի այսուհետ հավատաս երկնից ու  
երկրի արարչին ու նրա միածին Որդուն և Սուրբ Հոգուն՝ նրա  
համագոյին ու ամենայնի համագործակցին: Իսկ դու գնա և սո-  
վորիր այս սուրբ Ավետարանից»:

Երբ արթնացավ հասկացավ տեսիլն ու հավատաց ողջ սրտով,  
և իր մտքում ասում էր, թե «Քրիստոնյաների աստվածն է ճշմա-  
րիտ Աստված»: Եվ այնուհետև զղջմամբ էր մոգության հետևում:

Բ. Այնտեղից գնաց Սյունյաց աշխարհ և պարապեց աստվա-  
ծային գրոց ունկնդրությամբ: Մնաց այնտեղ սակավ օրեր և այն-  
տեղից հասավ Արարատյան աշխարհ, հաստատվեց Հայոց ոստան  
Դվինում, հարեց ոմն մոգ համարկարի, որին խոսրով-Պերոզ էին  
կոչում, և արհամարհանքով մոգություն էր անում: Ձմեռ ժամա-

նակ էր, Մեհեկան ամիսը, ըստ Պարսից ծեսի ամսի սկիզբը, և իրենց սովորութեան համաձայն կրակի ծառայութեան աղտեղի գոհ էին մատուցում համարկարի ապարանքում: Իսկ երանելի Մահաշոտը կրակի մոտ կանգնած էր մյուսներին հետ և փակել էր բերանը: Կրակի բոցի թեթեւան պահին այն բարձրացավ տան դարավանդակին և բորբոքվեց, իսկ մոգերը թողին գոհն ու շտապեցին կրակը մարելու: Եվ չկարողացան այն հանգցնել ու դուրս փախան և ձայն տվեցին: Եվ երբ Հայաստանի հազարապետը լսեց ամբողջի այդ ձայնը, շտապեց դեպի եկեղեցու դուռը և շտապեցնում էր եկեղեցու սպասավորներին, որպեսզի վեցնեն խաչի նշանը և դան ապարանք՝ կրակը մարելու և այդ նեղութեանից ստիպված՝ ահամա խոստովանութեան: Իսկ սպասավորները առան պատվական խաչը, և բոցը սկսեց ցածրանալ՝ մինչև մարեց բոլորովին: Պատվական խաչը մեծ հրաշք գործեց Հայոց աշխարհում և բարեպաշտից ուրախութեամբ:

Տեսավ համարկարի կինը, մեծ գոհութեամբ հայտնեց առ խաչի սպասավորները:

Իսկ երանելի Մահաշոտը հասկացավ այսպիսի հրաշքը և ուռը, որով հմայում էր, խփեց գետին ու ջարդեց, այդպես նաև բերանակապը: Ինքը մոտեցավ սարկավազին, առավ նրանից բուրվառը, խաչի առաջ խունկ լցրեց և հայտարարեց իր հավատքը, որ առ Քրիստոս էր: Խաչի սպասավորներից [մեկին] եկեղեցի ուղարկեց և հայտնեց, թե «Ինձ համար Աստուծուց ողորմածութեամբ խնդրեք, քանզի ես նույնպես քրիստոնյա եմ»:

Գ. Երբ այս տեսան մոգերը, նրան ասացին. «Ինչպե՞ս հանդգնեցիր այդպես կատարել», իսկ երանելին նրանց ասաց. «Ես վաղուց ի վեր հավատացել եմ Քրիստոսին և մոգութեամբ գողմամբ ունեի, իսկ այժմ բացահայտ եմ Քրիստոս խոստովանում և ես այլևս կրակին չեմ ծառայում»:

Երբ մոգերը այս զարմանալի [իրողութեամբ] տեսան, շտապեցին անմիջապես և հայտնեցին Նիխարական կոչվող իշխանին ու ամբաստանեցին երանելուն: Նրան ներկայացրին բռնավորին, իսկ բռնավորն ասաց. «Թշվառակա՛ն մարդ, հանուն ինչի՞ թողեցիր հայրենի մոգութեամբ և, անմիտ, կործանեցիր ուխտդ»: Սուրբը պատասխանեց և ասաց. «Ճշմարիտ ես ասում իմ մասին, դատավոր, որովհետև այս է հինգ տարի է, ինչ իզուր և պարապ անցկացրի, իսկ այժմ ճանաչեցի ճշմարիտն Աստված և հրաժարվեցի

հայրենի բազմաստվածութեանից, ուստի այս կենաց պատրանքները չեն կարող ինձ հեռացնել ճշմարիտ հավատից, այդու պատճառով եմ կրելու չարչարանքներ»:

Զայրացավ իշխանը և հրամայեց տասներկու անգամ դանահարել նրան, կտրել մազերն ու մորուքը և գրեց այս ամենը՝ ինչպես հարցաքննվեց:

Կապեց երանելու ձեռքերն ու ոտքերը և բանտ նետեց նրան: Երանելին բանտում գտավ մեկին՝ իրեն կարեկից, որի անունը Ներսես էր և որը վաղուց ի վեր բանտում երկրպագում էր Քրիստոսին: Նրանից սովորեց ճշմարիտ հավատք և Դավթի սամոսներ, և այսպես անդադար աղոթում էր:

Դ. Կարճ ժամանակ անց փոխեցին Նիխարականին և նրա փոխարեն բերին Նախապետին, [որը] ատյան նստեց և երանելի Մահաշոտին իր առաջ կանչեց ու նրան ասաց. «Ինչպե՞ս համարձակվեցիր թողնել հայրենի մոգութեամբ և հավատացիր անծանոթ Քրիստոսին»: Երանելին ասաց. «Աստված մեկ է՝ արարիչ ամենայնի, և տեսնում է բարեսիրաց միտքը, որը տեսավ իմ սիրտը [եղածը]՝ ազատված բազմաստվածութեանց անաստվածութեանից, ինձ առաջնորդեց ճշմարիտ Աստծո ծառայութեան»:

Բարկացավ Նախապետն ու հրամայեց նրան սաստիկ ծեծել և երկաթի նուշն կապանքով կապել ու տանել բանտ: Եվ մնաց բանտարկութեան մեջ և ս երեք տարի ու անդ գտնվելիս մկրտութեամբ առավ և խնդրեց քահանայից, որ նրան կոչի Իգիտբողիտ՝ անունով, ինչը թարգմանվում է Աստծո կողմից սնուցյալ, այսինքն՝ փրկյալ Աստծո, որին բանտի մեջ զորացրեց Սուրբ Հոգին: Այնուհետև հանեց իր զգեստն ու տվեց աղքատներին, իսկ ինքը հագավ այժի մորթի ու հողաթափեր և հսկում էր աղոթքով ու պահքով, անդադար սաղմոսում և այս փոփոխված կերպով գեղեցկորեն կրոնավորում:

Երբորդ տարին լրանալիս Նախապետին փոխեցին և նրա տեղակ ուրիշին դրին, որը Քնարանի Դպրիտն էր հորջորջվում<sup>2</sup>: Սա գնաց բանտ և մտադիր էր պատրել երանելուն, ու[ստի] ասաց նրան. «Քե՞զ միայն չբավարարեց Մարերի աշխարհը, որ այսպես մոլորեցրել ես ինքդ քեզ մոգութեանից և գերի բռնվել Պարսից գնդի կողմից»: Պատասխանեց սուրբն ու ասաց. «Յուրաքանչյուր

<sup>1</sup> Հայերենում՝ Յիգիտբողիտ:  
<sup>2</sup> Հայերեն բնագրում՝ Քնարանի դպրի մասին է խոսքը:

արարած իր արարչին է ծառայում, և կենդանիները իրենց սնուցիչներին են ծառայում, այդպես էլ պատշաճ է, [որ] մարդիկ իրենց արարչին ծառայեն, այդ պատճառով ես մինչև այժմ նանրության էի ծառայում, իսկ երբ Տերը նկատեց ու ընդունեց ինձ, կապեց ինձ իր սիրո պատվիրաններով, փոխեց ինձ իր շնորհի հույսով, որից անկարող են շեղել այս ունայն կենաց փորձությունները»:

Ե. Այս լսած ատենապետը զայրույթով վեր կացավ և սկսեց անխիղճ ծեծել նրան, սրբի հանդեպ տեսակ-տեսակ չարչարանքներ կիրառեց, որպեսզի նրան մոգություն հնազանդեցնի: Իսկ նա առավել ևս էր հաջողում բարի նահատակություն:

Այն ժամանակ թագավորը լսեց Հայաստանին հասած բազում բռնություններն ու տառապանքները և վստահելի երեք իշխան ուղարկեց, նրանցից մեկի անունը Ավտա (Նատո) Դրովանդական, երկրորդին՝ Պերոզ, որը Ռեոյ երկրի մոգպետն էր, իսկ երրորդը Պատա (Խոյայա)՝ թագավորի սպասավոր, որոնք եկան Հայաստան և վարում էին իրավաբանությունը: Մի օր հրապարակի վրա ժողով արին և թագավորի հրամանի համապատասխան ատյան նստեցին: Հարցաքննում էին նրանց, ովքեր նստած էին բանտում, և ովքեր թողել էին մեր դեմն ու քրիստոնյա դարձել՝ ոմն Ներսես Ռափիկ անունով և Սահակ Ատրպատականից և Իզիտբողիտ Պարսիկ, և հրամայեց նրանց բերել: Մոգպետը Ներսեսին ասաց. «Դու ինչո՞ւ դարձար քրիստոնյա»: Իսկ նա պատասխանեց. «Իմ մայրը քրիստոնյա էր, և ես մանկուց քրիստոնյա եմ և ձեր դեմը ամենևին չգիտեմ»: Սահակին նույնպես հարցաքննեցին, և նա ևս ասաց, թե «Մանկությունից ի վեր ես քրիստոնա եմ»: Իսկ երանելի Իզիտբողիտը կանգնած էր նրանց հետևի կողմում և ցածր ձայնով ասում էր. «Տե՛ր, մի բարկություն մե՞ք քով խրատեր զիս»: Ապա ներկայացրին այս երանելուն, որին [գատավորն] ասաց. «Թշվառակա՛ն, ինչո՞ւ թողեցիր լուսավոր հավատն ու արհամարհելին այդ քրիստոնեություն հավատացիր, որդ երբեմնի այլոց էիր ստիպում կրակին զոհաբերել»: Սուրբն ասաց. «Այդպես է, երբեմնի մոգություն մե՞ք զոհում էի, և քեզնից ավելի զիտակ էի, և եթե ինձ հրամայես՝ կասեմ և դու կիմանաս, [թե] որքան առավել է քրիստոնեությունը քան թե բոլոր այն պաշտամունքները, որոնք ես փորձեցի ու տեսա, քանզի միայն քրիստոնեությունն է կարող փրկել հավերժական մահից»:

<sup>3</sup> Սաղմ., 9, 2:

Մոգպետը երբ լսեց, հրամայեց իր սպասավորներին պատռել նրա պարեգոտը, հանեցին և նրա գլխի կնկուղը: Եվ հրամայեց ծեծել նրա գլուխը և հիմնովին փետել մորուքը:

Եվ հրամայեց այդ երեք երանելիներին պահել երեք օր: Եվ երեք օրից հետո նորից բերել տվեց նրանց, բայց չկարողացավ հնազանդեցնել ու կարգադրեց արգելափակել մեկ տան մեջ և չտալ նրանց սննունդ և ոչ իսկ ջուր խմելու, և ողջ գիշերը ծխով խեղդում էր նրանց: Իսկ սրբերը տկարացած աղաղակում էին առ Աստված և ասում. «Աստուած, յօգնել մեզ նայեա՛, տէ՛ր յօգնութիւն մեզ փութա՛»<sup>4</sup>: Եվ այսպես անդադար մինչ լուսաբաց սաղմոսերգում էին»:

Զ. Տասն օր անց կիրակի մի գիշեր, երբ սուրբ Իզիտբողիտը պատրաստ էր կատարման, զարմանահարչ երազ տեսավ. վարոցը ձեռքին մի մարդ խփեց նրա գլխին, և նրա աչքերի միջից արյուն բխեց: Երեք ուրիշ սպիտակազգեստ մարդ էլ հայտնվեցին և հալածեցին վարոցով խփող մարդուն և պատվական մարգարիտներով զարդարված պսակ դրին նրա գլխին: Ու երբ արթնացավ, պատմեց ընկերներին իր [տեսիլը]: Իսկ նրանք հասկացան, որ նրա ժամը հասել է: Երբ լուսացավ եկան նրան բանտ բերողները և տարան սրբին: Իսկ նա բաժանվում էր եղբայրներից և այս սաղմոսն ասում. «Ի կարդալ իմում լուաւ ինձ Աստուած ըստ արդարութեան իմում»<sup>5</sup>:

Եվ երբ ավարտվեց աղոթքը՝ հասավ տեսած ատյանին: Իսկ այս լսած քրիստոնյաները շտապեցին հասնել՝ տեսնելու նրա նահատակությունը: Իսկ երանելի Իզիտբողիտը կանգնած էր չորս դատավորների առջև, և պատրաստել էին մահպարտի երկու ձող և բացել նրա առաջ: Մոգպետը դիմեց սրբին. «Տեսնո՞ւմ ես այս ձողերը, որոնց վրա մեռնելու ես, խնայիր անձդ և քո նույն համառություն մի մնա»: Սուրբը պատասխանեց ու ասաց. «Քրիստոսի հանդեպ ես առավել եմ հաստատուն [դարձել], իսկ դու կատարիր իմ հանդեպ ինչ կամենում ես»:

Եվ հրամայեց նրան տանել դեպի ձող, իսկ սուրբը սրտանց ուրախացած տեսքով էր գնում: Ու երբ տարան փայտածողի մոտ, հանեցին հազի զգեստը: Եվ սուրբն ասաց. «Արդարև այսպես տնօրինեց, քանզի իմ Տերն ու Աստվածորդին իր կամոք մերկա-

<sup>4</sup> Հմմտ. Սաղմ., ԹԼ 26:

<sup>5</sup> Հմմտ. Սաղմոս Դ, 2:

ցած մեխվեց խաչին, որպեսզի նախարարած մարդու մերկությունը ծածկի, և այսօր ինձ զորացրեց որպեսզի ոչնչացնեմ սատանայի խարզավանքները»: Եվ երբ հանեցին ի փայտ, սկսեց այս սաղմունն [ասել]. «Արի, Տէր, օգնեա՛ մեզ և փրկեա՛ զմեզ վասն անուան քոյ»<sup>6</sup>, քանզի մենք համարվեցինք զենման ոչխարներ:

Եվ երբ նրան ձող էին բարձրացնում, մոզպետը դիմեց ու ասաց. «Զղջացի՛ր և ապրի՛ր»: Իսկ նա մերժեց նրա խոսքն ու պատասխան չտվեց, այլ ձողին էր մեխված ու բազում դիտորդների տեսարան դարձած: Եվ նետով խոցեցին նրա կողը:

է. Նրա մահվանը ներկա երկու ոմանց [ևս] խաչ հանեցին, մեկը խուժիկների խմբից էր, որին բերին խաչելու, իսկ նա համբուրում էր Քրիստոսի այդ վկային, վերցնում էր վերևից կաթած արյունով խառնված հողն ու լցնում էր իր ծոցը, իսկ նրան տանողները խփում էին գլխին ու ծեծում նետով և խաչեցին վկայի աջ կողմում ու այսպես ավանդեց իր հոգին Քրիստոսին: Իսկ մյուսը հրեա էր, և երբ նրան տարան ձողին կապելու, ձայն էր տալիս դատավորին և ասում. «Մի սպանեք ինձ, և ես կխոստովանեմ մոզություն»: Սակայն դատավորները հաշվի չառան նրա խոսքերն ու կախեցին փայտից՝ սրբի ձախ կողմում:

Եվ խաչված էր երանելին երկու կախյալների միջև որպես ողջակիզյալ՝ արևի և ամենայն ժողովրդոց առաջ, ինչը գարմանալի խորհուրդ ուներ, որովհետև հիշատակում էր խաչի տերունական շնորհը՝ ըստ խոստման Աստծո ճշմարիտ Որդու, թե «Որ հաւատայն յիս, զգործս զոր ես գործեմ, և նա գործեսցէ, և մեծամեծս ևս քան նոյնս»: Եվ առաքյալն ասում է. «Զորս առաջն ճանաչէր, յառաջագոյն հրաւիրեաց կերպարանակից լինել պատկերի որդւոյն իւրոյ»<sup>7</sup>:

Այսպես քաջությամբ համբերեց սուրբ Իգիտըզդիտը Պարսից Խոսրով թագավորի քսաներորդ տարում, հուլիս ամսի երո՛ւսին, կիրակի օրը, երրորդ ժամին: Եվ հրամայեց սրբի մարմինը [խաչված] պահել: Իսկ հավատացյալները Աստծով հաջողությամբ վերցրին այն և պատվավոր զգեստով պատեցին և մեծ տոն կատարեցին ու փառաբանեցին Աստծուն, որին է փառք հավիտյանս հավիտենից: Ամեն:

Փետրվար ամսի 23-ի՞

**11. ՎՎԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ՍՈՒՐԲ ԴԱՎԹԻ, ՈՐԸ ԱՌՔՐԻՍՏՈՍ ԾԾՄԱՐԻՏ ՀԱՎԱՏՈՎ ՎԱԽԾԱՆՎԵՑ ԳՎԻՆՈՒՄ**

Տեր, ողորմյա՛

Ա. Արդ ուրեմն սկսե՛ք ու համառոտ բանիվ պատմենք ձեզ գովելի նահատակի ու երջանկի, ամենայն ներբողելի Դավթի վկայությունը: Նաև հայտնենք, թե որտեղացի էր կամ որ տոհմից և ինչպե՞ս եկավ հասավ Հայոց աշխար և ինչպե՞ս ավարտեց իր կյանքը և այնուհետև կատարելության գլուխ հասավ պատվական խաչի հաղթությամբ:

Այս մարդը սարակինոսների տոհմից էր՝ Սորհան անունով և անվանի այր էր: Սա մեծատոհմիկ էր, ունեին շատ կալվածքներ: Իսկ Դավթի Կյուրոպաղատի որդի մեծն Համազասպի ժամանակներում Քրիստոսի այդ երանելի նահատակը Տաճկաց այլ զորաց հետ եկավ հասավ Հայոց երկիր, Արարատյան աշխարհ, Կոստայից (Կոտայից) կողմերը: Եվ երկրներ ու գյուղեր շրջելիս տեսնում էր քրիստոնյաների կարգը և առաքինի աստվածապաշտությունը և Սուրբ Հոգու ազդմամբ գիշեր-ցերեկ իր մտքում խորհում էր, ընկալում Հիսուս Քրիստոսի ճշմարիտ հավատը: Այդ պատճառով հեռացավ իր ողջ սովորությունից, որպեսզի Քրիստոս չահի և նրանով ազատվի ապականությունից և ծառայությունից ու վերստին ծնվի՝ նորոգ հանուն Երրորդության մկրտությունում և որպեսզի հեղձուցանի անբեւուկ լի փարավոնին ջրի մեջ՝ մկրտությունում: Այս տեղի էր ունենում Հայոց կաթողիկոս Անաստասի օրերում և Հայոց անվանի պատրիկիոս Գրիգոր Մամիկոնյանի իշխանությունից ժամանակ:

Եվ հույժ ցանկալի այր էր Սուրհանը և շատերից առավել մեծարյալ, պատրիկիոս Գրիգորը նրան բերեց Անաստաս կաթողիկոսի մոտ որպեսզի մկրտի: Իսկ նա սրտառուչ մեծ ուրախությամբ ընդունեց և մկրտեց հանուն Հոր, Որդու և Սուրբ Հոգու: Եվ մկրտությունում Գրիգոր պատրիկիոսը նրան վերանվանեց Դավթի՝ իր հայրենի անունը քահանայապետի ձեռքով նրան տվեց: Եվ

<sup>6</sup> Հովհ., ԺԳ, 12:  
<sup>7</sup> Առ. Հոովմ., Ը, 29:

անմիջապես, սուրբ ավագանով մաքրված նա դարձավ սուրբ Երրորդության օթևան՝ ինչպես խոստացավ Քրիստոսն իր սիրեցյալներին, թե «ես և իմ հայրն եկեսցուք և օթևանս առ նմա արասցուք»<sup>1</sup>: Եվ Առաքյալն ասում է. «Զիք [խտիր] հրեութեան և հէթանոսութեան, ծառայութեան և ազնուութեան, որքդ ի Քրիստոս մկրտութիւն առաք՝ զՔրիստոս զգեցեալ էք»<sup>2</sup>: Եվ ուստի բոլորովին կոչվեն ազատ անվամբ և այլևս ոչ Սինայի լեռնցի հազարացիներ, այլ վերին Երուսաղեմի բնակիչ, որը մեր բոլորի մայրն է, ոչ այլևս Իսմայելի որդի, այլ Իսահակի, որը ազատածին է և անմիջապես ծառան կփոխարկվի ազատի:

Այսպիսով, հաստատվեց Հայոց երկրում Չոգով (Չագ) կոչվող գյուղում: Կարճ ժամանակ անց կին առավ ու սրբությամբ որդիներ ունեցավ և ապրում էր պարկեշտ կյանքով: Բարվոք ապրեց որոշ ժամանակ ու հասավ ծերության և գիշեր-ցերեկ խորհում էր առ Տիրոջ հավատը:

Բ. Հասավ Հայոց կաթողիկոս Սահակի ու Սմբատ Բագրատունի Հայոց իշխանի ժամանակներին, երբ Հայոց երկրին տիրում էին սարակիստները, և Տաճկաց զորքերն էին կանգնած Հայաստանում, որոնց առաջնորդի անունն էր Աբդիլա՝ դառն ու խենեշ [մի մարդ], որը սատանայի օժանդակությամբ մշտապես անմեղների արյունը թափելով էր ուրախանում: Այդ ընթացքում երանելի Դավիթն ընկավ անհավատ Աբդիլայի ձեռքը, որովհետև պատշաճ չէր թաքցնել ճշմարտությունը, այլև հայտնի առնել: Ուստի թշնամին խանդեց նրա քրիստոնեական հավատքին, և այդ անհավատը ատամներն էր կրճտացնում նրա վրա և նրան իր որդայթը գցելու պատճառներ էր մտմտում: Ուստի երբեմն ողորձանք, երբեմն չարչարանքների հնարանքով և սպանման սպառնալիքով էր պայքարում նրա դեմ, որպեսզի բաժանի նրան Քրիստոսից և վերադարձնի նախորդ մոլորության, որոնք ասում են՝ «Գրտեմք զաստված» և անգիտանում են ճշմարիտ Աստծուն: Մինչդեռ այդ երանելին հաստատուն էր Երրորդության հավատքի հանդեպ և առանց վախենալու պատասխան էր տալիս ու չէր հնազանդվում սուտ առաքյալին և սուտ մարգարե Մահմեդի զրախոսությանը, որ նմանվում էր Թեղաս և Յուդաս Գալիլեացիներին:

<sup>1</sup> Հովհ., ԺԳ, 23

<sup>2</sup> Հմմտ. Առ Գաղատ., Գ, 27-28:

Բռնավորը զարմացած էր այդ առ Քրիստոս հուսացողի հանդեգնությամբ և հրամայեց կապանքի առնել նրան ու երեք օր բանտարկել, տանջել նրան այլևայլ չարչարանքներով՝ ձեռնելով ու քարշ տալով, փետել նրա մորուսն ու մագերը: Իսկ նա քաջաբար համբերում էր՝ անանց կենաց բաղձանքով:

Երրորդ օրը լուսաբացի մոտ հրամայեց բերել երանելուն նրա առաջ, և այսպես էր ասում. «Գլուխ դիր իմ հրամանին և հրաժարվիր Քրիստոսից»: Իսկ նա կատարյալ հավատով, իր տարիքի արժանավորությամբ, երջանիկ Եղիազարի նման, արհամարհում էր և մերժում նրա քարոզն ու հորդորը, կշտամբանքով սարակիստոսների լեզվով հանդիմանում էր նրան՝ նրանց անաստվածությանը:

Իսկ այդ անհավատն ու սատանայի համաբնակը հրամայեց խաչ բերել և դնել գետնին ու բռնի ստիպում էր կոխոտել պատվական խաչը, որը առհավատչյան է մեր փրկությունը: Իսկ նա գլուխ չէր դնում և բռնակալին ասում էր. «Քո կործանիչ խոսքերից ես ոչինչ չեմ հասկանում, ինչ էլ որ կամենում ես՝ անմիջապես արա»: Սակայն նա բարկացավ և վերցրեց սուրբ որպեսզի տեղում իսկ խցի մեջ սպանի երանելուն: Մինչդեռ սպասավորը աղաղակեց և խլեց սուրբ նրա ձեռքից ու ասում էր. «Ինչո՞ւ ես նրան սպանում ննջախցի մեջ: Եթե սպանության է արժանի՝ դուրս հանիր և անդ սպանիր»: Եվ այս Աստծուց էր, որպեսզի բոլորի առաջ Հայտնի լինի նրա վկայությունը:

Գ. Իսկ նա աներկյուղ էր՝ ըստ Ավետարանի ասույթի, թե «Մի երկնչիք յայնցանէ, որ սպանանեն զմարմին, և զոգի ոչ կարեն սպանանել»<sup>3</sup>: Եվ երանելուն տարան՝ ուր սպանելու էին: Իսկ նա աղոթում էր և զոհություն հայտնում Քրիստոսին՝ անպատմելի շնորհների համար, որ պարգևեց նրան և որ արժանի եղավ մահվան՝ հանուն նրա անվան: Իսկ երբ կանգնեցրին ձողը, նա իր կամքով դիմեց դեպի այն և պարզեց իր ձեռքերը խաչի վրա: Եվ կանգնեցրին ձողը դեպի հարավ: Զինվորը վերցրեց գեղարդն ու նախատում էր նրան՝ հնազանդեցնելու համար: Իսկ սուրբ Դավիթը աջ կողմի ավագակի նման բարբառում էր և ասում առ Քրիստոս. «Յիշեա զիս, Տէր, յորժամ գայցես արքայութեամբ քով»<sup>4</sup>:

<sup>3</sup> Մատթ., Ժ, 28:

<sup>4</sup> Ղուկ., ԻԳ, 42:

Բազում ժողովուրդ էր կանգնած [խաչա]փայտի շուրջ. ոմանք Ավետարանի խոսքերով զորացնում էին նրան և մխիթարում, ոմանք՝ զրպարտում: Իսկ նրա կինը կանգնած էր խաչի առաջ և քաջալերում էր նրան մխիթարական բազում խոսքերով, որպեսզի հաստատ մնա Քրիստոսի հավատի հանդեպ: Իսկ երանելի Դավիթը անխառն հավատքով ցանկանում էր ելնել մարմնականից և Քրիստոսի հետ լինել: Զինվորականը անմիջապես գեղարդով խփեց նրա սրտին, և արյունը բղխեց: Թողեց հոգին և գրածի պես ավանդեց Քրիստոսի ձեռքը. «Իսկ հոգիք արգարոց ի ձեռս Աստծոյ»<sup>5</sup>: Դեպի հարավ կանգնած [խաչա]փայտը շրջվեց Արևելք:

Այս հրաշքը կատարվեց հանուն հավատացելոց՝ անհավատներին առաջ, որպեսզի հայտնի դառնա Քրիստոսի զորությունը, և ամոթով մնա սատանան:

Այսպես վկայեցավ սուրբ նահատակը և սրբոց հետ պսակ առավ:

Դ. Եվ այնժամ եկան հասան Ամատունյաց Սարգսակ եպիսկոպոսը՝ քահանայից բազմությամբ, Հայոց սպարապետ Մուշեղ Մամիկոնյանը և նրա եղբայր Արտավազը՝ բազում ազատաց հետ: Իջեցրին նրան [խաչա]փայտից և տարան սուրբ Գրիգոր [եկեղեցի]: Պատվական հանդերձ բերին և երանելուն պատեցին [նաև] յուր զգեստով, նրանում՝ անուշաբույր խունկ ու մեռոն, և սաղմոսով ու օրհնությամբ և վառած մոմերով տարան ի գերեզման և դրին նրան Եգիտբոզիտի վկայարան: Իսկ ձողը, որի վրա երանելին ավանդեց [հոգին], զարդարեցին իբրև խաչ և կանգնեցրին նրա տապանի վրա: Իսկ այն գեղարդը, որով խոցեցին քսան անգամ, տարավ Մամիկոնյանի որդի Մուշեղ սպարապետը և այն խաչի ձևով կազմեց, որպեսզի պատվեն տոհմից տոհմ՝ ի հիշատակ վկայի և ի փառավորումն Աստուծո:

Քրիստոսի վկա Դավիթը վախճանվեց փետրվար ամսի քսաներեքին, երկուշաբթի օրը, վեցերորդ ժամին՝ առ մեր տեր Հիսուս Քրիստոսը ճշմարիտ խոստովանությամբ: Իսկ նրա բարեխոսությամբ հավատացյալների համար ոչ քիչ բժշկություններ էին լինում՝ ի փառավորումն Հոր և Որդու և Սուրբ Հոգու այժմ և միշտ հավիտյանս հավիտենից: Ամեն:

Մայիս ամսի 17-ից

### 12. ԸՆԹԵՐՑՈՒՄՆ ԵՐԿՈՒ ՍՈՒՐԲ ՏՂԱ՝ ԵՂԲԱՅՐՆԵՐ ԳԱՎԹԻ ԵՎ ՏԻՐԻՃԱՆԻ

Քրիստոս, փառավորի Արսենիս, ամեն:

Ա. Այն ժամանակներում, երբ աշխարհակալ թագավորներ էին՝ Հռոմաստանում Հերակլ արքան, Հայաստանում՝ Արշակ թագավորը և Պարսկաստանում՝ Վառձապուհը, եղավ այս սրբերի մարմինների նվիրում՝ ի զոհ Տիրոջ:

Երանելի Մեծն Ներսես կաթողիկոսի և Ադամ Արագածոտնեցու ժամանակներում Հայոց աշխարհի կողմերում՝ Բասեանի դավառի Օնկոմ կոչվող ավանում, ոմն ավագանի և իշխան մարդ կար՝ Վարդան անունով, իսկ նրա կնոջ անունը Թագինե էր: Նրանք երկուսն էլ թագավորական տոհմից էին և սուրբ Երրորդության ճշմարիտ ու ուղիղ հավատ ունեին: Ապրում էին նրանք աստվածպաշտությամբ, ամենայն արժանավորությամբ և աստվածվախությամբ: Եվ տերը նրանց երկու զավակ տվեց՝ որպես ծաղիկներ գեղեցիկ, եղեմական դրախտի տունկ: Ուրախացան ծնողները, որովհետև Աստված լսելի արեց նրանց աղոթքները ու երկու տղա տվեց, առաջնեկին կոչեցին Դավիթ՝ հանուն մեծն թագակիր և մարգարե Դավթի<sup>1</sup>: Իսկ այս երկրորդին նույնպես անվանակոչեցին մարգարեությամբ, քանի որ նա ևս երկնային Տիրոջ կողմից վկայության պսակի արժանի եղավ. թեև այս եղկելի անցավոր [աշխարհ]ը պակասավոր եղավ, սակայն այն հավերժականով լրացվեց: Իսկ նրա հաջորդին՝ եղբորը, հայեցի լեզվով Տիրիճան կոչեցին: Մեծացան սրանք ուղիղ հավատով:

Բ. Նրանց մորեղբայրը Թևդոսն էր, որ հեթանոս էր ու հեթանոսների անօրեն հավատ ուներ: Եվ տակավին Դավթի ու Տիրիճանի մանկության շրջանում մահացավ իշխան Վարդան զորպետը, իսկ Թևդոս անաստվածը բռնի լսեց Վարդանի իշխանությունն իր քրոջորդուց, ինչպես նաև գրավեց նրանց ժառանգութ-

<sup>5</sup> Իմաստ., Գ, 1:

<sup>1</sup> Բառացի՝ հանուն մեծն քաղակիր Դավթի և մարգարե Դավթի:

յուևը: Եվ երբ այդ չար գազանը տեսավ այս սուրբ տղաների վա-  
յելչուլթյունը, մտածում էր, թե «Մի գուցե կատարելահասակ  
[դառնալուց] հետո նրանք հզորանան և իր հանդեպ չարությունն  
անելու ելնեն»: Չկարողացավ դիմանալ, այլ առավել նենգութ-  
յամբ հնարք խորհեց. չգոհանալով նրանց ժառանգությունն  
ստանալով, ուզում էր բոլորովին ջնջել նրանց:

Իսկ արժանավորն Աստծո երանելի Թագինեն լսում էր իր  
հանդեպ դյուլթած այս ողջ չարությունը: [Եղբայրն] ասում էր.  
«Թողեք այդ խաչեցյալի դենը և դու ու քո որդիք ընդունեք իմ  
հավատը, և թող այդ տղաներն իմ որդիներ դառնան, ու ես մե-  
ծացնեմ նրանց մեծ խնդությամբ և ուրախությամբ»:

Իսկ երանելի կինը ամենևին չընդունեց այդ հոգիներ խաթա-  
րող գազանի անմիտ թովչությունը, այլ ասաց նրան. «Որդիներիս  
այս ժառանգությունն ու նրանց հոր ողջ ստացվածքը բավ է քեզ,  
իսկ երկնային հոր կողմից ու Աստծուց տրված այն անզողանալի  
զանձն ու անկարելի ժառանգությունը՝ անկարող ես»:

Գ. Երբ կնոջը Քրիստոսի հավատի հանդեպ այսպես հաստա-  
տուն տեսավ, այլևս չչարունակեց վերստին խոսել նրա հետ, այլ  
առանց իրենց մոր կանչեց երանելի այդ տղաներին և որպես թե՝  
քաղցր խոսքով ուզում էր նրանց դառնության փոխել: Իր անմ-  
տուլթյամբ նույնիսկ խորհում էր, թե «Կփորձեմ սրտանց այս կեր-  
պով, թե ընդունեն իմ հավատը՝ իմ հանդեպ իրենց սրտում ոխ  
չեն պահի»:

Բերեց նրանց, ժողովեց ու համբուրում էր՝ իբրև թե սիրով,  
այնինչ նախ նրանց հոգու մահն էր տենչում: Իսկ երբ սրանով  
չկարողացավ հաղթել, որոշեց ոչնչացնել նրանց և այսպես էր ա-  
սում. «Դուք, որդյակներ, այժմ իմ զավակներն եք ու ես այսօր՝  
որպես ձեր հայրը, և այժմ իմն էլ ձերն է: Այս միայն կատարեք  
իմ հանդեպ և ինչ ձեզ ասեմ՝ լսեցեք ինձ, որպես սիրելի հնազանդ  
որդիք: Այդ հավատը, որ ձեր հայրն ուներ, թողեք, և ես ավելի  
լավ հավատ կտամ ձեզ»: Իսկ սուրբ տղաները լուռթյունից հետո  
պատասխանեցին իրենց մորեղբորը և ասացին. «Մեզ համար բա-  
վական է այն հավատը, որ մեր հայրն էր դավանում և կպահենք  
այն՝ քանի դեռ այս հոգին կլինի մեր մարմինների մեջ: Իսկ հա-  
նուն Աստծո սիրո և համբերության՝ այլ կերպ, առանց հավատը  
թողնելու, պատրաստ ենք՝ իբրև մեր հորը»: Եվ երբ խուզարկու

[հայացքով] նայեց այդ անգուլթ ու քարսիրտ<sup>2</sup> Թևդոսը, քրիս-  
տոնյա ժողովրդի [առկայության] պատճառով չհանդգնեց սպա-  
նել նրանց, այլ որոշ ժամանակ թողեց, և մտադիր էր ոչնչացնել  
նրանց:

Դ. Այս բանն զգաց Թագինեն՝ նրանց մայրը, և մտածում էր,  
թե ո՞ր կողմ փախչի: Վերցրեց որոշ բան ամուսնու ինչքից և իր  
զավակներին ու փախավ եկավ հյուսիսային կողմ՝ դեպի Տայոց  
աշխարհ (Տավո երկիր): Եկավ մի ավան, որ կոչվում էր Վաթգան:  
Այնտեղ այդ սրբերին ազգական մի իշխան կար՝ Վազգեն<sup>3</sup> անու-  
նով: Եվ ապավինեցին այդ իշխանին ու, տեղի ամբուլթյան պատ-  
ճառով հուսադրվեցին իրենց մորեղբոր հալածանքից: Այնտեղ  
բնակվեցին ու ապրում էին աստվածալաշտությամբ, իսկ իրենց  
ժառանգության ու օտարության [մեջ գտնվելու մասին] չէին էլ  
հանդգնում [մտածել], այլ այդ սակավով ու փոքր ինչքով էին  
գոհանում, քանի որ նրանց խնդությունն ու հարստությունը  
Քրիստոսի հավատն էր: Իրենց մայրը մի քանի ոչխար ուներ, ո-  
րոնց հետ գնում էին այս երանելի եղբայրները՝ զվարճանալու  
կամ հովվություն անելու: Ու Աստծո այդ անարատ գառներն ու  
ճշմարիտ գոհերը ոչխարների գառների հետ էին խաղում, իսկ  
նրանց անարատությունը միմյանց էր փոխանցվում և արդարև  
վերևն Աստծո մատուցման պատրաստվում:

Իսկ նրանց մորեղբայր Թևդոսը զինվում էր երփներանգ խար-  
դավանքով և գազանի պես չէր կարողանում թաքցնել իր գայ-  
րույթի սաստկությունը: Նրա չար սրտում քենն էր՝ տղաներին իր  
ձեռքերից բաց թողնելու և նրանց փախուստի համար: Ուղարկեց  
իր սպասավորներին ու լրտեսեց տղաների կյանքը: Հայտնվեց  
նրանց անմեղ արյանը հետամուտ այդ գազանին, թե «Կա մի  
սար՝ բարձր գազալթով, այնտեղ են բարձրանում տղաները՝ ոչ-  
խարների հետ»: Ու երբ այս՝ այսպես իրազեկ արին, բազում զորք  
հավաքեց և զգուշությամբ ծպտյալ եկավ ու դարանակալեց լե-  
ռան վրա, որ անջրդի էր: Եվ խիտ անտատ էր՝ անջրդի ու մացա-  
ռուտ:

Ե. Մայրը կանչեց երեխաներին և ուղարկեց Վաթգանից  
ձորք (Խենի Վաթգանիսանի), ինչպես Հակոբը Հովսեփին՝ Քեբրո-

<sup>2</sup> Բառացի՝ պղնձե աղի [ունեցող], իմա՝ աղեպինդ:

<sup>3</sup> Չեռագրում՝ Վահգեն:

նի հովիտներ, և ասաց նրանց «Գնացեք, իմ որդիներ, և նայեցեք մեր սակավ[աթիվ] ոչխարներին»: Գնացին ուրախությամբ և սարբարձրացան. իրար զվարճացնելու համար թռչկոտում էին և այսպես ելան-հասան այդ լեռան կատարը: Իսկ բռնացողները դարանակալել էին առյուծների պես: Եվ երբ արդեն մեջտեղ եկան, ծաղայաները ձայն տվեցին, և տղաները շրջվեցին: Վեր թռավ նրանց մորեղբայր Թևդոսն ու սուրաց նրանց վրա՝ կոտորելու: Իսկ անմեղ երեխաները հաց էին ուտում՝ կաթի հետ, քանի որ իրենց ոչխարները փարախ էին արել: Սարսեցին երեխաները, ահաբեկվեցին և սկսեցին այս ու այն կողմ նայել՝ չհասկանալով պատճառը: Եվ [երբ] երանելի Դավիթը ճանաչեց իր մորեղբորը, սրտապնդվեց ու ուրախ դեմքով, մաքուր սրտով ընդառաջ վազեց և ընկավ իր մորեղբոր ձեռքերին: Իսկ նա ձգեց ձեռներն ու նրան առավ բազուկներին և համբուրելու փոխարեն՝ սուրը քաշեց, տվեց ու սպանեց նրան: Ու վկայություն կատարվեց, և նա անմիջապես գտավ երկնի ճանապարհն ու նահատակության պսակ առավ: Մինչ նրա ձեռքերից թռած ընկուզենի ճիպոտը ընկավ գետին ու լեռան վրա մեծ ծառ դարձավ: Մնաց այդ ծառը մոտ երկու հարյուր տարի, և ուխտավորները իբրև բարի հիշատակ տարան:

2. Տիրիճանը երբ տեսավ իր եղբոր անողորմ մահը, վախեցավ ու շտապեց փախչել, դիմեց դեպի հովիտ՝ Դիվրի կոչվող գյուղ տանող զառիվայր, որին մարդիկ դիվությունամբ են հորջորջում: Ու երբ [Դիվրի] իշխանը զգաց այդ իրարանցումը և տեսավ զինավառ առաջացող ու սրերը պարզած մարդկանց, սկսեց բարբառել ու շտապ զորք հավաքել, որովհետև կարծեց, թե իրեն սպանելու են գնում: Իսկույն նրանց դեմ կռվելու պատրաստվեց: Իսկ հետապնդողները հասան սուրբ Տիրիճանին և սպանեցին նրան: Թողեցին նրան ու իրենք ետ դարձան: Նրանց շտապ դարձը զարմացրեց իշխանին. առաջ շարժվեցին տեղացի մարդիկ և տեսան տղային՝ դետնին ընկած, ծանր վերքերով վիրավոր և հոգին թև առած՝ իր արարչի մոտ գնալու: Նրանք ամոսոսացին մանկահասակին և չգիտեին նրա մահվան պատճառը: Այն ժամանակ եկավ հասավ նաև Դիվրի իշխանն ու տեսավ անմեղ թափված արյունը, զարմացավ ու խիստ սարսափեց: Անմիջապես հասան և տեղացի կանայք, ու տղայի վրա մեծ լացուկոծ եղավ:

Երբ Տիրիճանին սպանողները առաջացան ու բարձրացան լեռը, իրենց զորավար Թևդոսին գտան տխուր և ամենևին անկարող տեսնելու: Սրանք ևս սարսափեցին ու շվարած մնացին: Զորականների բազմությունը ևս շփոթմունքի մատնվեց և սկսեց տրտմել ու շշմել տեսած սարսափելիքից, պապանձվեցին ու չկարողացան խոսել, ոչ էլ փախչել, քանի որ առնվեց նրանց առաջնորդը և պատժվեց կուրուկությամբ, ինչպես երանելին այն Պողոս, երբ դուրս եկավ նա աստվածային պատգամից:

Է. Եվ անմիջապես ողորմածություն երասանակ դրվեց նրա բերանը, որպեսզի գոնե ետ դառնա նրա վայրենացած բանակապետությունը և գեթ կարող լինի իր անձն զգալու՝ [թե] այդ ինչ է արել, որովհետև կարծում էր, թե «Անպատշաճ բան չարի, որ կոտորեցի իմ քրոջ որդիներին»: Ուստի այս կերպով էլ նմանվեց Պողոսին. նա ևս սպանեց իր քրոջ որդի Ստեփանոս Նախավկային:

Եվ Դիվրի իշխանն անմիջապես ձին թամբեց ու իր զորքերի հետ բարձրացավ այդ հույժ բարձր լեռը, որպեսզի գոնե տեսնի [այնտեղ] ժողովածներին ու հասկանա իրարանցման պատճառը: Ու երբ զորքը սարսափահար տեսավ, իսկ նրանց զորպետը տրտում [հասկացավ կատարվածը]: Եվ ահա այն է՝ [Վաթգան] հասավ երանելի Թագիների որդիների հանդեպ կատարված արհավիրքի բոթը: Վեր կացավ կինն այդ Թագիներ և փութաց սարն ի վեր: Եկավ-հասավ երեսը ձեռնելով, և իր որդիները [կորստյան] ցավից՝ զառիվերի այդպիսի դժվարությունն [իսկ] չհոգնեցրեց նրան. լացով ու դառնացած հոգով ձայն էր տալիս: Պատառոտեց հագի հանդերձն ու ասաց իր եղբայր Թևդոսին. «Ինչո՞ւ հանեցիր իմ աչքերի լույսը, ինձ բավ չէ՞ր այրիությունս ողբալ, քեզ բավ չէ՞ր իմ որդիների ժառանգությունն ու իմ՝ այս աշխարհի սանդաքամետում լինելս: Բավ չէ՞ր քեզ ամուսնուս ժառանգությունը, և անապատ եկար ու ոչխարների հետևից գառներին կոտորեցիր, տապալեցիր այս երկու անմեղ հովիվներին, և անապատի երեսին նրանց հոտը անհովիվ մնաց: Թևդո՞ս, ո՞վ անգութ զազան, քեզ ի՞նչ վատություն էին արել իմ այս որդիները, ինչո՞ւ խավարեցիր արևս՝ օրվա առաջին իսկ ժամին, մինչև ո՞ւր չզաղարեցիր ինձ հալածելուց: Քեզ բավ չէ՞ր այս մեկը որսալ, ո՞վ չար գազան, գոնե մեկը ինձ թողնեիր, գեթ այրիությունս խղճայիր: Հիմա էլ ինչպե՞ս, ո՞վ է լինելու իմ ապավենը կամ իմ հույսը: Սպանիր և ինձ, ո՞վ անաստված, և հագեցիր արյամբ, ո՞վ ինձը արյունառուշտ:

Թող այլևս չգնամ այստեղի սարից, այլ, ինչպես որդիներին կենդանության ժամանակ էի ուրախանում՝ նրանց տեսնելով, այժմ էլ թող մահս նրանց մահվան հետ լինի: Թող մեռնի հոգին՝ արդարների հոգու հետ, և մեր մարմինները թող մեկ գերեզմանում լինեն, ինչպես իմ այրիության տարիներին մեր մահիճն էր մեկը: Թեև դու, այլևս չհիշեցի՞ր գոնե քո և իմ ծնողի արգանդը և ստինքները, որոնցով սնվեցինք դու և ես: Ո՛վ լիովին զգրելիդ, ինչո՞ւ համար այսքան զորքով դուրս եկար անզոր կնոջ ու նրա մանուկ տղաների [ղեմ] կովելու: Ինչո՞ւ մարեցիր մոմերս, ո՛վ անհավատ»:

Ը. Այս ու այսպիսի և այլ՝ սրանց նման խոսքեր էր ասում երանելի Թագինեն: Իսկ ողջ բազմությունը լռել ու ողբում էր և ինչպես վտակներ՝ արցունքներ թափում: Թեև դուսն անգամ նրանց հետ լաց էր լինում:

Իսկ երանելի Թագինեն երբ տեսավ իր սիրելի Դավիթ որդուն սպանված ընկած, աչքերը այս ու այն կողմ ընկան՝ որոնում էր իր Տիրիճան որդուն, որ թեկուզ մահացած՝ նրան էլ տեսնի: Իսկ նա այնտեղ չէր: Եվ վշտից ու նեղությունից կտրտվում էր նրա սիրտը:

Իսկ Թեև դուր էր կարողանում հասկանալ այդ կուրուքությունը: Այն ժամանակ սկսեց խոսել Թեև դուսն ու ասաց իր քույր Թագինենին. «Ո՛վ քույրդ իմ Թագինեն, ինձ մոտ արի և տես, որ այսպես՝ լեռան կատարին խավարը պատել է ինձ, ինչպես խոր ձորերում կամ անձավում, անդունդներում: Ինձ վրա է գալիս խավար մեզը, իսկ քեզ՝ անհաս լույս պայծառափայլեց՝ այն անանցողիկ լույսից ու ճշմարիտ այն հավիտենական լույսից: Իսկ այժմ իմ՝ անգութիս ու անարժանիս հանդեպ ողորմածություն... Եվ մի՛ հատուցիր արարքներին համեմատ, այլ աղերսիր սուրբ նահատակներին, որ ողորման ինձ, որպեսզի անարժանս այս արժանի դառնամ ողորմած Աստված Քրիստոսի կնիքին, որ հանուն մեղավորների եկավ: Հավատում եմ ևս ճշմարիտ Աստծուն»:

Թ. Ու երբ [Թագինեն] ուշքի եկավ և տեսավ, թե Աստծուն զոհ մատուցվեցին այդ գեղեցիկ մատաղները՝ իր որդիները, տեղնուտեղը ուրախությամբ լցվեց ու անմիջապես թոթափվեց իր որդիների ցավի վշտից: Եվ նույն ժամին ողբին ուրախություն փոխարինեց, համբուրեց իր եղբորն ու ասաց նրան. «Թող Աստված թողություն տա քեզ, և ողորմած տերը իմ որդիներին ու քո քե-

ու որդիներին մահը քեզ վրա չհաշվի, ինչպես երբեմնի՝ Պողոսին՝ իր քրոջորդի Ստեփանոս Նախասարկավազի և Նախավկայի»:

Աղերսում էր Աստծուն, [աչքերը] երկինք հասնում, օրհնում Տիրոջը և վարանում արցունքից, որպեսզի առ ոչինչ համարի նրա մտքի բորբոքումը, և իր բուրավետությամբ ցիրուցան չլինի նրա խունկը: Կինն այդ Թագինեն ասում էր. «Դու, Տե՛ր, բոլոր կողմերով ողորմած ու բոլորին գթացող, հայրը որբերի ու դատավոր այրիների, որդ այս փոքրիկներին՝ այս խոնարհ տղաներին, չանտեսեցիր և նրանց հաղորդ արիք սուրբ նահատակների վիճակին՝ իմ այս որդիներին, որոնք հանուն քեզ բազում չարհարանք կրեցին ու երկնային անթառամ պսակ և հավիտենական կյանք ստացան, նրանց՝ մանկտի այս վկայությունը արժանի արա նրանց (սուրբ նահատակների) հետ ուրախության և խնդության, նրանց հետ հանգչելու, նրանց հետ՝ պսակի, նրանց հետ՝ չարհարանքների բժշկության, ինչպես նրանք՝ այնպես էլ սրանք: Եվ որ իմացվի, թե հաճո էր քեզ, տո՛ւր և իմ եղբորը բժշկություն, որ տեսնի»: Ու վերցրեց Դավիթ արյամբ շաղված հողն ու ցխեց նրա աչքերին: Եվ նրա աչքերն անմիջապես բացվեցին: Այս երկու սքանչելիքները կատարվեցին սուրբ Դավիթի հանդեպ:

Ժ. Մարդասերն Աստված պատշաճ նկատեց նաև, որ բոլոր մարդկանց հայտ առնի նրանց խիզախությունը և տեղեկացնի, թե աստվածահաճ էր նրանց նահատակության այդ գոհը. այդ գիշեր փայլատակեցին լույսերը՝ ինչպես լուսաստղեր՝ լուսե սյան տեսքով, որոնց կատարը երկինք էր հասնում, ինչը տեսնում էին աշխարհի բոլոր մարդիկ, և ովքեր գիտեին՝ փառաբանում էին Աստծուն, իսկ հեռու գտնվողները տեսնում էին այդ լույսը, զարմանում և միմյանց հարցուփորձում:

Երբ մեր սուրբ Հայր Ներսես Հայոց կաթողիկոսը իմացավ այս եղելությունը, քանի որ ինքն էլ Իշխանից տեսնում էր այս հրաշքն ու անհաս լույսի փայլատակումը, որ[ով] Տերը փառավորեց իր արժանավորներին, Սուրբ հոգու շնորհիվ կուսեց կատարվածն ու փութով հասավ Դիվրի և հետը բերեց Հովհան, Սահակ և Գրիգոր քահանաներին: Իսկ Թեև դուսն ընկավ Ներսես կաթողիկոսի ոտքերն ու խոստովանեց նրան այն բոլոր հանցանքները, որ կատարեց, և Քրիստոսի կնիք առավ, իր ողջ սրտով հավատաց մեր տեր Հիսուս Քրիստոսին և նրա բոլոր վկաներին ու սրբերին: Ապա սուրբ Ներսեսը մոր՝ Թագինեի ու Թեև դուսի ներկայությամբ իր

ձեռքով պատեց այդ սրբերի մարմինները: Նրանցից մեկին հողին հանձնեց լեռան վրա, մյուսին Դիվրի<sup>7</sup> ներքևի կողմում՝ Հեղեղատի ձորից (Խևի Նաղուարեխա) արևմուտք:

Ապա Թեղոսը ունեցվածքը ծախսեց և Դավթի [գերեզմանի] վրա եկեղեցի կառուցեց, պահեց ու կարգեց նրանց հիշատակը, իսկ Դիվրի իշխանը առավ Տիրիճանի սուրբ ոսկորներին նշխարներն ու նա ևս եկեղեցի կառուցեց ի վկայություն այն բանի, որ կատարվեց նրա սահմաններում՝ այգիների մեջ:

Իսկ երանելի Թագինեն գնաց Մամրվանից ձորք՝ Տաճարանի կոչվող գյուղը, և այնտեղ հանգավ: Նրա գերեզմանն էլ բժշկության [տեղի] դարձավ:

Մինչ Դիվրի իշխանը այգեստանների մեջ եկեղեցի կառուցեց՝ ի փառս Հոր և Որդու և Սուրբ Հոգու՝ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից, ամեն:

### 13. ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԹՎՈՎ ԻՆՆ ԱՌԻՐԲ ՄԱՆԿԱՆՑ, ՈՐՈՆՔ ՍՈՒՐԲ ԱՎԱԶԱՆԻ ՄԿՐՏՈՒԹՅԱՄԲ ՀՈԳԵՎՈՐ ԵՂԲԱՅՐՆԵՐ ԷԻՆ, ԻՍԿ ԾՆՎԱԾ՝ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐՆ ԻՐ ՄՈՐԻՑ

Առևր կոչվող մեծ գետի ակունքի մոտ, Կողա կոչվող գավառում մի մեծ գյուղ կար: Այդ գյուղի բնակչության մեծամասնությունը հեթանոսաց կուռքերի պաշտող էր, ժողովրդի փոքր մասը՝ քրիստոնյա, աստվածապաշտ: Եվ ինչպես երեխաների սովորությունն է, հավաքվում էին քրիստոնյաների ու հեթանոսների տղաները խաղալու ու խաղում օրն ի բուն: Իրիկնաժամին երեցը կոչնակում էր, և քրիստոնյաների երեխաները եկեղեցի էին գնում աղոթելու՝ ինչպես քրիստոնյաների ծեսն է, մինչդեռ հեթանոսների թվով ինք երեխաները հետևում էին նրանց, որովհետև ընտելացել էին քրիստոնյաների երեխաներին և սիրում էին քրիստոնեական կրոնը: Ու երբ մոտենում էին եկեղեցու դռներին, քրիստոնյաները եկեղեցի չէին թողնում, այլ այսպես էին ասում նրանց, թե՛ «Դուք կռապաշտների որդիներ եք, և պատշաճ չէ ձեզ մտնել տունն Աստծո»: Եվ նրանք գնում էին սրտաբեկ ու ամոթով: Մանուկները բազմիցս էին այսպես անում:

Այնուհետև հեթանոսների երեխաները զնացին քրիստոնյաների եկեղեցի և ցանկացան նրանց հետ հարկադրելով ներս մտնել: Այն ժամանակ քրիստոնյաներն ասացին. «Եթե ուզում եք մեզ հետ եկեղեցի մտնել, հավատացեք մեր տեր Հիսուս Քրիստոսին և մկրտվեցեք հանուն նրա, խոստովանեք նրա խորհուրդներն և միացեք քրիստոնյաներիս»:

Իսկ նրանք տեղնուտեղը ուրախությամբ ընդունեցին քրիստոնյաների խրատն ու խոստացան այդպես անել: Շտապ զնացին քահանայի մոտ, որն այդ գյուղի երեցն էր, ազնիվ արժանավոր ու հարգարժան մարդ, և հայտնեցին նրան երեխաների արարքը: Իսկ նա հիշեց Ավետարանի այն խոսքը, որ ասաց մեր տեր Հիսուս Քրիստոսը. «Որ ոչ թողու զհայր իւր և զմայր իւր, զքեռս և զեղբայրս, զկին և զորդիս և ոչ առնու զխաչ իւր և գայ զկնի իմ՝ չէ ինձ արժանի»<sup>1</sup>:

<sup>7</sup> Բնագրում՝ Դերի

<sup>1</sup> Հմմտ. Մատթ., Ժ, 37-38:

Այն ժամանակ քահանան զնայ այդ մեծ գետի ակունքը և նրա հետ՝ քրիստոնյաների բազմութիւնը: Հեթանոսների երեխաները ևս նրանց հետ էին: Ձմեռ ժամանակ էր և ցուրտ գիշեր, քանի որ հեթանոսների ահից ցերեկը էէր կարող հանդգնել մկրտել նրանց և [ապա]՝ մեր տեր Հիսուս Քրիստոսը Հորդանան գետում Հովհաննեսի կողմից գիշերը մկրտվեց: Ջուրը բարկ սառնութիւն էր տալիս: Եվ երբ այդ երեխաները գետը մտան, երեցը մկրտեց՝ հանուն Հոր և Որդու և սուրբ Հոգու, այս աղոթքն<sup>2</sup> ասելով. «Սուրբ Հոգի՛ն իբրև աղակալի՛ն իջավ Հորդանանի վրա, երբ Քրիստոսն էր մկրտութիւն առնում, հրեշտակները առընթեր էին [ու] այս շաբաթական էին ասում. Ալելույա, ալելույա»: Ջուրն այն ժամանակ շատ տաք խփեց՝ ինչպես բաղնիք, և Աստուծո Հրամանով հրեշտակները երկնից սպիտակ զգեստներ պարզեցին և մարդկանցից աննկատ հագցրին այդ նոր մկրտյալ մանուկներին: Իսկ այն քրիստոնյա երեխաները նրանց կնքահայր եղան: Եվ մկրտված տղաներն այլևս չզարձան իրենց ծնողների մոտ, այլ մնացին քրիստոնյաների մոտ և նրանց հետ եղան:

Որոշ ժամանակ անց, նրանց ծնողներին զգալ տվեցին այս եղելութիւնը, և մեծ արհամարհանքով ու բարկութեամբ, գայրույթով ու պարսպանքով բռնի փախցրին տղաներին քրիստոնյաների տներից և տարան իրենց տուն: Պատուեցին նրանց գլուխները, սաստիկ ծեծելով կապտացրին նրանց մարմինները: Մինչդեռ նրանք միայն այսքանը պատասխանեցին ու ասին իրենց ծնողներին. «Մենք քրիստոնյաներ ենք և պատշաճ չէ, որ անգամ ուտենք կամ խմենք կոտց մատուցվածից»: Ու տղաները յոթ օր առանց ուտելու և խմելու մնացին, ոչինչ չճաշակեցին, այլ սնուցվեցին Սուրբ Հոգու կողմից, որ հագեցան մկրտութեան ժամանակ: Այն ժամանակ նրանց ծնողները խոստանում էին ամենայն բարիք ու գուլյնզգուլյն խայտաբղետ հագուստ, իսկ նրանք նույն խոսքն էին ասում, թե «Մենք քրիստոնյաներ ենք և ձեզնից ոչինչ չենք ուզում, այլ թողեք մեզ, որ գնանք քրիստոնյաների մոտ»:

Եվ երբ անկարող եղան կոտրել նրանց ամուր հավատը, գնացին այն ժամանակվա իշխանի մոտ, որովհետև նա ևս հեթանոս էր, և հաղորդեցին ողջ եղելութիւնն ու մանուկների արարքը:

<sup>2</sup> Բնագրում «ժամորս»:

Իսկ իշխանն ասաց նրանց. «Ձեր որդիներն են, ձեռնահաս եք, արեք՝ ինչ կկամենաք»: Ապա նրանք ասացին. «Հրամանքդ արի մեզ հետ, քարկոծ կանենք նրանց, որպեսզի ուրիշները չընդօրինակեն նրանց և քրիստոնյա դառնան»: Ոչ պակաս նեղութիւն հասցրին և երեցին. ավար վերցրին նրա ողջ ինչքը և [իրար մեջ] բաժանեցին նրա ունեցվածքը: Ծանր վերք հասցրին նրա գլխին, քիչ մնաց անգամ սպանեին, և վտարեցին նրան իր բնակութիւնից:

Այն ժամանակ այդ սուրբ վկաների չարչարանքի օր նշանակեցին: Դուրս եկավ իշխանը և նրա հետ՝ ժողովրդի անթիվ բազմութիւնը: Եվ եկան աղբերակունք, ուր մկրտութիւն առան այդ սուրբ մանուկները, հույժ խոր գուր փորեցին, իսկ նրանց ծնողները բերին այդ սուրբ մանուկներին ու գցեցին գբի մեջ: Նրանցից ոմանք ինը տարեկան էին և ոմանք՝ յոթ, կամ ավելի կամ պակաս: Ուրիշ ոչինչ չգրտեին, որ գոնե ասեին, միայն այս էին ասում. «Մենք քրիստոնյաներ ենք և հանուն նրա էլ կոտորվում ու մեռնում ենք, հանուն որի մկրտութիւն առանք»:

Այն ժամանակ անաստված ծնողները ջարդեցին նրանց գլուխներն ու ուղեղները թափեցին: Օձերն ու իժերը, սողուններն ու գազանները գուր գրտեին ձագերի հանդեպ, իսկ այս անհավատները չգթացին իրենց երեխաներին: Ու հավաքված բազմութիւնը քար ժողովեց մինչև լցվեց գուրը, և քարով ծածկվեցին նրանց սուրբ մարմինները, իսկ փորված հողը լցրին վրան: Եվ այդ տեղը դարձավ նրանց սուրբ նշխարների գերեզման ու վկայարան: Այնժամ կատարվեց Ավետարանի խոսքը. «Մատնեցէ եղբայր զեղբայր ի մահ, և հայր՝ զորդի. և հառնիցեն հայր ու մայրք ի վերայ որդուց և սպանանիցեն զնոսա»<sup>3</sup>:

Եվ կատարվեց նրանց նահատակութիւնը, ու նրանք անցան նախավկաների թիվը և նրանց հետ պսակ առած հրճվում են երկնային արքայութիւնում՝ մեր տեր Հիսուս Քրիստոսի առաջ, որին վայել է փառք ու պատիվ և երկրպագութիւն՝ ընդ Հոր և Սուրբ Հոգու, այժմ և միշտ և հավիտյան հավիտենից, ամեն:

<sup>3</sup> Հմմտ. Մատթ. Ժ, 21, Մարկ., ԺԳ, 12:

**ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ**

Հայոց «Վարք Սրբոցի» թարգմանությունը..... 5

**ՎԱՐՔ ՍՐԲՈՑ**

- 1. Վկայություն սուրբ թագուհի Սանդուխտի..... 47
- 2. Խոսք սուրբ Ոսկիի և Գրա ընկերաց վկայության մասին ..... 51
- 3. Վկայաբանություն սրբոց վկայից Սուկավետյաց ..... 55
- 4. Վկայաբանություն Հայոց սուրբ քահանայապետեր Արիստակեսի, Վրթանեսի, Հուսիկի, Գրիգորի, Դանիելի ..... 69
- 5. Վկայաբանություն Հայոց եպիսկոպոսպետ Ներսեսի և Գրա աշակերտ Խաղ եպիսկոպոսի..... 73
- 6. Կատարումն Ներսես Մեծի որդի սուրբ Սահակ Պարթևի, որը սուրբ Գրիգորի վեցերորդ սերունդն էր ..... 79
- 7. Վկայաբանություն սուրբ Վարդանի և Գրա եղբայրներ Հմայակի, Վահանի և Հայոց պատրիկ Սահակի և Գրանց հետ հարյուր երեսունյոթ [արանց] և այլոց, որոնք կոտորվեցին անհավատ թագավոր Հազկերտի կողմից մեծ ճակատամարտում, և որոնք այլուր Քրիստոսի հավատի համար մարտնչելով նահատակվեցին: Վկայություն սուրբ Վարդանի և մյուս նախարարների ու հայոց զորականաց: ..... 83
- 8. Վկայաբանություն սուրբ Ծուշանիկի՝ սուրբ Վարդանի դստեր, որը Սահակի դստեր որդին էր: Այս ս. Ծուշանիկը նահատակվեց Քարթլիում իր ամուսնու ձեռքով, որը Քարթլիի անթիպատրոսն ու առաջնորդն էր ..... 87
- 9. Վկայաբանություն սուրբ Վարդանի և Գրա եղբայրներ Հմայակի, Վահանի և Հայոց պատրիկ Սահակի.....91
- 10. Վկայաբանություն սուրբ Յիզտիբուզիտի..... 97

- 11. Վկայաբանություն սուրբ Դավթի, որը առ Քրիստոս ճշմարիտ հավատով վախճանվեց Դվինում..... 103
- 12. Ընթերցումն երկու սուրբ տղա՝ եղբայրներ Դավթի և Տիրիճանի..... 107
- 13. Վկայաբանություն թվով ինը սուրբ մանկանց, որոնք ս. ավագանի մկրտությամբ հոգևոր եղբայրներ էին, իսկ ծնված՝ յուրաքանչյուրն իր մորից ..... 115

ՀԱՅ ԵԿԵՂԵՅՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՍԿՋԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ  
Բ

ՀԱՅՈՑ «ՎԱՐՔ ՍՐԲՈՅ»-ի  
ՎՐԱՅԱԿԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Թարգմանությունը ճիճ վրացերենից  
և ուսումնասիրությունը  
ՊԱՐՈՒՅՐ ՄՈՒՐԱԳՅԱՆԻ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ - 2008

Համակարգչային աշխատանքները՝  
Հրատարակչական բաժնի



ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ